



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ .....	1
<b>ԽՄԲԱԳՐԱԿԱՆ</b> .....	2
ՆՈՐԱՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱԻԲՆԵՐՈՒ ԴԻՄԱՅ .....	2
<b>ՀԱՐՑԱԶՐՈՅՑ</b> .....	5
«ԱՅՍ ՑԱԻԸ ՉԵՄ ՈՒԶՈՒՄ ԴԱՐՁՆԵԼ ԱՌԱՐԿԱՅ ԿԱՄ ՈՐԵԻԷ ԲԱՆ ԱՊԱՅՈՒՑԵԼՈՒ ՄԻԶՈՅ, ԱՅՆ ԻՄ ՆԵՐՍՈՒՄ Է».....	5
<b>ԿԻՊՐԱՀԱՅ</b> .....	7
ՅԻՇԱՏԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ ՄԵԼԳՈՆԵԱՆ ԱՆՄԱՀ ԲԱՐԵՐԱՐՆԵՐՈՒ.....	7
<b>ՅՕԴՈՒԱԾՆԵՐ</b> .....	9
ԽԱԻԱՐԻ ՄԷՋ ԼՈՅՍ.....	9
ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՅԱԹԱՓՄԱՆ.....	9
ԵՒ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԱՇԽԱՐՀԻ ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹԵԱՆ ԴԻՄԱՅ .....	9
ՄԱՀՍԳՐԱԿԱՆ. ՎԱԽՃԱՆՈՒԵՅ ԵԳԻՊՏԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԻ ՆԱՀԱՊԵՏԸ.....	15
ՀԱՅԱՏՍԱՆԸ ԵՒ ԱՐՀԵՏՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ.....	17
ԻՆՉՈ՞Ւ ՀԱՅ ՄՆԱԼ .....	20
ԴՈԿՏ. ԵՂԻԿ ՃԵՐԷՃԵԱՆԻ՝ Ս. ՍԱՊԱՀ-ԳԻԻԼԵԱՆ ԿՈԹՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆԸ .....	24
<b>Համօ Մոսկոֆեան</b> .....	24
27/12/2025.....	24
<b>ՏԵՍԱԿԷՏ</b> .....	27
ԱՐՄԵՆԻԶՄԸ ԽՈՐՀՐԴԱՆՇՈՂ ՈՒ ՆԵՐՇՆՉՈՂ «ՈՍԿԵԱՅ ԿԱՍՈՒՐԶ»,.....	27
ԱԶԳԱՅԻՆ-ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍԱԿԱՆ ՕՃԱԽՆԵՐՈՒ ՈՒ ԴԱՐԲՆՑՆԵՐՈՒ ԾՆՈՒՆԴՈՎ .....	27
ԿԱՅԷ՛Ն, ՈՒ՞Ր Է ԵՂԲԱՅՐԴ .....	30
ՍՓԻՒՈՔԻ ԱՆՓԱՌՈՒՆԱԿ ՎԻՃԱԿԸ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ .....	33
ՏՕՆԸ Կ'ԱՆՑՆԻ,ԿԵՂԾԻՔԸ ԿԸ ՄՆԱՅ. «ՆԵՐԷ՛ ՄԵՋ, ՏԷ՛Ր, ՈՐՈՎՀԵՏԵԻ ՉԵՆՔ ԳԻՏԵՐ, ԹԷ ԻՆՉ Կ'ԸՆԵՆՔ».....	36
Ի՞Մ, ԹԷ՞ ՄԵՐ ՇԱՀԸ .....	40
<b>ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ</b> .....	43
ՓՈՒՆՋ ՍԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷ.....	43
ԹՈՒԱՅՆԱՅՈՒՍԸ ԵՒ ՄԵՆՔ.....	47
ԽՈՀ-ԱՊՐՈՒՄՆԵՐ .....	48
ԱՆԾԱՆՕԹՈՒՅԻՆ.....	50
ԿՂԶԻ՝ ԿՂԶԻՒ ՄԷՋ.....	53
<b>ԱԿՆԹԱՐԹՆԵՐ</b> .....	56

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

### ՆՈՐԱՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱԻԷՐՆԵՐՈՒ ԴԻՄԱՑ



Թեւականեցինք նոր տարի՝ 2026 թուականը: Բայց ազգային-պետական մարտահրավերները կը մնան նոյնը՝ Հայաստանի Հանրապետութեան մէջ թէ Սփիւռքի կամ սփիւռքներու տարածքին վրայ: Ո՞վ ենք մենք եւ ո՞ր կ'երթանք: Հարցում՝ որ ամէն տարեսկիզբին աւելի ընդգծուած կերպով կը պարտադրէ ինքզինք եւ պատասխաններ կը փնտռէ:

Հայաստանի Հանրապետութենէն ներս, յարաբերական խաղաղութիւն կը տիրէ ատենէ մը ի վեր: Խաբուսիկ խաղաղութիւն մը՝ եթէ նկատի ունենանք յատկապէս Ալիեւի եւ անոր եղբայր Էրտողանի պարտադրած միակողմանի զիջումները, ինչ կը վերաբերի Հայկական Ցեղասպանութեան ճանաչման գործընթացը մեր պետական օրակարգէն դուրս հանելու, «Իրական Հայաստան»ի գաղափարախօսութեան որդեգրումով՝ Արցախի եւ մեր իրաւունքներու պահանջատիրութենէն հրաժարելու, ընդ որուն մեր յաւերժութեան խորհրդանիշ՝ Արարատ լեռէն, Հայոց պատմութիւնը Հայաստանի պատմութեան վերածելու եւ նման այլ ազգային-պետական կարեւորագոյն հարցերու ոտնձգութիւններուն: Խորապէս մտահոգիչ պարագայ մըն է նոյնպէս ՀՀ իշխանութեանց սանձազերծած բռնաճնշումներն ու արշաւը Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցոյ Մայր Աթոռի Գահակալին եւ այլ բարձրաստիճան եկեղեցականներու դէմ, ինչ որ շատ վատ անդրադարձ կրնայ ունենալ հայ եկեղեցոյ եւ պետութեան վարկին ու հեղինակութեան յաչս աշխարհին եւ տուն տալ անկանխատեսելի հետեւանքներու (Սա չի նշանակեր երբե՛ք որ հայոց եկեղեցին բարենորոգման յոյժ կարիքը չունի): Յիշեցնենք որ հայոց եկեղեցին է որ պահած-պահպանած է ազգի ինքնութիւնն ու շարունակականութիւնը դարեր շարունակ, ի մասնաւորի մեր առաւելաբար պետականագորկ կեանքին մէջ: Եկեղեցին հայուն ինքնութեան, հոգեւոր-բարոյական արժէքներու համակարգին, մշակոյթին, պատմութեան անբաժանելի մասն է եւ հոս գոնէ պառակտում ստեղծելը միայն թշնամիին օրակարգին կրնայ ծառայել: Հարց կը ծագի թէ արդե՞՞ք այս է ԳԻՆԸ (վերոնշեալներուն հետ միասին) գոր պիտի վճարենք պահելու համար մեր սրտի չափ փոքր եւ սրտի չափ թանկ ներկայ Հայաստանի Հանրապետութիւնը, որ աշխարհագրականօրէն կը մնայ արքանուած երկու թշնամի պետութեանց միջեւ եւ գոյաբանական լուրջ վտանգի առջեւ է կանգնած ներկայ



աշխարհի քառսին մէջ, ուր ի չիք է յայտարարուած միջազգային օրէնքը ի դիմաց անտառի օրէնքին:

ԻՐԱԿԱՆ ՀԱՅՐ, սակայն, կրնա՞յ երբեւէ դաւաճանել իր իսկ հայու հոգիին, իր իսկ ինքնութեան, իր պատմական յիշողութեան, իր Արարատին, իր արիւնին...: Եւ սա չէ՞ մեր դիմադրականութեան հզօրագոյն զէնքը ընդդէմ բոլոր ալիւններուն եւ էրտողաններուն, որոնց հետ հմուտ դիւանագիտութեամբ եւ ի հարկին մաքիավելեան աղուէսագիտութեամբ կարելի է խուսանաւել մեր գոյութեան սպառնացող վտանգները: Միաժամանակ՝

ՀԶՕՐԱՆԱԼՈՎ  
տնտեսութեամբ, արդիւնաբերութեամբ, սպառազինութեամբ, գիտելիքով, արհեստագիտութեամբ եւ պետական-ռազմական բարձրագոյն մակարդակի կազմակերպութեամբ, յստակացնելով մեր ազգային-պետական ծրագիրը եւ ռազմավարութիւնը: Հզօր Հայաստանը իր հզօր պետականութեամբ գերագոյն երաշխիքն է մեր պաշտպանութեան, մասնաւորապէս մեր ժամանակներուն, երբ միջազգային իրաւունքը շարունակաբար կ'ըլլայ ոտքի կոխան եւ ՈՅԺՒ ՕՐԵՆՔՆ է որ կը դառնայ աւելի ու աւելի տիրական:

Այս բոլորին հետ զուգահեռ եւ գերազանցօրէն, ՄԷՐԸ իրարու հանդէպ, ԻՐԱՐՀԱՍԿԱՅՈՂՈՒԹԻՒՆԸ, ՀԱՒԱՔԱԿԱՆ ՈՅԺ դառնալու եւ ԲՈՌԻՆՑՔՈՒԵԼՈՒ ՈԳԻՆ, ԿԱՄՔԸ հրաշքներ կրնան գործել եւ ազգն ու հայկական պետականութիւնը դարձնել կոռ եւ միաձոյլ ամբողջականութիւն:

Ինչ կը վերաբերի Սփիւռքին, այսօր որքա՞ն մաշած եւ հիւծած է ան: Յեղասպանութենէն եւ Հայրենահանումէն ետք, ի՛նչ անխորտակելի հաւատքով, աննկուն ոգիով եւ կամքով, անհուն զոհողութեանց եւ զրկանքներու գնով, տարագիր հայութեան մնացորդացը կրցաւ պայքարիլ օտար երկիւնքներու տակ՝ անտուն, անօթեւան վիճակով եւ կրցաւ յաղթահարել ահաւոր չքաւորութիւնը եւ բազում անյաղթահարելի թուող դժուարութիւններ...եւ դարձաւ պատուաբեր, բերք ու բարիք ստեղծող քաղաքացիները իր հանգրուանած երկրին բոլոր ասպարէզներու մէջ ալ: Նոյն այդ հաւատքով եւ անբեկանելի ոգիով ան կրցաւ պայքարիլ օտարութեան ուժացնող պայմաններուն դէմ եւ ոչինչէն ստեղծեց իր ազգային-համայնքային կառոյցները՝ դպրոց, եկեղեցի, ակումբ, մամուլ...անոնց միջոցով կենսունակ պահեց հայ գիրն ու գրականութիւնը, մշակոյթը, կրօնքը, վառ պահեց իր ազգային ոգին ու մտածողութիւնը, պահանջատիրական ոգին, հայրենիքի սէրն ու կարօտը...

Բայց ներկայիս, իր հաւատքի շէնքն է որ կը փլուզուի տակաւ, համաշխարհայնացման եւ այլ հանգամանքներու բերումով, քանզի սփիւռքը չունի հայրենի հողը իր ոտքերուն տակ, ան զուրկ է հայրենի հողին պարզեւած աւշայորդ եւ հրաշագօր ոյժէն: Անողորմ, դժուար ու դաժան է սփիւռքահայ կեանքը եւ խախտու կը մնան անոր հիմերը, լայրծուն կը մնայ օտար հողը: Պիտի վերածուի՞ սփիւռքը արդեօք անդիմագիծ, ուղեկորոյս եւ սպաքաղաքականացած փերեզակներու ամբոխի, ինչպէս կը նախատեսէր Վազգէն Շուշանեան, աւելի քան դար մը առաջ: Ո՛՞ջ, անշուշտ, եթէ ան կարենայ իր արմատները երկարել դէպի հայրենական հաստաբուն մայր ծառը:



Դժբախտաբար, սակայն, նորանկախ Հայաստանի Հանրապետութիւնը յատկապէս եւ Սփիւռքը՝ ահա աւելի քան երեսուն տարի, չկրցան կեանքի կոչել երկարօրէն երազուած հոգեւոր, մշակութային եւ ֆիզիքական այն միութիւնը, որ հրամայական անհրաժեշտութիւն է երկուքին համար ալ: Հայաստանը սփիւռքով է զօրաւոր եւ փոխադարձաբար ալ, Սփիւռքը զօրաւոր է Հայաստանով: Ընդհակառակն, հայութեան այդ երկու շերտերը, «որք մրրկաւ էին գատուած», տակաւ կ'օտարանան իրարու ի ուրախութիւն մեր թշնամեաց: Հիմա առաւել քան երբեք, թուլացած, տկարացած է Հայաստան-Սփիւռք կապը, յատկապէս վերջին եօթ-ութ տարիներուն, երբ Սփիւռքի նախարարութիւնն ալ ջնջուեցաւ եւ փոխարինուեցաւ Յանձնակատարի կարգավիճակով: Պիտի կարենա՞նք գոյացնել այդ հոգեւոր-մշակութային-ֆիզիքական համախմբուածութիւնը, այդ ՀԱԻԱՔԱԿԱՆ ՈՅԺԸ, որ ազգի ու հայրենիքի հզօրութեան ու ամրութեան գլխաւոր գործօններէն մէկն է, եթէ ոչ՝ ամէնէն գլխաւորը: Ահա ճակատագրական մարտահրաւէր մը, զոր պիտի դիմագրաւենք եւ արդիւնաւէտ լուծումներ գտնենք յանուն ազգի ու հայրենիքի արժանապատիւ ու հեռանկարային լինելութեան:

Ասկէ անկախաբար ալ, սփիւռքահայ կառոյցները, կազմակերպութիւնները վերանորոգուելու կենսական կարիքը ունին...Անոնք, մեծաւ մասամբ, կը թոփեն նոյն տեղին վրայ, կամ ետքայլ կ'արձանագրեն, գտնելով միշտ ալ արդարացուցիչ բացատրութիւններ, որոնք բնաւ ալ համոզիչ չեն մտածող մարդուն համար: Գաղափարական ու տեսլապաշտ դեկավարութեան մը անյետաձգելի անհրաժեշտութիւնը կայ բոլոր մակարդակներու վրայ ալ: Դեկավարութիւն՝ որ կարենայ թօթափել ալ շատոնց ՀՆԱՄԱՇ դարձած մտածելակերպն ու գործելակերպը, նոր երիտասարդական աւիշ ու աւին ներարկէ սփիւռքահայ կառոյցներէն ներս, ուր բաց քննարկումները, առողջ բանավէճը, կառուցողական քննադատութիւնն ու ինքնաքննադատութիւնը՝ «օղի, ջուրի, հացի նման» էական ըլլան նոր ուղենիշ մշակելու, ապագայի նոր հեռանկարներու եւ մարտահրաւէրներու դէմ յանդիման...Այլապէս, լճացումն ու ճահճացումը անխուսափելի իրականութիւններ են: «Երիտասարդութեան հացը գաղափարական խանդավառութիւնն է», կ'ըսէ այնքան դիպուկ կերպով Վազգէն Շուշանեան...Հոս «գաղափարական»ը չշփոթել նեղ-կուսակցականի հետ, որ աւերներ գործած է եւ կը շարունակէ գործել, մասնաւորաբար երբ հայ երիտասարդը անմիջապէս կը պիտակաւորեն նեղ-կուսակցական գաւառամիտ ջոջերը՝ «մեզմէ է, մեզմէ չէ», կամ «մեր մարդն է, մեր մարդը չէ» սին ու ժամանակավրէպ խօսոյթներով եւ կը հեռացնեն զայն հայ կեանքէն...Այո, սփիւռքը վերակազմակերպուելու էական կարիքը ունի: Շատ կը խօսինք այս մասին, բայց չենք գործեր այդ ուղղութեամբ, ցաւ ի սիրտ:

Նորանոր մարտահրաւէրներ կարենալ յաղթահարելու համար՝ Հայաստան եւ Սփիւռք ու սփիւռքներ, մենք անհատաբար եւ հաւաքականօրէն պիտի կարենանք ոյժ գտնել մեր մէջ՝ արմատապէս փոխելու մեր մտածողութիւնը եւ մեր գործելակերպը, մեր վարքն ու վարքագիծը: Պիտի ճիշդ ճանչնանք մեր սխալները եւ ուղղենք զանոնք սթափ եւ զգաստ միտքով ու կամքով եւ դառնանք վերջապէս ՏԷՐԸ մեր ճակատագրին եւ վերահաստատենք ՀԱՅՕՐԷՆ ապրելու հպարտութիւնը, ոգեղէնութիւնը, հաւատքը եւ տեսլականը մեր ապագային հանդէպ:

Յայնժամ կրնանք վստահօրէն գոչել Չարենցի հետ.-

«Ես եկել եմ դարերից ու գնում եմ յաղթական



**Դեպի դարերը նորից, դեպի վսեմ ապագան»:**

**ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ**


## **ՀԱՐՑԱԶԳՈՅՑ**

«ԱՅՍ ՑԱԻՐ ՉԵՄ ՈՒԶՈՒՄ ԴԱՐՁՆԵԼ ԱՌԱՐԿԱՅ ԿԱՄ ՈՐԵԻԷ ԲԱՆ ԱՊԱՑՈՒՑԵԼՈՒ ՄԻՋՈՑ, ԱՅՆ ԻՄ ՆԵՐՍՈՒՄ Է»

Հարցազրոյց արցախցի երիտասարդ բանաստեղծուհի **Լուսինէ Ներսիսեանի** հետ.

**-Կը պատմէ՞ք Ձեր մասին:**

-Ծնուել ու մեծացել եմ Արցախում՝ մի հողում, որտեղ իւրաքանչիւր օրը կապուած էր մարդկանց աշխատանքով, պայքարով, ու հանդուրժողականութեամբ: Այնտեղ եմ սովորել, ապրել, ընտանիք կազմել և ստեղծել իմ ներաշխարհը՝ իմ սեփական աշխարհը: Արցախը ինձ համար երբե՛ք պարզապէս բնակավայր չէր, դա իմ լեզուն էր, իմ մտածողութիւնը, ներսի լռութիւնն ու խօսքը:



Կեանքը միշտ իմ համար եղել է ստեղծելու, զգալու, աշխատելու ընթացք: Ես բանաստեղծուհի եմ: Տարիների ընթացքում գրել եմ ասելի քան 800 բանաստեղծութիւններ: Գրելը եղել է իմ ինքնարտայայտման ձեւը՝ ոչ ցուցադրական, այլ ներքին աշխարհիս արտացոլումը: Բառը եղել է իմ ապրելու միջոցը՝ իմ ցաւն ու ուրախութիւնը, կորուստն ու կարօտը, յոյսն ու պայքարը սրտիս մէջ պահելու ձեւը:

**– 2020 թուականի պատերազմը եւ յետպատերազմեան շրջանը Ձեր կեանքում:**

-2020 թուականի պատերազմը կտրուկ փոխեց մեր կեանքը: Այն, ինչ թուում էր կայուն, սոսկ մէկ պահի դարձաւ անորոշ ու խոցելի: Այդ պատերազմը մեզ ստիպեց զգալ, որ կեանքը երբեք վերջնական չի լինում, որ պէտք է սովորենք յարմարուել անընդհատ փոփոխուող իրականութեանը:



Յետպատերազեան շրջանը, շրջափակումը, ամենօրեայ դժուարութիւնները մեզ փորձութեան առաջ կանգնեցրին: Այդ ամիսների ընթացքում մարդիկ սովորեցին դիմանալ, ոչ միայն նիւթական դժուարութիւններին, այլ նաեւ անընդմէջ յուզական լարուածութեանը: Կեանքը դանդաղեց, բայց կանգ չառաւ, և այդ ժամանակ ես աւելի խոր զգացի, թէ ինչ է նշանակում հայրենիք ունենալ, ո՛չ միայն որպէս տարածք, այլ որպէս պարտաւորութիւն ու առաքելութիւն:

**2023ի սեպտեմբերի 25ին Արցախում տեղի ունեցած չարաբաստիկ պայթիւնը, ցաւօք, չի շրջանցել նաեւ Ձեր ընտանիքին:**

-Սեպտեմբերի 25-ը մնաց իմ կեանքի ամենաճանր էջերից մէկը: Այդ օրը տեղի ունեցած պայթիւնը իւրեք հարիւրաւոր կեանքեր: Այդ պայթիւնի հետեւանքով ես կորցրեցի ամուսնուս:

Նա մարդու մի տեսակ էր, ով լուռ ուժ ունէր, ընտանիքի յենասիւն, համեստ, բարի ու աշխատասէր: Ստացած վնասուածքներից յետոյ մի քանի օր պայքարեց կեանքի համար և մահացաւ հիւանդանոցում: Այդ մասին խօսելիս բառերը պակասում են: Կորուստները, ցաւը, կարօտը չեն լրում, այլ մնում են իմ ներսում՝ որպէս մշտական ներկայութիւն: Կարօտը ինձ հետ է ամենուր՝ քայլերիս, խօսքերիս, իմ ստեղծագործութիւնների մէջ:

Մինչեւ այսօր պայթիւնից տուժած ընտանիքներին որեւէ յստակ կարգավիճակ սահմանուած չէ: Ես սա նշում եմ միայն որպէս փաստ՝ առանց մեկնաբանութեան: Այս ցաւը չեմ ուզում դարձնել առարկայ կամ որեւէ բան ապացուցելու միջոց, այն իմ ներսում է, իմ կենսագրութեան մի անքակտելի մասը:

**–Տեղահանութիւնից յետոյ արցախցիներին նոր կեանք է վիճակուել: Ինչպէ՞ս է յաջողուում չկոտրուել:**

-Տեղահանութիւնից յետոյ կեանքը սկսուեց նոր էջից՝ առանց նախորդ շարունակականութեան: Մենք այժմ ապրում ենք Հայաստանում: Ամէն օր փորձում եմ յարմարուել նոր իրականութեանը, պահպանելով իմ ներքին ուժը և արժանապատուութիւնը:

Ցան ու կորուստը մշտապէս ներկայ են, բայց դրանք իմ ներսում են: Ես ընտրել եմ չկոտրուել, որովհետեւ կոտրուելը կը նշանակէր հրաժարուել իմ արմատներից, իմ յիշողութիւններից և իմ կեանքի իմաստից: Յամենայնդէպս, ես ապրում եմ, որովհետեւ ապրելու միջից է գալիս ուժը, մտածելու կարողութիւնը և մարդ մնալու ձգտումը:



**-Կը խօսէ՞ք ապագայի ծրագրերի մասին:**

-Այս օրերին շարունակում եմ գրել: Մասնաւորապէս, վերջին տարիների ծանր փորձութիւնները, կորուստը և կարօտը ներշնչում են ինձ՝ արտայայտելու ամենայն զգացմունքները բառերի մէջ:

Հետագայում ծրագրում եմ տպագրել գիրք՝ իմ ապրածի, յիշողութեան և ներսում մնացած խօսքի վկայութիւնը: Այդ գիրքը չի լինելու աղմուկի կամ գնահատականների համար, այն կը լինի իմ ապրածի, իմ հոգու վկայութիւնը, իմ ներսի ճիշդ և լռութիւնը միաժամանակ: Գրելը ինձ համար ո՛չ միայն ստեղծագործութիւն է, այլ նաև՝ ապրելու ձեւ, սեփական ինքնութեան պահպանում, ուժ գտնելու միջոց:

**- Ձեր խօսքն արցախցիներին:**

-Ես հաւատում եմ, որ հայրենասիրութիւնը բառերով չի արտայայտուում, այն ապրում ես, պահում ես ու կրում: Մեր կորուստները կարող են ցաւեցնել, բայց մենք դեռ ունենք յիշողութիւնը, լեզուն, մտածելու և ստեղծելու կարողութիւնը:

Կարօտը, կորուստը, ցաւը կարող են դառնալ ոչ թէ կոտորող, այլ ձեւաւորող: Հիմնականը պահպանել արժանապատուութիւնը, ուժը, հաւատն ու մարդ մնալու կարողութիւնը: Մենք շատ բան ենք կորցրել, բայց դեռ շարունակում ենք ապրել, ստեղծագործել, յիշել և պահպանել մեր ներքին աշխարհը:

Անգամ ամենամութ օրերին ես չեմ յանձնուել, չեմ թուլացել, որովհետև գիտեմ՝ ուժեղ տեսակը, հայրենասիրութիւնը չեն սպառում մեր միջից, դրանք աճում են, երբ մարդը դիմադրում է դժուարութեանը և ապրում է արժանապատուութեամբ:

**Կարինէ ԲԱԽՇԵԱՆ**

**ԿԻՊՐԱՀԱՅ**

**ՅԻՇԱՏԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ ՄԵԼԳՈՆԵԱՆ ԱՆՄԱՀ ԲԱՐԵՐԱՐՆԵՐՈՒ**



«Անմահ լուսոյ, ճշմարտութեան, բարիին

Տաճարն է այս, սրբանուէր, թանկագին,

Ան մեզ տուաւ՝ նահատակուած մեր ցեղին

Զաւակներէն լաւագոյնը ու բարին»

Այս տարի հարիւրամեակն է Մելգոնեան Կրթական Հաստատութեան հիմնադրութեան: Յոբելեան մը որ յատուկ տօնակատարութիւններով պիտի նշուի սփիւռքի շատ մը գաղութներուն մէջ եւ Մայր Հայաստանի:

Կիրակի 18 Յունուար 2026-ին, Ս. Յովհաննու Կարապետի Տօնին առիթով, սրբազան աւանդութեամբ մը եւ նախաձեռնութեամբ «Կիպրոսի Մելգոնեանցի բարեկամներ»ու խումբին, ոգեկոչուեցաւ յիշատակը անմահ բարերարներ՝ աղա Կարապետ եւ աղա Գրիգոր Մելգոնեաններու՝ նախ Նիկոսիոյ Ս. Աստուածածին Մայր եկեղեցիին մէջ, ապա՝ Հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ նախագահութեամբ Թեմիս Կաթողիկոսական Փոխանորդ Գերշ. Տէր Կոմիտաս արք. Օհանեանի, մասնակցութեամբ Տէր Մովսիկ աւագ քինյ. Հապէշեանի՝ Մելգոնեան կրթական հաստատութեան սիրտը գտնուող Մելգոնեան եղբայրներու դամբանին առջեւ: Ներկայ էին Կաթ. Փոխ. Գերաշնորհ Տէր Կոմիտաս արք. Օհանեան, Կիպրոսի մօտ ՀՀ Դեսպանութեան ներկայացուցիչներ, Արժանապատիւ Տէր Մովսիկ քինյ. Հապէշեան, Մելգոնեանցիներ եւ բարեկամներ: Ներկաները Տէրունական



աղօթքի միասնական կատարումէն ետք, միասնաբար երգեցին Մելգոնեանի քայլերգը եւ ծաղկեպսակներ ու սպիտակ վարդեր զետեղեցին խոնարհաբար բարերարներու դամբանին առջեւ:

Այնուհետեւ, Տիկ. Երան Գույումճեան հոգեյոյգ ապրումով արտասանեց իր ինքնագիր բանաստեղծութիւնը ձօնուած անմահ բարերարներ՝ Աղա Կարապետ եւ Աղա Գրիգոր Մելգոնեաններու խնկելի յիշատակին, գրուած յատուկ Մելգոնեանի հարիւրամեակին առիթով: Հայրենի արուեստագէտ Սարօ Մկրտչեան տուտուկի վրայ նուագեց «Հաւուն, Հաւուն»ը քնքշահեզ հնչիւններով, մթնոլորտը առաւել եւս ընծայելով յուզախոռով եւ թախծալից:

Հուսկ, խօսք առաւ Գերաշնորհ Սրբազան Հայրը եւ Մելգոնեան անմահ բարերարներու դամբանը արժեւորեց որպէս սրբավայր, ոչ-պակաս սրբախորհուրդ՝ Մեսրոպ Մաշտոցի, Օշականի եւ մեր միւս Մեծերու սրբարաններէն: Ան պատգամեց աշխատիլ, մաքառիլ ու պայքարիլ բոլոր ուղղութիւններով որ Բարերարներու երազը չմնայ անկատար, անոնց յիշատակը ապրի ու ծաղկի մելգոնեանցիներու սրտին մէջ եւ լուսոյ տաճարի տիրութիւնը մնայ հայութեան գիրկին մէջ, բաժին չդառնայ օտարներու:

Պահպանիչ աղօթքով վերջ գտաւ այս սրտայոյգ եւ բովանդակալից արարողութիւնը:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

Այս առիթով, յետ Հոգեհանգստեան արարողութեան, ՀԲԸՄիութեան Նիկոսիոյ Մասնաճիւղի Գործող Յանձնախումբը կազմակերպած էր Ընդունելութիւն մը Միութեան ակումբին մէջ, յարգելու համար յիշատակը Մելգոնեան անմահ Բարերարներուն: Գերաշնորհ Սրբազան Հայրը, Միութեանականներ, Մելգոնեանցիներ եւ բարեկամներ ներկայ գտնուեցան ընդունելութեան, իսկ մթնոլորտը՝ տուտուկի քաղցրահունչ նուագով, ճոխացուց հայրենի արուեստագէտ Սարօ Մկրտչեան: Բոլորին վարձքը կատար:

Երան Գույումճեան

## **ՅՕԴՈՒԱԾՆԵՐ**

### **ԽԱԻԱՐԻ ՄԷՋ ԼՈՅՍ**

### **ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՅԱԹԱՓՄԱՆ**

### **ԵՒ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԱՇԽԱՐՀԻ ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹԵԱՆ ԴԻՄԱՑ**

Դոկտ. Արէլ քինյ. Մանուկեան

Քրիստոնէական ընկալումով՝ Ս. Ծնունդը յոյսի, սիրոյ, խաղաղութեան եւ մարդկութեան հանդէպ Աստուծոյ անընդմիջելի մերձակայութեան տօնն է: Աւետարանի այս պատգամը, սակայն, բազմիցս կտրուկ կը հակադրուի պատմական եղելութիւններուն, պետութիւններու որդեգրած քաղաքական իրականութեան ու անկէ թելադրուած դիւանագիտական գործողութիւններուն: Այս հակասութիւնը յատկապէս ակնյայտ կը դառնայ այն պարագային, երբ քրիստոնէական կրօնին ու մշակոյթին պատկանող ազգեր ուղղակի կը դառնան բռնութեան, տեղահանութեան, իրաւագրկութեան, ընդհուպ մինչեւ իսկ ցեղասպանութեան զոհ, երբ միաժամանակ դիտումնաւոր կը լքուին նոյն հաւատքը դաւանող՝ այսպէս կոչուած քրիստոնէայ ազգերու եւ պետութիւններու կողմէ: Այս փաստը առաւել եւս հիապօստութիւն կը պատճառէ, երբ անոնք ունին բոլոր հնարաւորութիւնները օժանդակելու իրենց հաւատակից քոյրերուն ու եղբայրներուն՝ առնուազն կանխարգիլելու անոնց սպառնացող օրհասական վտանգը:



*Շուշիի Ղազանչեցոց Ս. Աննափրկիչ եկեղեցին՝ հոյժիրակոծուած ատրպէյջանական զինուժին կողմէ, 8 հոկտ. 2020 թ.*

Արցախի հանրապետութեան շուրջ տեղի ունեցած իրադարձութիւնները լուրջ հարցադրումի կ'ենթարկեն համատես աւետարաններուն հաղորդած սուրբննդեան ուղերձը: Ժողովուրդ մը, որ մահմետականներով գերակշռուած աշխարհագրական միջավայրի մը մէջ դարեր շարունակ բարձր պահած է քրիստոնէական հաւատքին ջահը, կառուցած է վանքեր ու եկեղեցիներ, մշակած եւ զարգացուցած է քրիստոնէական մշակոյթի մասին վկայող եզակի արժէքներ, կարճատեւ ժամանակամիջոցի մը ընթացքին զրկուեցաւ իր հազարամեակներու օրրանէն՝ դառնալով վտարանդի եւ հայրենագուրկ: Քաղաքական եւ ռազմական պարտութիւնը յանգեցուց ոչ միայն տարածքային կորուստի, այլեւ Արցախի պետական այրերու բանտարկութեան, մշակութային ժառանգութեան ոչնչացման եւ ամբողջ բնակչութեան պարտադիր արտագաղթին: Այն փաստը, որ այս իրավիճակը մեծաւ մասամբ հեշտութեամբ ընդունուեցաւ աշխարհի քրիստոնէայ համարուող պետութիւններու կողմէ, կը յառաջացնէ աստուածաբանական լուրջ հարց մը. ի՞նչ հաւաստիութիւն ունի այսօր Աւետարանի սուրբննդեան պատգամը, երբ զայն կրողները կը պահպանեն դաւաճան լռութիւն մը, այլապէս հանդէս կու գան ընդամենը դատարկ լոզունգներով կամ կը նահանջեն վճռորոշ պահերուն, երբ իրենց հաւատակից քոյրերն ու եղբայրները Քրիստոսի սիրոյն կը նահատակուին, կը կորսնցնեն քրիստոնէական հաւատքի վկայութիւններով կնքուած ամբողջ տարածաշրջան մը՝ տեղի տալով մահմետականութեան հեղեղին:

Գուցէ կարելի է առարկել, թէ հարցը ամենեւին չունի կրօնական բնոյթ, այլ տեղի ունեցած ամբողջ ողբերգութիւնը կը կրէ բիրտ քաղաքականութեան մը օրակարգը: Սակայն, միեւնոյն է, խորապատկերը ունի նաեւ կրօնական կնիք՝ նկատի ունենալով այն փաստը, որ տարածաշրջանը անուանափոխուելով այսօր նուաճող պետութիւնը զայն կը կոչէ *Qarabağ iqtisadi rayonu*, որ իր մէջ կը ներառէ Ağcabədi, Ağdam, Ağdərə, Bərdə, Füzuli, Xocalı, Xocavənd,



Տսւսա Վժ Դժտժ ԻնզԻԲԻ րայոնլարԻ, հժմճԻնԻն ՃԻնքժնԻն ճժհժրԻ քաղաքնԻրն ու շրջաննԻրը: Տարակոյսէ վԻր է, որ այս ամբողջ տարածաշրջանը հետզհետէ պիտի վԻրաբնակեցուի թուրք-ազԻրի կամ ընդհանրապէս մահմետական ազգաբնակչութեամբ, որ կը նշանաւորուի մահիկով եւ ոչ թէ խաչի խորհրդանշանով: Արդեօ՞ք սոյնը կորուստ մը չէ քրիստոնէայ աշխարհին համար: Սակայն ի՞նչ փոյթ, վաղուց արդէն վկայուած իրողութիւն է, որ պետութիւննԻր կ'առաջնորդուին իրենց գԻրագոյն շահերէն եւ ոչ թէ հաւատքի այն զգացողութենէն, զոր կը թելադրէ Աւետարանը: Սուրբծննդեան տօնը, որ կը միաւորէ ամբողջ քրիստոնէայ աշխարհը ԲԵթղԵԽԵՄԻ մտուրի խորհուրդին շուրջ, տեղ մը կը դառնայ անհասկնալի, միանգամայն ձեւական եւ նոյնիսկ անընդունելի, երբ նոյն հաւատակից ազգերու եւ պետութիւններու միջեւ կը պակսին սԵրն ու միութիւնը, իսկ վճռորոշ պահերուն՝ նաեւ զօրակցութիւնը:

Այսօր ի՞նչ սրտով պիտի տօնէ արցախցի հայը Քրիստոսի սուրբծննդեան տօնը, երբ ան դարձած է փաստօրէն հայրենագորկ եւ վտարանդի իր պապենական հողերէն, հեռու՝ իր պատմական սրբավայրերէն, անցեալին կաթողիկոսութիւն դարձած Գանձասարէն, Դադիվանքէն, Ամարասէն, Շուշիի Ս. Ամենափրկիչ Ղազանչեցոց տաճարէն ու հայոց այն բազմաթիւ սրբավայրերէն, որոնց ապագան անորոշ է եւ ենթակայ հետզհետէ թշնամիին բարբարոս ձեռքերով իրագործուող ոչնչացումին: Նշուած սրբավայրերը դարեր շարունակ եղած են ոչ միայն մշակութային կամ կրօնական կեդրոններ, այլեւ հաւաքական յիշողութեան եւ հոգեւոր ինքնութեան կրողներ:

Եթէ իրաւ է տառապանքը, ապա անոր ամենաձանր դրսեւորումներէն մէկն ալ ոչ թէ տունն ու տեղը, սեփական այգին կորսնցնելն է, այլ զրկուիլը սգալու իրաւունքէն՝ ստիպողաբար լքել իր ընտանիքի սիրելի անդամներուն եւ հարազատներուն գԻրեզմանները, այցելել չկարենալ արցունք թափելու անոնց շիրիմներուն վրայ, թէկուզ վառելու մոմ մը կամ խունք ծխելու անոնց հոգիի խաղաղութեան եւ լուսաւորութեան համար: Եւ սոյնը տակաւին առաւել եւս ծանր է, երբ արցախցի հայը ակամայ դարձած է անձնատուր՝ դատապարտուած ըլլալով առ այժմ ընելու ոչինչ, այլ յանձնուելու ունայնութեան, իրավիճակ, որ թԵրԵւս հոգեկան շատ աւելի խոր տանջանք է, քան սեփական ունեցուածքին կորուստը:

ՎԵրոնշեալ սրբավայրերէն ստիպողական բաժանումը հոգիին վրայ չսպիացող վԻրք մըն է: Քանզի հայ մարդու ընկալած քրիստոնէութեան մԵջ հաւատքը անբաժանելիօրէն կապուած է պաշտամունքային որոշակի վայրերու հետ, ուր կը միահիւսուին աւանդութիւնները, հոգեւոր-Եկեղեցական արարողութիւնները, պաշտամունքը, սուրբ պատարագը, պատմութիւնն ու յիշողութիւնը: Հետեւաբար, հոգեւոր-մշակութային այս ժառանգութեան սպառնալիքին տակ գտնուելու, պղծուելու եւ ոչնչացման ենթարկուելու վԵրաբԵրեալ իրազեկուածութիւնը ոչ միայն մշակութային, այլեւ ինքնին կը նԵրկայացնէ աստուածաբանական խնդիր: Արդարեւ, աստուածարդարացում (Theodicée) մը, որ կը վԵրաբԵրի աստուածաբանական այն փորձին՝ արդարացնելու համար բարի եւ ամենակարող Աստուծոյ նկատմամբ հաւատքը՝ աշխարհի մԵջ տիրող տառապանքին, չարիքին եւ անարդարութեան հանդէպ: Ինչո՞ւ արդարը կը տառապի այս աշխարհի մԵջ, երբ Աստուած արարիչն է բարիին՝ ողորմած է ու արդար: Սուրբգրային աւանդոյթը կը հրաժարի պարզ պատասխաններ առաջարկելէ այս հիմնարար հարցումին եւ չի լուծԵր առկայ խնդիրը: Աստուածաշունչ մատեանը, բնականաբար, արդարին տառապանքը չի նԵրկայացնԵր իբրԵւ



Աստուծոյ ողորմածութեան հակափաստարկ, այլ կը մատնանշէ աշխարհ մը, ուր գերազանցապէս առկայ են ու կը գործեն ազատութիւնը, մեղքը եւ բռնութիւնը, եւ ուր Տիրոջ խոստացած արդարադատութիւնը լիովին ակնյայտ կը դառնայ միայն իր վախճանաբանական իրականացումին մէջ: Սոյնը, անշուշտ, կը հանդիսանայ միաժամանակ հաւատքին ուղղուած լուրջ մարտահրաւէր մը, թէ ինչպէ՞ս կարելի է ընկալել Աստուծոյ մերձակայութիւնը, երբ Անոր անմիջական ներկայութեան տեսանելի նշանները ոչնչացած կամ ստոյգ ոչնչացուելու սպառնալիքի տակ կը գտնուին:

Այստեղ կրկին հարց պէտք է տալ, թէ ի՞նչ կենսունակութիւն կրնայ ունենալ հաւատքը, ի՞նչն է սուրբծննդեան պատգամը, երբ քրիստոնէայ պետութիւններ կը ձախողին, կը բացակայի արդարութիւնը, իսկ անոնց ուժային-քաղաքական շահերը դուրս կը մղեն միջազգային իրաւունքի բոլոր սկզբունքները:

Այս հարցը բնականաբար տեսական հետաքննութիւն մը չէ, այլ գոյաբանական փորձառութիւն: Ան կը յառաջանայ այն պարագային, երբ մարդիկ փատօրէն կը գիտակցին, թէ Քրիստոսի անունը չի պաշտպաներ զիրենք եւ քրիստոնէական պատկանելիութիւնը արդարութիւնը չ'երաշխաւորեր: Արդարեւ, այս լարուածութիւնը յատկապէս զգալի կը դառնայ սուրբծննդեան տօնին, որովհետեւ ան կը բացայայտէ մարդկութեան նկատմամբ Աստուծոյ փրկարար մերձակայութիւնը՝ աւետելով. «Բարձունքներուն մէջ Աստուծոյ փա՛ռք, խաղաղութի՛ւն երկրի վրայ եւ մարդոց միջեւ հաճութիւն» (Ղուկ. Բ, 14): Արդեօ՞ք սոյնը անկատար խոստում մըն է, թէ յաւիտենապէս սպասողական վիճակ: Մակայն Մարդեղութեան խորհուրդին աւետած այս պատգամը աշխարհի սկիզբէն ի վեր ուղղակի կը հակադրուի տիրող բռնութեան, ձախողութեան եւ անարդարութեան իրականութեան հետ, որ առաւել եւս տեսանելի կը դարձնէ աստուածային տնօրինումին եւ մարդկային արարքներուն միջեւ առկայ անջրպետը:

Այնուհանդերձ, Նոր կտակարանը չի խուսափիր պատասխանելէ այս հարցին: Ընդհակառակը՝ զայն ուղղակի կը դնէ քրիստոնէական պատմութեան սկիզբը: Սուրբ Ծնունդը յաղթողներուն տօնը չէ, այլ՝ հիասթափածներուն, տեղահանուածներուն եւ անգօրներուն: Սուրբծննդեան աւետիսը առաջին հերթին աղքատներուն կ'ուղղուի եւ զանոնք մխիթարելու կու գայ: Քաղաքէն դուրս, մարդոց հիւրընկալութենէն մերժուած՝ զոմի վերածուած այր մը, իր կիսամութիւն մէջ կը դիմաւորէ լոյսին Արարիչը: Աղքատիկ մայր մը, որ խանձարուրով կը փաթթէ իր նորածինը եւ զայն կը դնէ յարդէ խշտիքի՝ մտուրի մը տրտում խոնարհութեան մէջ: Մարդուն հանդէպ խանդաղատանքը խեղճութիւնն է, որ կը նուիրագործուի, եւ ոչ թէ իշխողներուն ու բռնաւորներուն փառքը, հարուստին պալատն ու ապարանքը, ոսկին ու արծաթը: Յիսուսի ծնունդը որեւէ քաղաքական իշխանութեան պաշտպանութեան տակ չի կատարուիր, այլ՝ աշխարհի պատմութեան անշուք մէկ ծայրամասին մէջ: Արդէն սուրբծննդեան նախընթաց պարագաները եւս զուրկ են բարեբաստիկ ըլլալու բոլոր կարելիութիւններէն, որովհետեւ հռոմէացիներէ պարտադրուած մարդահամարին բերումով Յիսուսի ծնողքը հեռու են իրենց բնակավայր Նազարէթ գիւղաւանէն, ուր կարելի ըլլար թէկուզ ընտանեկան օճախին մէջ լսել նորածին մանկան առաջին ճիչը: Բայց ադպէս չեղաւ, ո՛չ հարազատներէ, ո՛չ մանկաբարձի մը կամ դուռ-դրացիներու օժանդակող ներկայութենէ, այլ անասուններով շրջապատուած՝ տեսակ մը օտարութեան եւ լքուած պայմաններու մէջ կ'իրականանայ Աստուածորդոյն ծնունդը: Աղքատներն են Յիսուս մանկան առաջին



այցելուները՝ բաց երկինքի տակ իրենց հօտերուն պահպանութիւնը ընող հովիւներ, որոնք կու քան գուրգուրանքով խոնարհելու Փրկիչ մանուկին առջեւ: Ապա, այս խեղճերէն ետք, իմաստուններն ու մեծերն են, որ պիտի գան՝ Արեւելքի մոզերը՝ սրտաբուխ տալու իրենց նուէրները եւ ճնրադրելու աստուածային մարմնացած սիրոյն առջեւ:

Պատմական իրադարձութեան այս խորապատկերին վրայ՝ ուղղակի ապշեցուցիչ է կրօնական վերնախաւին լռութիւնը: Քահանաները, օրէնքի ուսուցիչները, դպիրներն ու փարիսեցիները, որոնք քաջ գիտէին մարգարէութիւնները խոստացուած մեսիային մասին, միեւնոյն է, կը պահպանեն քար լռութիւն մը: Նոյնքան զարմանալի է քաղաքական հեղինակութիւններու ցուցաբերած արհամարհոտ վարքագիծը, մարդիկ, որոնց համար մարդկային կեանքը հետաքրքրական է միայն այն պարագաներուն, երբ զայն կարելի է ծառայեցնել իրենց իշխանութեան կայունացման եւ քաղաքական առաւելութիւններուն: Ահաւասիկ այս պայմաններուն մէջ կը ծնի Յիսուս: Ոչ թէ որպէս գործող համակարգի մը ուղղիչ, այլ որպէս հակադրութեան խորհրդանիշ աշխարհի մը դէմ, ուր ճշմարտութիւնը կը բացակայի, յոյսը կը դալկանայ, իսկ հաւատքը կը բռնաճնշուի:

Սուրբճննդեան պատմութիւնը ռոմանթիկ իտեալականացում մը չէ: Հազիւ ծնած՝ երէխան արդէն սպառնալիքի տակ է: Հերովդէս Մեծ,– Յուդայի թագաւորը,– անպաշտպան մանուկի մը անձին մէջ նոյնիսկ վտանգ կը տեսնէ իր իշխանութեան հանդէպ: Հին կտակարանի մարգարէութիւններէն նորածին Յիսուսին տրուած «Թագաւոր հրէից» պատուանունն իսկ բաւական է, որ ան իր իշխանութիւնը կորսնցնելու հիւանդագին մոլուցքէն մղուած դիմէ քաղաքական սարսափելի ռճիրի՝ կոտորել տալով Բեթղեհէմի մէջ մինչեւ երկու տարեկան բոլոր մանուկները: Արդարեւ, սուրբճննդեան պատմութիւնը կը սկսի ոչ թէ գրկաբաց ընդունելութեամբ, այլ փախուստով: Ոչ թէ նորածինին պարգեւած ուրախութեամբ, այլ վախով կը համակուի սուրբ ընտանիքը: Եգիպտոս՝ արքայի եւ պանդխտութեան վայրը, կը դառնայ մարմնացած Աստուածորդոյն առաջին ապաստանարանը:

Ահաւասիկ ճիշդ այս է սուրբճննդեան յաւիտենական ուղերձը: Հաւատքը հիմնուած չէ քրիստոնէական քաղաքականութեան յաջողութեան, կրօնական հաստատութիւններու բարոյական ամբողջականութեան եւ հզօրներու արդարադատութեան վրայ: Ան հիմնուած է աստուածային մարմնացած Սիրոյն վրայ, որ գիտակցաբար կը մտնէ մեր պատմութենէն եւ ժամանակի սահմաններէն ներս, ուր կը բացակայի արդարութիւնը եւ երաշխաւորուած չէ ճշմարտութեան պաշտպանութիւնը:

Սուրբ Ծնունդը չի պատգամեր, որ այս աշխարհը արդար է կամ թէ անկէ վերացած են տառապանքն ու անարդարութիւնը: Սակայն կ'աւետէ, որ Աստուած զայն չի լքեր: Ս. Ծնունդով կը բացայայտուի մարդկութեան հանդէպ Աստուծոյ անվերապահ սէրը, որ ենթակայ չէ պայմաններու, եւ հաւատարմութիւն, որ կը յարատեւէ նոյնիսկ մարդկային կեանքի ու պատմութեան ճախողութիւններուն մէջ:

Ս. Ծնունդով սկիզբ առած Փրկագործութեան խորհուրդը կը կայանայ ոչ թէ մեր վարած աշխարհակարգի արդարացումին, այլ խաչին խորհուրդով կնքուած մարդկութեան փրկութեան մէջ: Այս փրկութիւնը քաղաքական յաղթանակ չի պահանջեր մեզմէ, այլ հաւատք եւ համակ ինքնանուիրում՝ վստահելու մեր անձը աստուածային հաւատարմութեան, նույնիսկ հոն, ուր խորտակուած է մարդկային յոյսը:



Ի վերջոյ, հաւատքէն ի՞նչ կը մնայ... Ամենեւին ոչ այն պատրանքը, թէ քրիստոնէական գերիզօր պետութիւնները ամբողջապէս վստահելի են: Ոչ ալ այն ակնկալիքը, թէ հաւատքը մեզ կը պաշտպանէ տառապանքէն: Այլ՝ այն վստահութիւնը, որ Աստուած ներկայ է այնտեղ, ուր մարդիկ զրկուած են իրենց իրաւունքէն, հալածուած, տեղահանուած եւ լռութեան մատնուած են: Սուրբճննդեան պատգամը յաղթանակի մը հռչակումը չէ, այլ, բառին բուն իմաստով, աւետիս մը, աստուածային խորախորհուրդ խոստում մըն է: Եւ թերեւս ճիշդ այս է պատճառը, որ հաւատքը կը գոյատեւէ այնտեղ, ուր մնացած ամէն ինչ խորտակուած է:

Քրիստոնէական հաւատքի հորիզոնին վրայ պատմութիւնը պարզապէս կորուստներու յաջորդականութիւն չէ, այլ անաւարտ գործընթաց, որ միշտ բաց է փոփոխութիւններու եւ նոր սկիզբներու համար: Ոչինչ անշրջելիօրէն կը մատնուի մոռացութեան, քանի որ Աստուծոյ ներգործութիւնը չի սահմանափակուիր միայն պահի մը մէջ, այլ կը գերազանցէ ժամանակի վերաբերեալ մեր բոլոր ընկալումները: Այն, ինչ կորած կը թուի ներկայիս, տակաւին ենթակայ է վերափոխուելու հնարաւորութեան, քանի որ Աստուծոյ հաւատարմութիւնը կապուած չէ մարդկային ուժի տրամաբանութեան կամ պատմական որոշումներու արդիւնքին հետ: Այս իմաստով յոյս ունենալ չի նշանակեր միախառնուիլ՝ մտահանելով կորուստը, ոչ ալ վաղաժամ յուսադրուիլ՝ զայն վերստին նուաճելու պատրանքով, այլ համբերատար հաստատականութեամբ յարատեւել կորսնցուցածի ու դեռ չիրականացած ապագայի յարաբերութեան միջեւ: Այստեղ կարելոր նշանակութիւն ունի հաւաքական յիշողութիւնը: Յիշողութիւնը կրաւորական յետադրած հայեացքով անցեալին նայիլը չէ, այլ գիտակցուած մերժումն է անցեալը անցած եւ զայն անդառնալի իրավիճակ մը համարելու իրավիճակին: Անոնք, որոնք կը յիշեն՝ կը պահպանեն իրենց ինքնութիւնը: Անոնք, որոնք կը յիշեն ու կը մերժեն մոռնալ անցեալը, բաց կը պահեն վերադարձի, վերականգնումի եւ վերանորոգումի բոլոր հնարաւորութիւնները: Հետեւաբար, Քրիստոսի միջոցով փրկութեան հանդէպ հաւատքը միշտ կը ներառէ այն համոզումը, որ տունդարձն ու կորսուածը վերստին ձեռք բերելը ամենեւին բացառուած չեն: Այսպիսով յոյսը կը դառնայ հոգեւոր դիրքորոշում, հաւատքը՝ գոյաբանական կենսաձեւ, որ կը դիմակայէ ժամանակի մաշումին իսկ սերը՝ կեանք պարզեւող զօրութիւն, որ չի լքեր կորսուածը, այլ զայն կը վստահի Աստուծոյ հաւատարմութեան:

Սուրբճննդեան պատգամը միայն կորուստի փորձառութիւն չի ներառեր, այլ նաեւ վերադարձի եւ նոր սկիզբի մը խոստումը: Յիսուսի ծնունդի հրեշտակաձայն աւետիսին հետեւեցաւ բռնութիւնը՝ Բեթղեհեմի մանուկներու կոտորածին տխուր իրադարձութիւնը եւ սուրբ ընտանիքին պարտադրուած պանդխտութիւնը: Սակայն այս եղելութիւնը չ'աւարտեցաւ օտարութեան մէջ, այլ արքայազնը Եգիպտոսէն տունդարձը եւ հայրենի օճախին մէջ կեանքի հետագայ զարգացումը կը կազմեն Աստուծոյ փրկագործութեան ծրագրի կատարումին սկիզբը: Այս լոյսին տակ Ս. Ծնունդը անմիջական ցաւէն անդին կը մատնանշէ վերակառուցման եւ հայրենադարձութեան հնարաւորութիւնը՝ ոչ որպէս անցեալի պարզ վերականգնումը, այլ իբրեւ նորոգուած կեանք, որ կը ծնի անձնուէր հաւատարմութենէ, աննահանջ համբերութենէ եւ անսպառ յոյսէ:

*Ժրնէւ, 5 յունուար 2026*

*Ճրագալոյց Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան  
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի*

## ՄԱՀԱԳՐԱԿԱՆ ՎԱԽՃԱՆՈՒԵՅ ԵԳԻՊՏԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԻ ՆԱՀԱՊԵՏԸ



(Պերճ Թերզեանի մահուան քառասունքին առթիւ, կ'արտատպենք իր մասին գրուած Յակոբ Աւետիքեանի մահագրականը)

Պերճ Թերզեան. Եգիպտոսի հայագաղութի նահապետը, որ վերջին 25-30 տարիներին լինելով Թեմական խորհրդի անդամ, երբեմն՝ ատենապետ, յաճախ նաեւ ՀԲԸՄիութեան շրջանային վարչութեան ղեկավար, իսկ յաճախ էլ՝ առանց որեւէ պաշտօնի, բոլոր պարագաներում, պետական մարմինների մօտ թէ այլուր միշտ եւ շարունակ տեր է կանգնել հայագաղութի շահերին, օգտակար դառնալով նաեւ, ՀՀ անկախութիւնից յետոյ, Գահիրեւում մեր դեսպանութեանը:

Լինելով յարգուած գործարար, առեստրային տպարանի սեփականատեր, միաժամանակ՝ քաջահմուտ արաբերէն լեզուին, եգիպտական բարբերին, պետական գրասենեակների աւանդական գործելակերպին, նրա խորհուրդները որոշիչ են եղել մեր ազգային, հասարակական կեանքի կազմակերպական գործերում, իսկ տազնապալի ժամանակներում, ինչպէս 2010-ականներին, երբ ծայրայեղ լարուեցին յարաբերութիւնները Եգիպտոսի արմատական մահմեդականների եւ 8-10 միլիոն հաշուող ղպտի քրիստոնէական համայնքի միջեւ, նա բնաւ չլքեց մայրաքաղաքի կենտրոնական հրապարակներից մէկում գտնուող եւ Գալուստ Գիւլբենկեանի նուիրատւութեամբ վեր խոյացող մեր առաջնորդանիստ տաճարն ու յարակից գրասենեակը: Նա իսկապէս յարգուած էր տեղի պետական պաշտօնեաների ու տարբեր համայնքների ու կազմակերպութիւնների ղեկավարների կողմից որպէս պարկեշտ, լուրջ հեղինակութիւն: Նրա խօսքը յարգում էին:



Միաժամանակ՝ նա ջատագովն ու պաշտպանն էր եզիպտահայ մամուլին, յատկապէս «Արեւ» օրաթերթին, իսկ վերջին տարիներին կանոնաւոր պարբերականութեամբ լոյս էր ընծայում «Տեղեկատու» բուլետենը, որտեղ հրապարակում էր իր յօդուածները, որոնցից վերջինը նուիրուած էր արեւմտահայերէնի պահպանման դժուարին խնդրին:

Փառասէր չէր Պերճ Թերզեանը, հետեւաբար՝ ոչ էլ ցուցամուլ: Լուրջ եւ լրջախոհ՝ սիրում էր գործել անաղմուկ, բայց արդիւնաւէտ: Նրա աշխատանքը տարիների ընթացքում տուել է շօշափելի արդիւնքներ մի այնպիսի մարզում, որին մեր ազգայիններից միայն քչերն են եղել հետամուտ՝ ծագումով հայապատկան կալուածների ու շինութիւնների վերատիրացում՝ հնարաւորութեան սահմաններում եւ համապատասխան փաստաթղթերի առկայութեան դէպքում: Եւ հենց նրա ջանքերով է, որ Հայ եկեղեցին եւ ՀԲԸՄիութիւնը վերստին տէր են դարձել հանգամանքների բերումով կամ 50-ականների պետականացման հետեւանքով իրենց կորցրած ունեցուածքներին: Այդ կալուածներից մէկը, թերեւս ամենից նշանաւորը, Ջանիկ Չաքրի վիլլան էր, որը փաստաթղթերի կարգաւորումից յետոյ, Եզիպտոսում ՀՀ դեսպան Էդուարդ Նալբանդեանի պաշտօնավարութեան ժամանակամիջոցում, նուիրուեց Հայաստանի Հանրապետութեանը որպէս դեսպանատուն գործածելու պայմանով:

Պատկերացում կազմելու համար ասենք, որ այդ վիլլան, բաւական մեծ առանձնատունն իր գողտրիկ այգով, գտնուում է օտարերկրեայ դեսպանատներին յատկացուած եւ անվտանգային զոննա համարուող փողոցի վրայ, որտեղ միայն մեր դեսպանութիւնը ունի ամռան շոգ երեկոների, պաշտօնական բացօթեայ ընդունելութիւններ կազմակերպելու հնարաւորութիւն՝ կանաչ գազոնային տարածքում՝ նախանձը շարժելով հարեւանութեամբ գտնուող մեծ, շատ հարուստ երկրների դեսպանութիւնների:

Հայրենասէր մարդ էր Պերճ Թերզեանը: Տարին առնուազն մէկ անգամ, տիկնոջ՝ Սեդայի հետ նա այցելում էր Երեւան եւ հանդիպումներ ունենում տարբեր մտաւորականների հետ, ներկայ լինում համերգների, մշակութային միջոցառումների:

Վերջին անգամ, երբ ոսկրայօղային հիւանդութիւնը խորացած էր նրա մօտ, անուասայլակով, հոգատար եւ ուշադիր իր կողակցի ուղեկցութեամբ նա կրկին այցելեց Երեւան,- աւա՛ղ, վերջին անգամ,- մասնակցեց Պրահայում լոյս տեսնող «Օրեր» ամսագրի 25-ամեակին նուիրուած ԹՄՄիութեան կազմակերպած երեկոյին:

Հարուստ կենսագրութիւն, ամուր յետագիծ թողած մարդ է Պերճ Թերզեանը, կառուցողական ոգով, միշտ հանրօգուտ աշխատանքի հետամուտ: Նա գնաց միանալու այն հոյին, այն փառաւոր սերնդին, որը կերտեց այժմ նոսրացած եզիպտահայ գաղութի մտաւորական,

լրագրողական, գրական, քաղաքական, կուսակցական, բարեգործական փառաւոր անցեալը, ազգային դէմքը:

Հանգիստ իր ոսկորներին:

## ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՒ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Արհեստական Բանականութիւն (ԱԲ, Artificial Intelligence – AI)

Ճրտգ. Համբարձում Մ. Աղպաշեան, Լոս Անճելըս, Դեկտեմբեր 2025, ԳԵՂԱՐԴ

### Ներածութիւն

Գաղտնիք չէ, որ Արհեստական բանականութիւնը, կամ այսպէս կոչուած արհեստական գիտութիւնը, աշխարհի ապագան է: Ան կը խոստանայ ապագային որակական վերածնունդ մարդկային կեանքի բոլոր բնագաւառներուն մէջ: Ահա թէ ինչո՞ւ աշխարհի մեծ մասը կը ձգտի հասնիլ զարգացման հոսանքին ու օգտուիլ այս գիտական յառաջընթացէն՝ իւրաքանչիւրն իր հնարաւորութիւններուն չափով: Հայաստան լուրջ մարտահրաւերներու առջեւ կանգնած է այս ոլորտին մէջ, քանի որ տակաւին կը նկատուի ետ մնացած երկիրներէն մէկը, մինչդեռ ուրիշ երկիրներ, ինչպիսիք են Հնդկաստանը, Թայւանը, Տիւրքիաները եւ Եգիպտոսը, արդէն զգալի յառաջդիմութիւն արձանագրած են: Իսրայէլ շատ առջեւ գացած է Արհեստականբանականութեան ոլորտին մէջ, աւելի շատ, քան եւրոպական երկիրներու մեծ մասը, եւ կարելի է ըսել, թէ երկրորդ տեղը կը զբաղցնէ Ամերիկայէն ու Չինաստանէն ետք:

### Ի՞նչ է Արհեստական բանականութիւնը



Արհեստական բանականութիւնը այսօր դարձած է մեր ժամանակի ամենաազդեցիկ երեւոյթներէն եւ ուժերէն մէկը՝ փոխելով տնտեսութիւնները, հասարակութիւնները եւ կառավարման համակարգերը ամբողջ աշխարհով: Ան մարդկային բանականութեան կեղծում, ձեւացում է մեքենաներու, գործիքներու մէջ, որոնք ծրագրուած եւ նախագծուած են մարդու նման մտածելու եւ գործելու, կատարելով

այնպիսի առաջադրանքներ ու որոշումներ, ինչպէս որ են ուսուցումը եւ հրահանգները, դատողութիւնը եւ որոշումներու կայացումը: ԱԲ-ի շատ պարզ օրինակներէն են ինքնավար մեքենաները, խորհրդատու համակարգերը, բժշկական ախտորոշման կամ անվտանգութեան յառաջադէմ գործիքները, GPS-ը, Google-ը, GPT-ը, նոյնիսկ



բնակարաններու մէջ օգտագործուած պարզ (Ալէքսա-Alexa-ի նման) էլեկտրոնային օգնականները, եւայլն:

### Հայաստանը ո՞ր է այս ոլորտին մէջ

Շատ երկիրներ, ներառեալ մեր հայրենիք Հայաստանը, կը մնան շատ ետ՝ սահմանափակ ենթակառուցուածքներու, նիւթական միջոցներու պակասի եւ նոր արհեստագիտութեան մասին գիտելիքի բացակայութեան պատճառով: Հայաստանի առջեւ կանգնած հիմնական դժուարութիւններն են պետական ռազմավարութեան (strategy) բացակայութիւնը, դրամական միջոցներու պակասէն տառապող գիտահետազօտական հաստատութիւնները, համալսարաններու միջեւ համագործակցութեան շատ սահմանափակութիւնը, մարդկային շատ կարողութիւններու անօգուտ մնալը (այն պարագային, երբ երիտասարդութեան մէջ թաքնուած է մեծ ներուժ): Ասոնք բոլորը միատեղ Հայաստանը կը պահեն Արհեստական բանականութեան ոլորտի յետամնաց երկիրներու խումբին մէջ:

### Ի՞նչ կարելի է ընել

Կրթութեան, հետազօտութեանց եւ մասնագիտական հմտութիւններու զարգացման մէջ ճիշդ ներդրումներով՝ Հայաստան կրնայ իր երիտասարդ սերունդը դարձնել այն շարժիչ ուժը, որ պիտի մասնակցի համաշխարհային թուային տնտեսութեան զարգացման: Աւելի լաւ պիտի ըլլար համագործակցութիւնը սփիւռքահայ մասնագէտներու հետ, որոնք կարող են փոխանցել իրենց գերարդիական գիտելիքները եւ զանոնք աւելցնել տեղական գիտելիքներուն: Արհեստական բանականութեան ներդրումը գիւղատնտեսութեան, առողջապահութեան եւ կրթութեան նման բնագաւառներու մէջ, կրնայ խթանել նորարարութիւնը եւ նպաստել երկարատեւ ու կայուն զարգացման:

Այս բնագաւառին մէջ երիտասարդութեան ուսուցումը հիմնական քայլ է՝ մարդկային ներուժը վերածելու իրական առաջընթացի: ԱԲ-ը իրենց զարգացման ռազմավարութիւններուն մէջ ընդգրկած երկիրները մեծ յառաջընթաց կ'ապրին բոլոր մարզերու մէջ: Սակայն Հայաստան դեռ շատ ետ կը մնայ այս փոփոխութեան ընթացքէն: Թէեւ ունինք մարդկային հզօր ներուժ եւ երիտասարդ, տաղանդաւոր սերունդ, բայց ներդրումներու, ենթակառուցուածքներու եւ տեղեկացուածութեան պակասը կը դանդաղեցնէ յառաջընթացը:



Եթէ կարողանանք օգտագործել մեր մտաւոր ներուժը եւ ուսանողները կրթութեան միջոցով զինել արդի արհեստագիտական գիտելիքներով, մեր երկիրը կրնայ մտնել համաշխարհային թուային տնտեսութեան ոլորտ: Արհեստական բանականութեան նկատմամբ ռազմավարական ու ինտելիտ մօտեցումը կարող է դառնալ կայուն զարգացման եւ

ազգային հզօրացման նոր ուղի:



### Ներկայ դժուարութիւններն ու հնարաւորութիւնները

Հայրենական հասարակութեան մէջ ալ դեռ ցածր է ապագայի համար ԱԲ-ի կարեւոր դերի գիտակցութիւնը: Կրթական ծրագիրներու մէջ բաւական չեն ներառուիր համակարգչային գիտութիւնը, տուեալներու վերլուծութիւնը եւ մեքենայական ուսուցումը: Այնուամենայնիւ, Հայաստանի ժողովրդագրական կառուցուածքը՝ երիտասարդ եւ աշխուժ բնակչութիւնը, մեծ հնարաւորութիւն կը ներկայացնէ: Կրթութեան, մասնագիտական հմտութիւններու զարգացման եւ թուային գրագիտութեան տարածման մէջ ծրագրուած ներդրումները կրնան ստեղծել նոր սերունդի մասնագէտներ, որոնք պիտի առաջնորդեն մեր երկիրը դէպի արհեստագիտական նոր ժամանակաշրջան:

### ԱԲ-ի հնարաւոր նպաստը ազգային զարգացման

Երկրի հիմնական ոլորտներուն մէջ Արհեստական բանականութեան ներգրաւումը կրնայ արագացնել զարգացումը եւ բարելաւել կեանքի որակը:

**Ա.** Գիւղատնտեսութեան մէջ, օրինակ, ԱԲ-ի կիրառումները կրնան օգնել բերքի վերահսկման, ոռոգման համակարգերու բարենպաստ պայմաններու ընտրութեան եւ բերքատուութեան կանխատեսման՝ բարձրացնելով արտադրողականութիւնը եւ նուազեցնելով կորուստները:

**Բ.** Առողջապահութեան մէջ, ԱԲ-ը կրնայ աջակցիլ հիւանդութիւններու վաղ փուլերու մէջ յայտնաբերման, ճշգրիտ ախտորոշման եւ հեռաւոր շրջաններու մէջ բժշկական ծառայութիւններու մատչելիութեան բարելաւման:

**Գ.** Կրթութեան ոլորտին մէջ, խելացի ուսուցման հարթակները կրնան անհատականացնել ուսուցման գործընթացը, լրացնել միջոցներու բացը եւ խթանել ստեղծագործական մտածողութիւնը: ԱԲ-ի խելամիտ եւ բարոյական կիրարկումը կրնայ ոչ միայն խթանել տնտեսական աճը, այլեւ նպաստել հասարակական արդարութեան եւ կայուն զարգացման:

**Դ.** ԱԲ-ը կարող է հօգոր ձեւերով վերափոխել արդիւնաբերութիւնն ու արտադրութիւնը, որակը եւ նորարարութիւնները: ԱԲ-ը կը վերահսկէ մեքենաները, կը նուազեցնէ անսարքութիւնները եւ թանկարժէք վերանորոգումները: Խելացի ռոպոթները կը ստանձնեն վտանգաւոր, կրկնուող կամ ճշգրիտ առաջադրանքներ, կը բարելաւեն արտադրողականութիւնը եւ կայուն որակը: ԱԲ-ը կ'օգնէ ճարտարագէտներուն ստեղծել աւելի լաւ արտադրանքի ուրուագիծ (design), կը նուազեցնէ պաշարներու վատնումը, ծախսերը, եւ՝ շատ աւելին:

### Ի վերջոյ արեւը պիտի ծագի

ԱՄՆ-ի մէջ գործող Firebird.ai արհեստագիտական ընկերութեան, ԱՄՆ-ի Սիմի հովիտի (Simi Valley) մէջ գործող NVIDIA հսկայ ընկերութեան, ՀՀ կառավարութեան եւ Team Group-ի համագործակցութեամբ, 2025-ի յունիսին ներկայացուեցան Հայաստանի մէջ արհեստական բանականութեան նոր գործարանի եւ գերհաշուարկային (supercomputing) կեդրոնի կառուցման ծրագիրները: Կը մասնակցին նաեւ Team Telecom Armenia-ի մայր ընկերութիւնը եւ Աֆէյեան հիմնադրամը:

Նախագիծը գրեթէ 500 միլիոն տոլարի պետական-մասնաւոր գործընկերութիւն է, որ նպատակ ունի կառուցել Հայաստանի մէջ ԱԲ-ի նոր գործարան: Ան պիտի ծառայէ որպէս ԱԲ-ի եւ տուեալներու մշակման տարածաշրջանային կեդրոն: Գործունէութիւնը նախատեսուած է սկսիլ 2026-ին: Ան պիտի օգտագործէ NVIDIA-ի Blackwell Graphics

Processing Unit (GPU)-ի հազարաւոր տարբերակներ, որոնք նախատեսուած են Արհեստական բանականութեան հզօր հաշուարկներու համար: 2025-ի նոյեմբերին Երեւանի մէջ ԱՄՆ-ի դեսպանատունը ողջունեց ամերիկեան Firebird ընկերութեան յայտարարութիւնը Հայաստանի մէջ 500 միլիոն տոլարի նախնական ներդրման վերաբերեալ, որ կ'իրականացուի NVIDIA-ի հետ համագործակցութեամբ:

Ըստ ԱՄՆ-ի Երեւանի դեսպանատան յայտարարութեան, սա՝ բազմամիլիոն տոլարնոց նախագծի սկզբնական փուլն է, որուն նպատակն է տարածաշրջան բերել Արհեստական բանականութեան բարձր արդիւնաւետ գերհաշուարկային ենթակառուցուածքներ: Այս զարգացումը նոր սկիզբ է ԱՄՆ-ի եւ Հայաստանի միջեւ համագործակցութեան՝ գերարդիական արհեստագիտութեան, նորարարութեան եւ ԱԲ-ի ոլորտներուն մէջ:

Հարկ է նշել, որ NVIDIA-ն արհեստագիտական յեղափոխութեան շարժիչ ուժերէն է, որու դրամագլուխը գերազանցեց երկու թրիլիոն տոլարի նշագիծը՝ դառնալով աշխարհի առաջին ընկերութիւնը, որուն արժէքը կը գնահատուի հինգ թրիլիոն տոլար՝ ըստ Forbes-ի: Անոր համահիմնադիրն է Ճենսըն Հուանկը (Jensen Huang): Ան իր աշխատանքային կեանքն սկսած է 15 տարեկանին՝ որպէս աման լուացող, մատուցողի օգնական եւ մատուցող: Քալիֆորնիայի Սիլիքոնեան հովիտի (Silicon Valley) ճարտարագետ դառնալէ ետք, ան սկսած է հիմնել այս ընկերութիւնը: Անկասկած, Հայաստանի մէջ կան հազարաւոր կարող երիտասարդներ, որոնցմէ ամէն մէկը Հուանկէն ոչ պակաս խելացի է: Մեզ ազգովին կը մնայ անոնց նեցուկ կանգնիլ, լաւ ուսում ապահովել անոնց, դաստիարակել զանոնք: Վստահ ենք որ անոնք ջանասիրաբար պիտի աշխատին, հետազօտեն եւ նոր գիտեր յայտնաբերեն: Այդպիսով Հայաստանը պիտի ծաղկի ու յառաջդիմէ, եւ պիտի ունենանք ազգային վերածնունդի հնարաւորութիւն:

ԳԵՂԱՐԴ

## ԻՆՉՈ՞Ւ ՀԱՅ ՄՆԱԼ

7/1/2026

Վեր. Դոկտ. Վահան Յ. Թութիկեան / Տիրբոյթ — Միջիկըն  
«Հայրենիք» – Բացառիկ Դեկտեմբեր 2025



Գաղտնիք մը չէ այլեւս, այլ հանրայայտ իրողութիւն մըն է, որ արտասահմանի մեր բազմաթիւ գաղութներուն մէջ, հայապահպանումը չափազանց դժուար եւ մտահոգիչ խնդիր դարձած է: Օրէ օր կը տկարանան մշակոյթի այն գործօնները, որոնք մեծապէս կը



աստարեն մեր ժողովուրդի ազգապահպանման կենսական գործին: Եւ ասիկա մտահոգութեան լուրջ նիւթ է ամէն գիտակից եւ ազգասէր հայու համար:

Մերք ընդ մերք կը հանդիպինք հայերու—երիտասարդ, չափահաս եւ կամ նոյնիսկ տարեց հայ մարդոց եւ կիներու—որոնք հարց կու տան թէ ինչու ի հարկաւոր է հայ մնալ, երբ իրենց ապրող երկիրներու մէջ կը ջանան պատուաւոր քաղաքացիներ ըլլալ: Երբեմն կը հանդիպինք հայ երիտասարդ-երիտասարդուհիներու, որոնք իրենց աշխարհաքաղաքացի ըլլալու իտեալը չեն կրնար հաշտեցնել իրենց հայ մնալու գաղափարին: Իրենց համար «ընտիր մարդ ըլլալն է կարելորդ»: Կարծես թէ ընտիր մարդ եւ ընտիր հայ ըլլալը՝ խոտոր համեմատական իրականութիւններ ըլլային...:

Կար ժամանակ երբ մեր ազգային ինքնութիւնը եւ մեր հայ ըլլալու հպարտութիւնը խնդրոյ առարկայ չէր մեր ժողովուրդի ջախջախիչ մեծամասնութեան համար, մինչ ներկայիս այնպէս կը թուի թէ անհրաժեշտ է համոզել կարգ մը հայեր թէ՛ ինչու՞ հայ մնալու են: Եթէ ձախողինք պատասխաններ հայթայթել այս էական հարցումին գուցէ մեր ազգապահպանման ջանքերը անիմաստ պիտի դառնան:

Երբեմն կը տարուինք մտածելու թէ՛ եթէ մեր գաւակներն ու թոռները որոշելու ընտրութիւնը ունենային, արդեօք պիտի որոշէին՝ ո՞ր հայ ըլլալ եւ հայ մնալ: Արդեօք մենք իրենց հայթայթած ծ ենք այն բոլոր գործօնները, միջավայրը, միջոցներն ու ազդակները հայ մնալու եւ հայու հպարտութիւնը պատգնելու իրենց հետ՝ այս մոլորակի վրայ՝ ո՞ր որ ալ գտնուին:

Տարիներ առաջ, Գահիրէի մէջ, հովուական պաշտօնավարութեանս շրջանին, կը յիշեմ «Յուսաբեր» օրաթերթի խմբագիր՝ Բեգլար Նաւասարդեանի մէկ վկայութիւնը իր հօր, կուսակցապետ եւ ականաւոր հայ հրապարակագիր Վահան Նաւասարդեանի մասին: Երբ Բեգլար իր հօր՝ Վահանին կը հարցնէր, «Հայրիկ, եթէ դուն վերստին աշխարհ գալու ըլլայիր, ո՞ր ազգին մէջ պիտի փափաքէիր ծնած ըլլալ»: Պատասխանը՝ «Անշուշտ հայ ծնած ըլլալ պիտի ուզէի»: Երբ ես Բեգլարին նոյն հարցումը հարցուցի, ի՞ր ալ պատասխանը եղաւ, «Անվարան՝ ես ալ պիտի փափաքէի հայ ծնած ըլլալ»:

«Ինչու՞ հայ մնալը» կենսական եւ գոյութենական (existential) հարցում մըն է, որուն պատասխանել այնքան ալ դիւրին չէ: Բայց փորձենք սեղմ տողերու մէջ պատասխաններ հայթայթել.-

### 1. Ազգային գորեղ նկարագիրը

Պատճառներէն մէկը որ պիտի ուզէինք հայ մնալ մեր ազգային նկարագիրն է: Մեր ազգային պատմութիւնը տեսակ մը մարտիրոսագրութիւն է: Դարձուցէ՛ք մեր երեքհազարամեայ պատմութեան էջերը եւ հոն դուք պիտի գտնէք արեան պատմութիւն մը. Պատմութիւն մը, որ արձանագրած է բազմաթիւ մահասարսուռ էջեր եւ ազգային աղէտներ: Բայց ի հեճուկս այս ամէնուն, մեր պատմութիւնը արիւնաքամ հայութեան վերանորոգ ոյժին, գոյատեւումի եւ վճռակամութեան հրաշալի պատմութիւնն է: Հայ ազատագրութեան շարժումի մեծ ռահվիրայ Բաֆֆիի խօսքով, «Հայ ազգը այն բազմադարեան «հիդրան» է, որի իւրաքանչիւր ջախջախուած գլխի տեղ բուսնում է նորը եւ աւելի զօրաւորը: Դարերի ընթացքում համաշխարհային դարբնոցի սալին վրայ, հայը այն աստիճան ծեծուեցաւ, տաշուեցաւ ու կոփուեցաւ, որ ստացաւ երկաթի ամրութիւն»:

Այնպէս կը թուի թէ՛ Աստուած օժտեր է մեզ ազգային պողպատեայ նկարագրով: Հայկ Նահապետէն սկսեալ հայ ցեղի ծոցէն դուրս եկած են քաջասիրտ մարդիկ, որոնք աներկիւղ կեանքի պայքարը մղած են, տազնապնէրու պահուն աննկուն կամք ցոյց տուած են, դժուարութիւններու առջեւ չեն ընկրկած, փորձութեան առջեւ չեն թուլցած, այլ դիմադրած են հերոսաբար:

Մենք, ժամանակակից հայերս, օղակն ենք հայ ազգի ադամանդեայ շղթային: Հինաւորց ազգի մը գաւակներն ենք եւ ժառանգորդները փառաւոր անցեալի մը: Մեր ազգի պատմութիւնը լի է նուիրումի եւ մաքառումի սրտառուչ դրուագներով, որոնք կը պարտինք



մեր ազգային նկարագրին:

Անոնք որոնք հարց կու տան թե՛ կ'արժէ՞ հայ մնալ, մտահան ընելու չեն թե՛ պարտական են իրենց անցեալին, իրենց ազգային ժառանգութեան:

Ո՞ր հայը հպարտ պիտի չզգար մեր ազգային սքանչելի նկարագրով: Ո՞ր հայը պիտի ուզէր անփոյթ ժառանգորդը ըլլալ իրեն կտակուած անփոխարինելի ժառանգութեան:

Ո՞ր հայը պիտի ուզէր անտեսել եւ թողլքել տոհմային այն առանձնայատկութիւնները, մտաւոր եւ հոգեւոր այն բոլոր արժէքները, ազգային այն բոլոր առաքինութիւնները, որոնք հայ ազգի գոյութեան, տոկունութեան եւ տեսականութեան սատարեր են: Որչա՛ փ անհեռատես եւ անտրամաբանական ըլլալու է ռեւէ հայ, որչա՛ փ մտքով եւ հոգիով սնանկ ըլլալու է ռեւէ հայորդի՝ թողլքելու հաւատքով ու աղօթքով, քրտինքով ու արիւնով աւանդ թողուած եւ կտակուած փառաւոր ժառանգութիւն մը:

## 2. Հայրենիքը

Հայրենիքը այն շօշափելի եւ տեսանելի իրականութիւնն է, որ կրնայ ամէն գիտակից հայու էութեան մէջ ստեղծել անխառն հպարտութեան զգացում: Հայրենի հողը դիւթական եւ հմայիչ այն հողն է, որ մեր ազգային յոյսերուն, երազներուն ու տեսիլքներուն գումարը կը խտացնէ: Պատմութեան արիւններէն ու աւերներէն ժառանգ մնացած այն պատառ մը հողը, որ Հայաստան կը կոչուի:

Հայրենիքը ամրակոտ կռուանն է հայ ժողովուրդի գոյատեւման եւ յառաջդիմութեան:

Վերաշինուող Հայաստանը մեր բոլորին լուսաւոր եւ անխորտակելի խարխիսն է, հզօր վկայութիւնը մեր ցեղային հանճարի յաւերժական տոկունութեան եւ ապահով գրաւականը մեր գալիքին:

Շուրջ վեց երկար դարեր անհայրենիք մնացող հայութեան երազն էր իր սեփական հողին վրայ կերտել հայ պետականութիւն: Այդ երազը իրականացաւ Մայիս 28, 1918-ին, երբ Հայկական ցեղասպանութենէ ճողոպրած հայ ժողովուրդի մնացորդացը հերոսաբար կերտեց Հայաստանի Ա. Հանրապետութիւնը պատմական Հայաստանի մէկ հողաշերտին վրայ:

Ամէն լի-իրաւ հայու համար հայրենիքը սոսկ որեւէ երկրամաս մը չէ, եւ չի կրնար ըլլալ, այլ արարատեան այն հողամասը որ մեր ցեղի դարաւոր քրտինքով եւ արիւնով մկրտուած է:

Ո՞ր գիտակից հայը հպարտ չզգար դրախտավայր այն հայրենիքին համար, ուր Երեբունիի բլուրէն մինչեւ Ծիծեռնակաբերդի բլուրը՝ ոսկի գծով կը կապէ, կը զօդէ մեր անցեալը մեր ներկային, մեր հնադարեան փառքը՝ մեր վերածնած հայրենի իրականութեան:

Միայն ուժացած հայն է, որ գիտակցաբար եւ կամաւորապէս կտրած նետած է այն ջիղերն ու մկանները, որոնք զինք կապած են իր հայրենի հողին: Ան խփած-գոցած է իր ականջները հայրենիքի ընդերքէն հասնող մայրական ձայնին:

Ո՞ր հայը, ազգային արժանապատուութիւն ունեցող հայ մարդը, հաւատարմութիւն պիտի չտածէր իր արիւնին, իր ցեղային ինքնութեան, իր ժողովուրդի հազարամեայ պատմութեան:

Ո՞ր հայը հաւատարմութիւն ցոյց պիտի չտար իր հայ ապրելու պահանջին եւ այն բոլորը խորհրդանշող ափ մը հողին՝ Հայաստանին:

## 3. Հայ Մշակոյթը

Հայ մշակոյթը ուրիշ կենսական ազդակ մըն է հայ ինքնութիւնը վառ պահելու հայ մարդուն մտքին, սրտին եւ հոգիին մէջ: Մշակոյթը ազգի մը լեզուին, գրականութեան, արուեստներուն, գիտութեան, ապրումներուն, ոգեկան խոյանքներուն, ներկայի իղձերուն եւ ապագայի երազներուն հայելին է:

Հայ մշակոյթը յիշեալ բոլոր տուեալներուն համախառն կուտակումն է: Ան հայ ժողովուրդին կերտած քաղաքակրթութեան չափանիշն է, մեր ազգային գոյատեւման երաշխիքը:

Ո՞ր հայը հպարտ չզգար իր Մուրբ Գրիգոր Լուսաւորիչով եւ մեծանուն Տրդատ Գ. Թագաւորով, որոնք չորրորդ դարու սկզբնաւորութեան Քրիստոնէութիւնը որպէս



պետական կրօն ընդունեցին եւ մեզ օժտեցին առաջին Քրիստոնէայ ազգը ըլլալու պատիւով: Ո՞ր հայը հպարտ եւ յաւէտ երախտապարտ պիտի չզգար իր անմահանուն Ս. Մեսրոպ Մաշտոցով, որ հինգերորդ դարու սկիզբը հայ ազգը օժտեց սեփական գիրերով:

Ո՞ր հայը հպարտ պիտի չզգար իր Ս. Սահակ Պարթեւով եւ իր սուրբ Թարգմանիչներով, որոնք Աստուածաշունչ Մատեանը թարգմանեցին հայերէնի՝ եւ զայն դարձուցին ոչ միայն կրօնական, այլ նաեւ մշակութային օրհնութեան աղբիւրի մը:

Ո՞ր հայը հպարտ չզգար հինգերորդ դարու հանճարեղ մտաւորականներով.- Եղիշէով, Ղազար Փարպեցիով, Մովսէս Խորենացիով, Եզնիկ Կողբացիով, Կորիւնով եւ այլ բազմաթիւ Թարգմանիչներով, որոնք ստեղծեցին Ե. դարու հայ գրականութեան փառապանծ «Ոսկեդարը»:

Ո՞ր հայը հպարտ չզգար մեր Ե. Դարու անմահանուն հերոսներով, մեր Վարդան եւ Վահան Մամիկոնեաններով, մեր Ղեւոնդ Երեցներով եւ Յովսէփ Կաթողիկոսներով, եւ վերջապէս Վարդանանց բազմաթիւ մարտիրոսներով, որոնք «Վասն Կրօնի եւ վասն Հայրենեաց» լոգունքով իրենց գերագոյն զոհողութիւնը ըրին որպէս զի Հայ Քրիստոնէութիւնը պահպանուի Հայաստանի մէջ:

Ո՞ր հայը հպարտ չզգար իր գիտնական Անանիա Շիրակացիով, Ճարտարապետ Տրդատով, իր աստուածաբան Ս. Գրիգոր Նարեկացիով, Ներսէս Շնորհալիով, Ներսէս Լամբրոնացիով, Գրիգոր Տաթեւացիով, Մովսէս Տաթեւացիով, Յակոբ Զուղայեցիով, Մխիթար Աբբայով եւ դեռ ուրիշ բազմաթիւ մտաւորական տիտաններով:

Վերջապէս, ո՞ր հայը հպարտ չզգար իր ոսկեղնիկ լեզուով, իր փառաւոր գրականութեամբ, երգով, Ճարտարապետութեամբ, մանրանկարչութեամբ եւ մշակոյթի այլ սեռերով:

#### 4. Հայ Ընտանիքը

Անվիճելի իրողութիւն մըն է որ մարդկային բոլոր հաստատութեանց մէջ ամենէն վաղեմին ընտանիքն է: Անով սկսած է եւ անով պայմանաւորուած ժողովուրդի մը ճակատագիրը: Ան ազգի մը եւ մարդկային ընկերութեան կառոյցին հիմնաքարն ու մանրանկարն է: Ան լաւագոյն հայելին է ժողովուրդի մը բարոյական իրավիճակին: Խրիմեան Հայրիկ իր կողոպտական երկին՝ «Դրախտի Ընտանիքը» հոյակապ գրքին մէջ շքեղօրէն կը նկարագրէ այն բախտորոշ դերը որ վիճակուած է ընտանիքին.- «Ժողովուրդ մը եթէ յառաջդիմէ՝ իր առաջին քայլը ընտանեկան սրահէն կ'առնէ... եթէ լուսաւորուի՝ իր լոյսը ընտանեկան ճրագէն է... եթէ զօրանայ՝ իր ոյժն ու բազուկը ընտանիքն է... եթէ բարձրանայ՝ իր փառքի տաճարը ընտանիքն է»:

Միւս կողմէ, կը գրէ համբաւաւոր եկեղեցականը. «Ժողովուրդ մը եթէ զեղծանի՝ իր ներքին զեղծմանց սկզբնաւորութիւնը ընտանիքն է... եթէ բարոյական կենդանի կեանք չունի՝ մեռելութիւնը ընտանիքն է... եթէ դէպի կորուստ կը դիմէ՝ ճամբայ բացողը ընտանիքն է»:

Հայ ազգի երեքհազարամեայ պատմութեան մէջ, մեր ազգային գոյատեւման գլխաւոր պատճառներէն մէկն ալ հայ ժողովուրդին ընտանեկան սրբութիւններու հանդէպ բծախնդրութիւնն է: Արա Գեղեցիկի պատմութիւնը հայ կեանքէն առնուած խօսուն դրուագ մըն է, որ կը պատկերացնէ մեր նախահայրերուն ունեցած խորունկ համոզումը ընտանեկան սրբութեանց մասին:

Հայ ընտանիքը յատկանշող որոշ բարեմասնութիւններ կան, որոնք հպարտութիւն կրնան պատճառել ոեւէ մարդու: Ասոնց շարքին կարելի է յիշել արժանապատուութեան գիտակցութիւնը, լրջախոհ եւ պատկառելի վարմունք ունենալը, պարկեշտութիւնը, հիւրասիրութիւնը, խոհեմութիւնը, հաւատարմութիւնը, եւ այլ առաքինութիւններ:

Ո՞ր հայը հպարտ պիտի չզգայ հայ ընտանիքով, մանաւանդ հայ քրիստոնէայ ընտանիքով, որ հիմնաքարն է մեր ազգային կառոյցին եւ հզօր միջնաբերդը մեր գոյութեան:

#### 5. Հայ Եկեղեցին

Հայ եկեղեցին դարեր շարունակ խիստ բախտորոշ ազդեցութիւն ունեցած է հայ ազգի



հոգեւոր, ազգային, քաղաքական, ընտանեկան, ընկերային եւ մշակութային կեանքի վրայ: Ան հայ ժողովուրդը օժտած է որոշ նկարագրով եւ առանձնայատուկ կենցաղով: Ան եղած է ամենէն զօրաւոր ազգակը հայ ազգի քաղաքակրթութեան եւ ստեղծագործ յառաջդիմութեան:


Հայ Եկեղեցին իբրեւ քրիստոնէական ընտիր դաստիարակութիւն ջամբող հաստատութիւն դարեր ամբողջ դարձած է հայ ժողովուրդի մէջ քրիստոնէայ նկարագիր կերտող ուժեղ ազդակ մը: Դարեր շարունակ, ան դարբնած է հայ հոգին՝ Քրիստոսի, Իր առաքեալներուն, հայ սուրբերուն եւ մարտիրոսներուն ոգիով:

Ո՞ր հայը հպարտ պիտի չզգար Հայ Եկեղեցիով, որ աշխարհ մը զոհողութիւններու, սերունդներու քրտինքին, արցունքին ու արեան գնով կտրեր անցեր է պատմական իր լուսաւոր ու հրաշագեղ ճանապարհը եւ կտակեր է մեզի անփոխարինելի ժառանգութիւն մը: Ո՞ր հայը հպարտ պիտի չզգար Հայ Եկեղեցիով որ պատմութեան տառապանքներէն եւ մարտնչումներէն վերապրած հասեր է մեր օրերուն եւ հաւատքով կը նայի ապագային:

**6. Անձնական վկայութեան եւ Կենցաղի Օրինակը**

Վերոյիշեալ հինգ կէտերն ալ համոզիչ պատճառներ են հայու մը՝ հպարտ զգալու իր ազգային ինքնութեան համար: Բայց կայ նաեւ ուրիշ կարեւոր ազդակ մը, որ կրնայ իր բախտորոշ դերը ունենալ հայու մը հայ մնալու որոշումին մէջ: Ատիկա հայօրէն ապրուած կեանքի մը օրինակն է: Չկայ աւելի հզօր ազդեցութիւն քան երբ հայ մը իր խօսքով եւ գործով, կեանքով եւ կենցաղով կենդանի վկայ եւ ներշնչիչ օրինակ կը դառնայ ուրիշ հայու մը: Երբ հայ մարդը իր կեանքով եւ իր հայեցի նկարագրով կը ցոլացնէ հայութեան լաւագոյն արժէքներն ու արժանիքները՝ կրնայ վարակել ուրիշ հայ մը:

Բայց, ի վերջոյ, «ինչո՞ւ հայ մնալ» հարցումին պատասխանը պիտի տրուի ամէն հայու կողմէ: Ամէն հայ մարդ ի՛նքն է որ պիտի որոշէ թէ հայ պիտի մնայ կամ ոչ: Հանրայայտ իրողութիւն է, որ Աստուած մարդուն շնորհած է ընտրելու ազատութիւն: Ընտրութիւն ընել եւ որոշում տալ մարդ արարածին առանձնաշնորհումն է: Անվիճելի իրողութիւն է նաեւ որ Աստուած հայ անհատը հայ ազգին մէջ ստեղծած է հայ ապրելու եւ հայ մնալու համար: Այլապէս, ուրիշ ազգի մը մէջ պիտի ստեղծէր զայն: Հայ ծնելուն մէջ ոչ մէկ հայ ընտրութիւն ունի, բայց հայ ապրելու եւ հայ մնալու համար որոշումը ամէն հայու առանձնաշնորհումն է: Արդ, որչափ ալ համոզիչ ըլլան հայ մնալու պատճառները, վերջին հաշիւով իւրաքանչիւր հայ ի՛նք պիտի որոշէ հայ մնալ կամ ոչ: Ոչ ոք բռնի կերպով կրնայ փոխել իր որոշումը: Մեր մաղթանքն ու աղօթքը այն է, որ ամէն հայ այս արեգակի տակ ուր որ ալ գտնուի, եւ ինչ պարագաներու մէջ, պիտի որոշէ հայ ապրիլ եւ հայ մնալ:



**ԴՈԿՏ. ԵՂԻԿ ԸԵՐԷՃԵԱՆԻ՝ Ս. ՍԱԳԵԼՅԱՆ ԿՈԹՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆԸ**

Համօ Մոսկոֆեան

27/12/2025

Ինչպէս կ'ըսեն «մէկ շունչով», երկու օրուան ընթացքին խորասուզուած ընթերցեցի Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան երկարամեայ



պետական երեսփոխան, ղեկավար ու պատմաբան դոկտ. Եղիկ Ճերեճեանի կոթողային աշխատութիւնը՝ նուիրուած Ս.Գ. Հնչակեան Կուսակցութեան եւ ձախ-ընկերվարական եւ միաժամանակ հայրենասիրական շարժումներու իսկապէս առասպելական ղեկավար դէմք Ս. Սապահ Գիւլեանի մասին (Ստեփանոս Տէր Դանիէլեան): Ինչպէս որ Մեծի Տանն Կիլիկիոյ երջանկայիշատակ կաթողիկոս Բաբգէն Կիլիկեան բնութագրած էր զինք՝ «Ի գուր չէ ըսուած, որ մարդոց կեանքը հակասութիւններու շարք մըն է: «Տեսաբան» Սապահը մէկ հակասութիւն մը եղաւ: Իտէալով, գրիչով մարքսիստ, իսկ կեանքի մէջ, գործի մէջ՝ ազգայնական հայ...»:

Ծնած ըլլալով հայ ժողովուրդի հնագոյն բնակավայրերէն՝ Երեւան նահանգի Նախիջեւան գաւառի Ջահուկ (Ջահրի) ասանը, այս խիզախ եւ հանճարեղ գործիչին ազգային, քաղաքական, կուսակցական, ձախ-ընկերվարական տեսաբանական եւ հրապարագրական գործունէութիւնը տարածուեցաւ այն ժամանակուան ցարական կայսրութեան, Օսմանեան կայսրութեան, իթթիհատական նենգ «սահմանադրական» պետութեան, Պուլկարիոյ եւ Ֆրանսայի, «Մեծ Ալլիոն» բրիտանական կայսրութեան մայրաքաղաք Լոնտոնի, հասնելով մինչեւ Ատլանտեանի արեւմտեան ափերը, Ամերիկայի Միացեալ Նահանգներ: Միշտ ապրելով նիւթական ծանր պայմաններու մէջ, կը հոգայ ոչ միայն իր ընտանիքին, այլեւ հնչակեան մամուլի եւ անոր յեղափոխական պայքարի գործընթացին նիւթական թէ բարոյական միջոցները: Ի՛նքն է որ «Հնչակ»-ն ու «Երիտասարդ Հայաստան»-ը կը դարձնէ ինչպէս օսմանեան Թուրքիոյ եւ «դեմոկրատական» Ամերիկայի, այնպէս ալ պալքաններու եւ ընկերվարական-գաղութատիրական շրջանակներու պայքարի մէջ բզկտուող «ասպետական» Ֆրանսայի լայն շրջանակներուն ծանօթ քաղաքական ամպլոն:

Աշխատութեան մէջ տեղ գտած են շատ կարեւոր նկարագրութիւններ իթթիհատական բորենիներու մասին, որոնք անմեղ հրեշտակներու տեսքով կը փորձէին իրենց քաղաքական-ազգայնամուլական կեղտոտ խաղերու մէջ ներքաշել Ս.Գ. Հնչակեան Կուսակցութիւնը, իր անվախ ղեկավարներէն Ս. Սապահ-Գիւլեանը: Վերջինս, Մեծն Մուրատի հետ, Իթթիհատի Շահգատէ Պաշի կեղրոնական գրասենեակին մէջ կը հանդիպի Թալաաթին եւ Էնվերին (որոնք տակաւին փաշաներ չէին...) հետ: Սապահ-Գիւլեան կու տայ իր առաջին, խորաթափանց տպաւորութիւնները, փաստօրէն գուշակելով այս անմեղ ոչխարներու մորթով ծածկուած ցեղասպաններուն մասին. «Էնվերը մեր վրայ թողուց կնամարդու առաջին տպաւորութիւնը, արցախցիների գործածած կուստօ բառը նրան շատ լաւ էր պատշաճում: Մի մարդ՝ որ գռեհիկ հոգի ունի, շքեղազարդ հանդերձով, սեթեւեթեալ, կնոջական ծեքծեք ձեւերով: Կոտորուքը, նազանքը, դիմացիների ամեն գնով հաճելի երեւնալու ունակութիւնը այդ մարդու մէջ ծայրայեղութեան էր հասել – «Պարսկական մի շէլանչի»:



Յիշեցնենք, որ այդ նոյն ռազմական նախարար Էնվերը, խայտառակ պարտութեամբ, 700.000 օսմանեան բանակի զինուորներ կորսնցուց Սարիղամիշի ճակատամարտին, 1916 թուականին, որմէ ետք կատղած, հրամայեց հայերը ոչնչացնել իբր թէ «ռուսական գործակալ»ներու, ցարական բանակի կողակներուն կողմէ կոխկոտուելէ ետք:

Աւելին, Պոլշեիկեան յեղափոխութենէն յետոյ ղեկավարեց «Պասմաճի»ներու շարժումը Իզպէթիստանի եւ Թիւրքմենիստանի մէջ, եւ իր վախճանին հասաւ, ռուս զօրավար Ֆրունզէի հրամանատարութեան տակ գործող, շուշեցի Յակոբ Մելքումովի ձեռամբ, դժխքի մէջ քաւելով իր մեղքերը...:

Մինչ այդ «պատմական» հանդիպման ընթացքին Էնվեր կը հեռանայ, Սապահ-Գիւլեան կը նկարագրէ արինախում Թալաաթը, որ «պաշտօնապէս» հեռագրեց սկսելու Հայոց ցեղասպանութիւնը: «Թալաաթը շահմար օձ էր, աչքերի բոլորակների վրայ արեան բծեր, պարանոցը կարճ, թուրք պաշտօնէի «կիրթ» ձեւերով, կեղծաւորութիւնը, խորամանկութիւնը, խաբէրայութիւնը քանդակուած էր դէմքի գծերի մէջ: Այդպիսի դէմքեր ամէնից լաւ վկայականն են՝ բնաւորութիւնը որոշող: Խօսում էր գլխահակ աչքերը միշտ վար պահած, շարունակ թարթիչները իրար զարկելով: Խօսքի թելը շարունակելիս՝ նա խօսակցի երեսին էր նայում՝ գաղտագողի, տեսնելու համար թէ ինչ տպաւորութիւն է թողնում իր ասածը... Մի անգարգացած մարդ: Ուղիղ ասած, արհամարհանքս չէի կարողանում պահել երբ այդ մարդը խօսում էր ամենաբարձր խնդիրների մասին»:

Սակայն այս բոլոր իթթիհատական աճպարարութիւնները չեն խաբէր ո՛չ Սապահ-Գիւլեանը եւ ոչ ալ Ս.Դ. Հնչակեան Կուսակցութիւնը, որոնք կը նախընտրեն համագործակցիլ «Իթթիլաֆ»ին հետ: 1912 թուի պալքանեան խայտառակ պատերազմին կրած ծանր պարտութենէն եւ հողերու հսկայական կորուստներէն ետք, «պալատական» յեղաշրջումով, իշխանութիւնը կ'անցնի Իթթիհատի եռապետութեան ձեռքը՝ Էնվեր, Թալաաթ, Ճեմալ: «Կարմիր» եռապետութիւնը կը սկսի երկիրը ղեկավարել Կարմիր սուլթան Համիտին նմանողութեամբ»:

Մէկ խօսքով, Իթթիհատի բռնատիրութեան իշխանութեան գալէն ետք, Սապահ-Գիւլեան խիստ յոռետես կը դառնայ արեւմտահայութեան ճակատագրին հանդէպ, զգալով նախապատրաստող ցեղասպանութիւնը: Անոր մօտ խոր համոզում կը գոյանայ, որ պէտք է ամէն բան ընել այս իշխանութենէն ձերբազատուելու համար: «Կա՛մ մենք պիտի սպաննենք Իթթիհատին, կա՛մ Իթթիհատն է որ մեզի պիտի սպաննի...»: Դժբախտաբար, ստոր մատնութեան պատճառով, ձերբակալուած հնչակեան 20 պայծառ ղեկավարները, նոյնինքն Թալաաթի հրամանագրով, կախաղան կը բարձրացուին, նոյնպէս մահուան

դատապարտուած Սապահ-Գիւլեան կը խուսափի մահուրնէ, արտասահման գտնուելուն համար:

Դոկտ. Եղիկ Ճերէճեանի «Մեծն Մուրատ» (Համբարձում Պոյաճեան), Ս. Վահագն (Գրիգոր Նալպանտեան), Պանդուխտ (Մկրտիչ Մերեան), Ժիրայր (Մարտիրոս Պոյաճեան), Ս.Դ.

Հնչակեան պատմութեան անմահ հերոսներուն յիշատակին նուիրուած աշխատութիւններէն ետք, Սապահ-Գիւլեանի (Ստեփանոս Տէր Դանիէլեան) մասին այս փառաւոր աշխատութիւնը, օգտագործուած հսկայական արխիւներու եւ փաստաթուղթերու քանակով, կը համարուի իր գլուխգործոցը:

## ՏԵՍԱԿԷՏ

### ԱՐՄԵՆԻԶՄԸ ԽՈՐՀՐԴԱՆՇՈՂ ՈՒ ՆԵՐՇՆՉՈՂ «ՈՄԿԵԱՅ ԿԱՄՈՒՐՁ»,

### ԱԶԳԱՅԻՆ-ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍԱԿԱՆ ՕՃԱԽՆԵՐՈՒ ՈՒ ԴԱՐԲՆՈՑՆԵՐՈՒ ԾՆՈՒՆԴՈՎ

Պարոյր Յ. Աղպաշեան



Մօտէն ակնարկ մը ու հետեւողութիւն մը, ոչ-հեռաւոր հայոց պատմութեան վրայ, ինքնին ուսանելի ու պեղելի դպրոց մըն է, որովհետեւ, անկախութենէ զրկուած ամբողջ ժողովուրդ մը, իր գոյութիւնը պահելու համար, ինչպէ՞ս կրնար յարատեւել ու կառչած մնալ իր ծագումին եւ արմատներուն:

Անշուշտ, յատենի Եկեղեցին, միշտ ալ պաշտպանեց, զօրավիգ կանգնեցաւ, անտիրական չձգեց իր հօտը եւ ի պատիւ իր յանդուգն երախտապարտ

ազգանուիրութեան ու հայակերտութեան ճիգերուն, կրցաւ առաւելագոյն կարելիութիւններով, երբեք չզլանալ եւ չանտեսել այն կարիքներն ու հրամայականները, որոնք պարտադիր էին հայ ժողովուրդը «կեր» չդարձնելու այն վիշապներուն ու ճիւղներուն, որոնք միշտ պատրաստ էին զինք բզքտելու եւ յօշոտելու:

Ինչ խօսք որ ի բացակայութեան անկախութեան գործօններուն, հայ ժողովուրդը, միշտ ալ ճգնեցաւ թշնամական որոգայթներէն հեռու մնալու եւ, կարելի վճռակամութեամբ, երբեք չնահանջելու կամ անձնատուր դառնալու շրջապատի դրացիական նկրտումներուն, խոշտանգումներուն ու անկումներուն, իսկ այդ բոլոր փորձերը կամ կազմակերպչականութիւնները, բարեպատեհ առիթներ դարձան, որ հայ ժողովուրդը կարենայ խուսանալ չարիքներէն եւ աղէտներէն:

Բնական է, միամտութիւն է կարծել կամ հաւատալ, թէ նման վերաբերմունքներ, ինքնապաշտպանութեան թէ ինքնօգնութեան կարգերով, կրնային որեւէ ժողովուրդի մը



ապահովութեան «կառք»ը պահել զգօն եւ անվթար, քանի ատոնք բացառուած էին (ու բացառուած են նաեւ այսօր ու... վաղը), բայց, հայ ժողովուրդը այդ դժուարութիւնները կրցաւ յաղթահարել, գերագոյն ջանքերով ու զոհողութիւններով:

Զմոռնա՛լ, որ Մեծն տեսլապաշտին եւ Ուսուցչապետին՝ Ս. Մեսրոպ Մաշտոցի գիրերու գիւտը, այնպիսի հրաշալիք-զէնք մըն էր, որ, ի սկզբանէ, երաշխիք մը դարձաւ հայ ժողովուրդին գոյութեան իրաւունք տալու ու մնալու... անսասան եւ անխախտ, իսկ պատմութիւնը ցոյց տուաւ, որ ան ԻՐԱԻԱՅԻ էր, իր համայնական եւ ազգայնական հիմքերով եւ ապագայական դրոյթներով, որպէսզի ան երբեք «զոհ» չդառնայ այլոց մահացու արկածախնդրութիւններուն:

\*\*\*

Այս արագ «անցում»էն ետք, ինքնին հարց չէ՞ (եղած չէ՞), որ հայութիւնը ինչո՞ւ եւ ինչպէ՞ւ դարձաւ... «եաթաղան»ի սերունդ, երբ իր դէմ լարուեցան օսմանեան-թուրանական ----- ները, հալածանքները, սպանդները, նախճիրները, ապա, տեղահանութիւնները, տարագրութիւններն ու գաղթականութիւնները:

Կա՞ յին ինքնապաշտպանութեան նախաձեռնութիւններ, կազմակերպութիւններ, զինակցութիւններ եւ ուժականութիւններ կամ յեղափոխական եւ ազատագրական գործողութիւններ, հակադարձելու կամ հակազդելու բռնատիրութեանց դահճապետերուն:

Եթէ նոյնիսկ կային նման ընդդիմադիրներ ու հակադիրներ, բայց, ատոնք երբեք ալ բաւարար չէին ուժ ցուցադրելու ու պարտադրելու, որովհետեւ, ամէն ինչով ու ձեւով հայութիւնը կը գտնուէր տկար եւ անզօր պայմաններու մէջ, իսկ նման կարգավիճակով, կարելի չէր պայքարի դրօշ պարզել եւ յաւակնիլ յաղթանակ արձանագրել:

Ո՛չ Սան Սթեֆանոյի, ոչ ալ Պերլինի վեհաժողովները, նուազագոյն նշոյլով, կրցան հայութեան տալ գէթ յոյս մը, որ ան կարենայ իր անկախութեան հասնիլ, ընդհակառակը, բոլոր տուեալները ցոյց տուին, որ հայութեան երազները լոկ ցնորքներ էին եւ ուրիշ... ոչի՛նչ:

Վստահաբար, այս վեհաժողովներու խաբուսիկութիւններէն ու դիւրաբեկութիւններէն յուսահատած, այլապէս ալ՝ նենգապատուած Եւրոպայէն հիասթափուած, Խրիմեան Հայրիկի ու Զօրավար Անդրանիկ Փաշայի յորդորները ու զգուշացումները (այլեւս) չանտեսելով, այլ՝ զիտակցելով այդ իրատեսներուն ու հեռատեսներուն

ճշմարտախօսութիւններուն եւ իրաւախօսութիւններուն գերակայութեան, անհրաժեշտ տեսնուեցաւ դիմել այլ միջոցներու, որոնց հիմնական ելքը պիտի ըլլար, ազգային-գաղափարախօսութեամբ գործելը, սնուցանելը, պատրաստելը ու կազմակերպելը ժողովուրդին, որուն համար կար մէկ ուղի. գաղափարական դաստիարակութիւնը ու գաղափարախօսական դպրոցի ստեղծումը իր անունի հարազատութեամբ, արտայայտութեամբ եւ առաքելութեամբ, զայն կոչելով.

ԱՐՄԵՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Վանն էր, Արմենիզմի օճախը, ծննդաթուականն էր՝ 1885, իսկ ԾՆՈՂՆԵՐԸ կը կոչուէին՝ ԵՐԵՔ Մկրտիչներ (Խրիմեան Հայրիկ, Փորթուգալեան, Աւետիսեան), որոնք հայոց փրկութեան, ազատագրութեան, անկախութեան եւ ինքնիշխանութեան համար, չէին կրնար պատկերացնել այլ ճանապարհ, բացի, ընտրելէ այն արեւելումը, որմէ կարելի պիտի ըլլար հայ ժողովուրդը ձերբագատել գերեվարութենէն, ճորտատիրութենէն ու ստրկատիրութենէն: Այս երեք հզօր մեծութիւններու սկզբնական ու վախճանական նպատակն էր, հայ ժողովուրդի լինելիութեան եւ յաւիտենականութեան փրկարար լաստ մը կազմել ու հիմնել, աննախընթաց գաղափարական դպրոց մը, իր վարդապետութեամբ եւ իմացականութեամբ, փիլիսոփայութեամբ եւ գաղափարախօսութեամբ, որուն էութիւնը ըլլար

Արմենականութեան ծնունդը, իր հայկականութեան արմատներով, աւանդութիւններով, ազգային յատկանշութիւններով եւ, ամենէն հիմնականը, իր լեզուական, մշակութային, ինքնութեան եւ ինքնիշխանութեան ծաղկուն տուեալներով:



Եթէ այս բոլորը հայ ժողովուրդին գերագոյն նպատակներու հանրագումարն էր, իսկ զանոնք ոգեղինացնելը, բացայայտելը եւ իրականացնելը հոգատար կռուաններ, ապա, կը մնար զանոնք տարածել ու ժողովրդականացնել, սրսկելով ու համալրելով Արմենիզմի ոգիով ու սլացքով, բովանդակութեամբ ու պարունակութեամբ, զայն դնելով ու կերտելով ամուր հիմերու վրայ:

Մկրտիչները, այս յուսադրութեամբ, ակնկալութեամբ ու հեռապաշտութեամբ է, որ Արմենիզմը կեանքի կոչեցին, առանց ծայրայեղութեան ու մոլեռանդութեան կիրճերուն ու կիրքերուն մէջ իյնալու, այլ՝ հիմնականօրէն հայ ժողովուրդին՝ հոգեկան, բարոյական, ֆիզիքական եւ յարատեւական գործօնները կենդանի պահելու՝ առողջ, հեզասահ, զգաստ եւ ողջմիտ երթողիի մը ապահովագծումին վրայ:

\*\*\*

Պատմութիւնը կը հարցադրէ, այլեւ՝ հայութիւնը կը մտորէ, երէկ թէ այսօր, երեք Մկրտիչներուն, այնքան փայփայած, երագած ու շարադրած լոզունգները, որոնց համար, ամբողջ համազգային ու համահայկական հեռանկարներ մշակած էին, արդեօք զանոնք ինչպէ՛ս պիտի փոխանցէին, ձեւաւորէին ու կարգաւորէին, որպէսզի ան ոչ միայն մնար պատնէշի վրայ, այլեւ, իր ազգային կենդանութեան ու կենսունակութեան բոլոր բարենիշները պահէր յարաճուն արտադրողականութեանց եւ յաջորդականութեանց ճանապարհին վրայ:

Արմենիզմի ծնունդն ու հիմնումը, կերտումն ու ստեղծումը, իր ծրագրային-նպատակային, կանոնագրական-օրէնսդրական հրապարակումով ու հրատարակումով, դարձան հայ ժողովուրդին համար կողմնացուցային-ժամացուցային աղբիւրներ, անոնց ուղեցոյցներով լիցքատրուելու եւ առաջնորդուելու, նաեւ՝ լուսաւորելու ու պատուաստելու հայ ժողովուրդը:

Հո՛ւս էին Արմենիզմականներու դերն ու յղացքը, հայ ժողովուրդը զինելու ու կոփելու, կոկելու ու հարթելու, դէպի այն ուղիներն ու թիրախները, որոնք կրնան ապահովագրութեան ու խաղաղագրութեան երաշխիքներ տալ կամ ժառանգել յետագայ սերունդներուն:

Արմենական կուսակցութիւնը, որպէս առաջին քաղաքական կազմակերպութիւն, իր ուղղախօսութեամբ, արեւելագիտութեամբ, ազգակազմութեամբ եւ աշխարհադրութեամբ, անշուշտ, կը հետապնդէր այնպիսի ճակատային մարտահրաւերներ, որոնք հայ ժողովուրդին համար, կեանքի ու կենաց պահանջքներ ու հրամայականներ էին:

Արմենականները կը հաւատային ու կը հետեւէին ժողովրդավարական սկզբունքներով ու քայլերով հասնելու հայկական համայնական շահերուն եւ իրաւունքներուն, որովհետեւ, կառչած ըլլալով հանդերձ իրենց դատին, չէին տեսներ կամ չէին ընդունիր այլ տարբերակներով հանդէս գալը:

Գալիք պատմութիւնը, իր զարգացումներով ու հոլովոյթներով, արդէն ցոյց տուաւ, որ Արմենական կուսակցութիւնը, ԱՆՓՈԽԱՐԻՆԵԼԻ եւ ԱՆԿՐԿՆԵԼԻ ընթացքի մը մէջ յայտնուեցաւ, իր ամբողջականութեամբ եւ լիարժէքութեամբ, դառնալով գաղափարական հիմնաքարի ու կուսակցականամէտութեան ու վեմականութեան դրօշակակիր մը:

\*\*\*

Որքան բախտաւորութիւն ու բարեբերութիւն պէտք է ըլլալ եւ նկատուիլ, որ այս հրաշալի ու նորափթիթ կազմակերպութիւնը ծնունդ առնելով, ունեցաւ իր «երեխան»ները, հոգ չէ, թէ անոնք ըլլային տարբեր պիտակներով, բայց, անպայմանօրէն, նոյն պահանջարկներով, ծառայելու ու նուիրուելու հայութեան եւ անոր պահանջատիրութեանց:

Այդուհանդերձ, Արմենիզմի անմիջականութեան հարազատ ծնունդը հանդիսացաւ.

ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ



1 Հոկտեմբեր 1921ի վերամկրտումով ու վերաշնորհութեամբ, որ այդ թուականէն ի վեր դարձաւ, բուն հայրենասիրութեան, անշէղ հայապահպանութեան, անտեղիտալի հայաստանամտութեան, գաղափարական դաստիարակութեան, ազգային կերտուածութեան ու մարդկային կազմաւորութեան շքեղագոյն պալատներէն մէկը: Արմենիզմին տուած դաստիարակչական, ազգայնական, գաղափարական, կուսակցական, հայրենասիրական, համայնքային, գաղութային ու սփիւռքային կեանքին մէջ, անոր ժառանգորդը, Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը, միշտ ալ մնաց յառաջատար եւ յառաջադէմ դրօշակակիրներէն, որովհետեւ, ան երբեք հետամուտ չեղաւ միայն իր ազատական գաղափարախօսութեան գործընթացներէն կառչած մնալուն, առանց սակայն, դաւաճանելու իր ազգային, իրաւատիրական, պահանջատիրական եւ ազատագրական հետապնդումներուն, գործելով այն տարբերակներով, որոնցմով, ան կը գտնէր յարմարագոյն ընտրանքներ ու կարելիութիւններ:

Արմենիզմը, իր կուսակցականութեամբ ու կուսակցաշէնութեամբ, աներկբայօրէ՛ն, խարիսխը դրաւ հայ միտքի ու գաղափարականութեան, մտածողութեան ու դատողութեան արժեւորումներու շղաղշի մը, որուն ջահակիրը դարձաւ, նոյնիսկ՝ Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը, իր տարիներու վաստակով, արդարաբաշխ ներդրումներով ու հարուստ գօտեպնդումներով:

Այսօրուան չափանիշներով, երէկ եւ ներկայիս ճիշդ է, ան անցաւ եւ ինչ որ տեղ կ'անցնի ելեւէջային շարժերով, որոնք՝ ո՛չ գաղափարական են, ո՛չ քաղաքական, ո՛չ ալ կուսակցական, այլ՝ պարզապէս անձնական-կամայական, եսասիրական-ինքնակոչական, փառամոլական-հատուածամոլական, չէ՛ն կրնար դառնալ ՌԱԿի այն ժառանգորդները, որոնք՝ կրնան ինքզինքնին նկատել անոր ազնիւ, հաւատաւոր ու նուիրեալ զինուորագրեալներէն: Ո՛չ մէկ պարագայի:

Արմենիզմէն՝ Ռամկավարիզմ, Արմենականէն՝ Ռամկավարութիւն, մօտիկութեան թէ հեռաւորութեան չափանիշներով, հսկայ տարբերութիւն մը չկայ, բայց, կայ բացարձակ ճշմարտութիւն մը, որ Արմենականը եւ Ազատական ռամկավարը, զիրար առընչող, կապող ու գուգորդող բոնցքային ամբողջութիւն մըն են:

Ռամկավարութիւնը ու ժողովրդավարութիւնը դուրս գալու համար, իրենց այժմու որոշ տերեւաթափութիւններէն ու ներկուսակցական կրաւորականութիւններէն եւ, առհասարակ, բաժանումներէն ու խլրտումներէն, պարտին ՀԱՄԱՀՈՒՆՉ ԳԻՏԱԿՅՈՒԹԵԱՄԲ, թօթափուիլ ու մաքրագտուիլ, քանի՛ ո՛չ երէկ, ո՛չ այսօր, ոչ ալ վաղը այդ ոճով եւ եղանակով, կարելի չէ գայն արդիւնաբեր, կենսունակ եւ իր անունին, դրօշին ու վարկին համապատասխան վայելչութեամբ ու զօրութեամբ ինքզինք կանգուն պահել:

ԿԵՆԴԱՆԱՑՆԵ՛Լ Արմենիզմը, իր պայծառատեսութեամբ, գունազէղութեամբ ու համալրութեամբ, իր լիարժէք լուսաւորութեամբ, ՎԵՐԱԴԱՐՁՆԵ՛Լ՝ Ռամկավարութիւնը, իր խոհուն հիմնադիրներու, ղեկավարներու եւ առաջնորդներու գաղափարաշունչ, գաղափարատես ու գաղափարաշէն ակունքներուն ու տեսիլքներուն, որպէսզի ՀԱՅՐ Արմենիզմը հանգիստ ննջէ, իսկ ԺԱՌԱՆԳՈՐԴ ՌԱԿը վերագտնէ իր պանծալի տեղն ու դերը:

2026ը թող ըլլան Արմենականութեան 140ամեակի ու Ռամկավարութեան 105ամեակի տարեդարձներ եւ մեկնակէտեր, որոնք, ինչպէս միշտ, փառք ու պատիւ կը պարգևեն իրենց ժողովուրդին ու հայրենքին:

(Պէլրութ)

**ԿԱՅԷ՛Ն , ՈՒ՞Ր Է ԵՂԲԱՅՐԴ**



## ԱՀԱՐՈՆ ՇԽՐՏՏՄԵԱՆ

Տարին կը փակուի լուռ, բայց ո՛չ խաղաղ: Օրացոյցի վերջին օրը չի նշանակեր խղճի էջին փակումը: Մարդկութիւնը դարձեալ կեցած է անտես հայելիի մը դիմաց, ուր պիտի տեսնէ ոչ թէ իր յաղթանակներուն փայլը, այլ խուսափումներուն ստուերը, լռած պարտականութիւնները, կիսատ մնացած խոստումները:

Եւ այդ հայելիին մէջէն կը հնչէ սովորական, բայց երբեք չմաշող հարցում մը՝ «Կայե՛ն, ու՞ր է եղբայրդ»:

Այս հարցումը ուղղուած չէ միայն առասպելական անցեալին կամ աստուածաշնչեան կերպարի մը: Ան ուղղուած է ժամանակակից աշխարհին՝ պետութիւններուն, գաղափարախօսներուն, ուժային կեդրոններուն եւ ի վերջոյ՝ իրաքանչիւր մարդու, որ կը տեսնէ անիրաւութիւնը, բայց կը նախընտրէ լռութիւնը կամ խուսափումի վերածուած անտարբերութիւնը: Եւ թերեւս ուղղուած է այն անհատին, որ գիշեր մը, լռութեան մէջ, ինքն իրեն պիտի հարցնէ. «Ես ի՞նչ ըրի, երբ տեսայ անարդարութիւնը, եւ ի՞նչը ընտրեցի չընել»:

Քսանմէկերորդ դարուն ատելութիւնը այլեւս անհատական զգացում չէ. ան համակարգուած է, օրինականացուած է երբեմն ալ՝ արմատաւորուած: Մարդը դադրած է նպատակ ըլլալէ եւ գործիքի վերածուած է: Վիճակագրութեան մէջ դասաւորուած, թիւի, կորուստի կամ «կողմնակի վնասի» վերածուած:

Պատերազմները կը բռնկին ոչ միայն տարածքի կամ անվտանգութեան պատրուակով, այլ բնական հարստութիւններու՝ նաւթի, քարիւղի, ջուրի, հազուագիւտ մետաղներու եւ ռազմավարական ազդեցութեան գօտիներ նուաճելու պատճառով: Այս արիւնտոտ հաշիւները կը ծածկուին վեհ ու բարեհունչ բառերով՝ ժողովրդավարութիւն, ազատութիւն, կայունութիւն:

Իրականութիւնը բոլորովին այլ պատկեր կը ներկայացնէ. քաղաքներ կը քանդուին, անմեղներ կը կոտորուին, ընտանիքներ կը ցրուին, ժողովուրդներ կը տեղահանուին: Մակայն քաղաքական սեղաններուն վրայ միայն շահեր եւ ազդեցութեան գօտիներ կը քննարկուին: Մարդկային արժանապատուութիւնը բանակցութիւններու սեղաններէն դուրս կը շարտուի, իբրեւ խանգարիչ ճշմարտութիւն: Դատապարտում՝ առանց պատիժի, խօսք՝ առանց պատասխանատուութեան: Խօսք, միայն՝ խօսք:

Մեր ժամանակներուն ամենախոր խոցերէն մէկը երկակի չափանիշն է: Աշխարհը այլեւս չի չափուիր արդարութեան չափանիշով, այլ՝ օգտակարութեան եւ անօգուտի տրամաբանութեամբ: Կան ժողովուրդներ, որոնց ցաւը համաշխարհային ցասումի եւ համերաշխութեան առիթ կը դառնայ, բարձրախօսներով կը լսուի, եւ կան ժողովուրդներ, որոնց ողբը կը խեղդուի լռութեան եւ մոռացութեան մէջ իբրեւ անտեսանելի վերք: Միջազգային օրէնքը երբեմն կը ներկայացուի իբրեւ անսակարկելի սկզբունք, յաճախ՝ իբրեւ ճկուն գործիք: Այս ընտրովի արդարութիւնը կը խարխալէ ոչ միայն քաղաքական համակարգերը, այլ նաեւ մարդու վստահութիւնը մարդու, պետութեան եւ միջազգային կառոյցներու հանդէպ:

Լռութիւնը կը դառնայ ոճիքի լուռ գործընկեր: Ան կը խորացնէ պատերազմները, ակերը, կոտորածները, կը քաջալերէ բռնութիւնը եւ կը սպաննէ յոյսը: Բայց լռութիւնը չի կրնար յաւերժ խեղդել մարդկային խղճին կանչը, այնքան ատեն որ մարդը տակաւին կը լսէ իր խղճին կանչը: Լարուած այս աշխարհին մէջ Կայէնի հարցումը պիտի շարունակէ արձագանգել իբրեւ խղճի անխուսափելի դատաստան:

Գիտակցուած լռութիւնը նոյնքան ծանրակշիռ մեղսակցութիւն է, որքան ոճիքը:

Այս տարին, ակելի քան նախորդ տարիներ, ցոյց տուաւ, թէ որքան փխրուն հաւասարակշռութիւն կը պահպանէ մեր մոլորակը: Կենսոլորտային աղէտները դարձած են մեր օրերու գլխաւոր լուրերէն, մեր առօրեան մաշեցնող իրականութիւն:



Մինչ մարդը կը պայքարի մարդու դէմ, երկրագունդը նոյնպէս կը տառապի մարդու չարիքէն: Դէպի երկինք արտանետուող ապօրէն կազերը եւ քիմիական արտածումները վտանգաւոր ներագդեցութիւն կ'ունենան երկրագունդի հաւասարակշռութեան վրայ: Բնութիւնը սկսած է ետ կանչել իր խախտուած իրաւունք: Սառադաշտերը կը հալին, ովկիանոսներու, ծովերու, գետերու մակարդակը կը բարձրանայ: Ջրհեղեղները դարձած են սովորական, նոյնպէս ալ երաշտները: Կլիմայական աղէտները կը բազմապատկուին իբրեւ խղճի ահագանգ:

Այսուհանդերձ, համաշխարհային տնտեսութիւնը դժուարութեամբ կը հրաժարի անխաճիմի չարաշահումէն: Կանաչապատումի խօսոյթը կը մնայ հոշակագիրներու մէջ, գործնական քայլերը կը յետաձգուին: Ապագան կը գոհուի ներկայի հաշտոյն:

Մարդկութիւնը կը նմանի դեկէ գուրկ, սուրացող նաւու մը: Ան կը տեսնէ վտանգը, բայց կը ձեւացնէ չտեսնել եւ կը շարունակէ սուրալ փոթորկոտ ծովու ալիքներուն դէմ: Հարցումը այլեւս այն չէ, ի՞նչ կրնանք շահիլ այսօր, այլ՝ ի՞նչ պիտի կորսնցնենք վաղը, եթէ շարունակենք այս կործանարար ընթացքը:

Արհեստագիտութիւնը կը զարգանայ սրընթաց, գրեթէ առանց դադարի: Մեքենաները, մարդանման համակարգերը եւ արհեստագիտական բանականութիւնը կը մօտենան սահմանի մը, ուր մարդը պիտի փոխարինուի ոչ միայն ֆիզիքական աշխատանքին մէջ, այլեւ մտածողութեան որոշ ոլորտներու:

Ի՞նչ պիտի ըլլայ մարդու արժէքը, երբ ան դառնայ միայն գործառոյթ, միայն թիւ, միայն արտադրողական միաւոր:

Արհեստագիտութիւնը կրնայ ծառայել մարդուն, բայց երբ ան խզուի բարոյական ուղեցոյցէն, կրնայ նաեւ իշխել մարդուն վրայ: Առանց խղճի, գիտութիւնը կը դառնայ կոյր ուժ:

Մինչ աշխարհը կը խճճուի շահերու, արագութեան եւ ուժի մրցավազքին մէջ, փիլիսոփայական հիմնահարց մը կը մնայ անփոփոխ. մարդ արարածը ի՞նչ պատասխանատուութիւն կը կրէ իր գոյութեան համար: Մարդը միայն ապրելու, շահելու կամ յաղթելու համար չէ ստեղծուած: Ան կոչուած է պատասխան տալու իր արարքներուն համար՝ ոչ միայն օրէնքի, այլ խղճի առջեւ:

Մարդը մարդ կը դառնայ միայն այն ատեն, երբ ընդունի, որ պատասխանատու կը մնայ մէկ ուրիշի կեանքին եւ արժանապատուութեան: Երբ այս գիտակցութիւնը կորսուի, մարդը կը վերածուի գործիքի, իսկ աշխարհը՝ պայքարի դաշտի:

Կայէնի հարցումը այս իմաստով ուղղուած է իւրաքանչիւր սերունդի՝ իբրեւ զգուշացում, որ առանց պատասխանատուութեան ազատութիւնը կը դառնայ բռնութիւն, իսկ զարգացումը եւ յառաջդիմութիւնը՝ դատարկ փառասիրութիւն:

Այս բոլորին մէջ ամենախոր հարցումը կը մնայ անփոփոխ. ու՞ր մնաց մարդը իր բարոյական կոչումով: Աստուծոյ ստեղծած մարդը կոչուած էր եղբայր ըլլալու՝ բարոյական ու մարդկային իմաստով, ոչ թէ արհեստական կամ շահախնդիր եղբայրութիւններու տրամաբանութեան մէջ: Պահպանելու արարչութիւնը, ոչ թէ սպառելու զայն:

Երբ Կայէն պատասխանեց՝ «Ես իմ եղբորս պահապանն եմ», մարդկութիւնը այսօր նոյն հարցականով կը փորձէ արդարացնել իր անտարբերութիւնը: Բայց պատմութիւնը կը վկայէ, որ այս հարցականը երբեք չի մնար անպատասխան եւ միշտ կը վերածուի դատավճիռի: :

Այս համաշխարհային խառնակութեան մէջ Հայաստանը կանգնած է ոչ միայն քաղաքական, այլ նաեւ բարոյական խաչմերուկներու առջեւ: Տարին կը փակուի ներքին լարուածութիւններով, անվստահութեան եւ այնպիսի քաղաքական մօտեցումներով, ուր յաղթանակ կը ներկայացուի պարտութիւնը, նահանջը՝ իրապաշտութիւն: Սակայն կան հարցեր, որոնցմէ զիջիլը խաղաղութիւն չէ, այլ ինքնահրաժարում՝ արժանապատուութեան գնով:



Հայ ժողովուրդը չի կրնար իր պատմական եւ քաղաքական պահանջներէն հրաժարիլ: Յեղասպանութեան ճանաչումը, արդարութեան վերականգնումը եւ պատմական ճշմարտութեան պաշտպանութիւնը սակարկելի հարցեր չեն սեղանի վրայ: Անոնք մեր ազգային արժանապատուութեան դրոյթներն են:

Արցախահայութեան տունդարձի իրաւունքը ենթակայ չէ քաղաքական յարմարաւէտութեան: Արցախի բնիկ հայ բնակչութեան վերադարձը իր պատմական հողերը կը մնայ համազգային պահանջ: Առանց այդ, խաղաղութիւնը կը մնայ թղթային եւ ժամանակաւոր:

Հայաստանի «եղբայրը» ոչ միայն իր սահմաններուն մէջ ապրող քաղաքացին է, այլ նաեւ բռնագաղթուած, ճնշուած եւ անիրաւուած հայր: Այս եղբօր հանդէպ պատասխանատուութիւնը չի կրնար մոռցուիլ խաղաղութեան կամ հաշտութեան անունով: Տարեվերջը հաշուետուութեան պահ է: Բայց այս հաշուետուութիւնը միայն անցեալին չի վերաբերիր. ան ուղղուած է ապագային: Նոր Տարին թիւ մը չէ օրացոյցի վրայ, այլ հնարաւորութիւն մը մարդ մնալու աշխարհի մը մէջ, որ սկսած է մոռնալ իր աստուածատուր կոչումը:

Միրելի՛ ընթերցող, այս հարցումը ուղղուած է նաեւ քեզի եւ տողերը գրողին. երբ անիրաւութիւնը կը կանգնի մեր դռան առջեւ, լռե՛լ պիտի նախընտրենք, թե՛ Աբելը պահապանել: Երբ մեզմէ կը պահանջեն մոռնալ, զիջիլ, հրաժարիլ, պիտի յանդգնի՞նք ըսել՝ ոչ:

Նոր Տարին թող չըլլայ միայն նոր սկիզբ, այլ նոր պատասխանատուութիւն: Թող մեր խօսքը զուգորդուի քայլով, մեր յիշողութիւնը՝ արժանապատուութեամբ, իսկ մեր յոյսը՝ արթուն խղճով:

Տարեվերջը հաշուետուութեան պահ է: Ոչ միայն տնտեսութեան կամ քաղաքականութեան, այլ՝ խղճի: Աշխարհը, պետութիւնները եւ անհատները պարտաւոր են պատասխան տալ նոյն պարզ, բայց անեղ հարցումին՝

Կայե՛ն, ու՛ր է եղբայրդ:

Այս հարցումը կը պահանջէ աւելի քան խօսք: Ան կը պահանջէ կեցուածք, դիրքորոշում, քայլ, զոհողութիւն եւ բարոյական խիզախութիւն: Առանց այդ, Նոր Տարին պիտի չըլլայ նոր սկիզբ, այլ միայն հին սխալներու շարունակութիւն:

Եթէ մարդը չվերադառնայ զինք արարող տիպարին, եթէ քաղաքականութիւնը չվերադառնայ իր ծառայողական էութեան, եթէ գիտութիւնն ու զարգացումը չհնազանդին բարոյականութեան, մարդկութիւնը հետզհետէ պիտի կորսնցնէ իր ինքնութիւնը, ուր մնաց եղբայրը...:

Եւ մինչ աշխարհը կը պատրաստուի տօնական ուրախութեան, թող մեր ներաշխարհին մէջ արթուն մնայ այն հարցումը որ մարդուն մարդ կը պահէ:

Քանի տակաւին այս հարցումը կը հնչէ, մարդկութիւնը տակաւին կ'ապրի, պատմութիւնը չէ փակուած, եւ յոյսը ամբողջովին չէ մարած: Կայե՛ն, ու՛ր է եղբայրդ:

29/12/2025

## ՍՓԻՒՔԻ ԱՆՓԱՌՈՒՆԱԿ ՎԻՃԱԿԸ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՆԸ

Դոկտ. Մինաս Գոճայեան, Լոս Անճելոս ԳԵՂԱՐԴ



Մփիւռքի դասական սահմանումը մօտաւորապէս այսպիսին էր.«Հայոց Յեղասպանութենէն ետք տարագիր հայութեան մնացորդացը պատմական հայրենիքի սահմաններէն դուրս»: Ըստ այս սահմանումին Հայաստանի Առաջին Հանրապետութեան, Խորհրդային Հայաստանի եւ Խորհրդային Միութեան տարածքին հաստատուած հայութիւնը դուրս կը մնային եւ մաս չէին կազմեր **դասական** սփիւռքին : Կարգ մը պատմաբաններու կողմէ իրանահայութիւնն ու պոլսահայութիւնը նոյնպէս դուրս կը մնային այս սահմանումէն:

Մփիւռքի հայութիւնը զգալիօրէն բազմապատկուեցաւ Յեղասպանութեան հետեւանքով՝ հիմնականին մէջ ներառելով Միջին Արեւելքի եւ միւս ցամաքամասերու հայութիւնը: Կը փորձուինք համեմատութիւն մը կատարել արեւելեան եւ արեւմտեան սփիւռքներու միջեւ եւ անմիջապէս կը նկատենք հիմնական տարբերութիւն մը՝ մինչ Միջին Արեւելքի հայազաղութները երկար ատեն դիմացան՝ պայքարելով ձուլման դէմ՝ պահպանելով ազգային դիմագիծը, արեւմտեան երկիրներու գաղութներու մէջ, հակառակ թափուած ճիգերուն , մարեցան ազգային գիտակցութիւնն ու հայեցի ոգին: Հայերէնը զգալիօրէն իր տեղը զիջեցաւ տեղական բարբերուն, տիրապետեց տեղոյն լեզուն, հատուկէնս բացուած համեստ դպրոցները գոցեցին իրենց դուռերը: Պատահական չէ որ 1920-ական թուականներուն գրուեցաւ Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» ուշագրաւ վէպը:

Նահանջի դէմ իրենց ճիգերը չխնայեցին հայկական հիմնարկները՝ եկեղեցին, քաղաքական կուսակցութիւններն ու անոնց հովանաւորած մշակութային միութիւններն ու կազմակերպութիւնները: Այսօր Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին, Հայ կաթողիկէ եւ Աւետարանական եկեղեցիները **իրենց կարելին** կընեն հայապահպանութեան գծով:

**Ո՞ր է արդիւնքը թափուած ճիգերուն:**



Հարցեր կը ծագին միտքիս մէջ.

- ո՞ր է հայ երիտասարդութիւնը, որուն թիւը արհամարհելի չէ յատկապէս հայահոծ Լոս Անճելըսի եւ շրջակայ քաղաքներու մէջ.

- ինչո՞ւ 24-45 տարեկան երիտասարդութիւնը ներկայ չի գտնուիր զանազան միութիւններու կողմէ կազմակերպուած դասախօսական (մշակութային եւ քաղաքական) ձեռնարկներուն.

- ինչո՞ւ մեր նոր սերունդները կը խուսափին ձեռնարկներու մասնակցութենէն...: Դեռ կարելի է երկարել նման հարցումներու շարքը:

Մեր ուսումնասիրութիւններն ու հարցումները, որոնք ուղղուած էին շրջանակիս մէջ գտնուող երիտասարդներուն՝ տուած են հետեւեալ արդիւնքները:

Ստացած եմ այսպիսի պատասխաններ, որոնց բացարձակ մեծամասնութիւնը գրուած է **անզլերէն** լեզուով... Եզրակացութիւնը միանշանակ է...

### **Ահաւասիկ կարգ մը պատասխաններ.**

-Ես քաղաքականութեամբ չեմ զբաղիր, քաղաքական եւ կուսակցական նիւթերը չեն հետաքրքրեր զիս:

բ.- Միշտ նոյն մարդիկը կը բանախօսեն:

գ.- Չանձրացուցիչ է եւ ժամերով կը խօսին:

.դ.- Հաճելի չեն (It's not fun.):

ե.- «Ծանր» կը խօսին, երկար նախադասութիւններ կը գործածեն:

զ.- Ես հայերէն չեմ գիտեր կամ հայերէնս տկար է: «պէրութահայերէն» (արեւմտահայերէն) չեմ հասկանում», շատ օտար բառեր (ռուսերէն) կը խառնեն:

է.- դասերովս կամ գործովս շատ զբաղած եմ եւ գլուխս քերելու ժամանակ չունիմ:

ը.- Միշտ ցեղասպանութեան մասին կը խօսին:

թ.- Հաճելի կամ մեզ հետաքրքրող նիւթերու մասին չեն խօսիր...

Փորձենք մտորել այս պատճառաբանութիւններուն» շուրջ:

Նախ՝ զարմացած չեմ տրուած պատասխաններէն, քանի որ լաւ ճանչցած եմ երիտասարդութիւնը մանկավարժութեամբ զբաղած ըլլալու բերումով:

Կ'արժէ այս մասին մտածել եւ խորհրդածել: Փաստ է որ մեր երիտասարդութիւնը քաջատէղեակ է ժամանակակից հաղորդակցութեանց միջոցներուն եւ մատներու ճապով շարժումներով կրնայ տեղեկութիւններ քաղել զինք հետաքրքրող նիւթերու մասին: **Հետեւաբար պէտք է մտածել այս առաւելութենէն առաւել չափով օգտուիլ՝ մանաւանդ որ**



**Արհեստական Բանականութիւնը (ԱԲ-ԱԻ) կը յառաջանայ ու կը խորանայ քառասմբակ կերպով:** Ուրեմն, այս հանգրուանին կը մտածեմ արդեօ՞ք նախընտրելի չէ որ մենք՝ երեցներս մօտենանք երիտասարդութեան, հրաւիրենք զանոնք երկխօսութեան, լսենք զիրենք եւ իրենց պրիսմակով նայինք մեր շուրջը եւ ապագային:

Կար ժամանակ, երբ մեր մեծերը, ինչպէս մեր պահպանողական ծնողները, կը փորձէին պարտադրել իրենց ւսանողական տեսակետները: Նոյն երեւոյթը համատարած էր նաեւ դպրոցներուն եւ ազգային-հասարակական-քաղաքական դաշտին մէջ: Յաճախ կը լսէինք. «Դուք տակաւին երեխայ էք (*չոճուխ*), ձեր խելքը չի հասնիր այս բաներուն...» եւ նման *պապայական կամ տէտէական* արտայայտութիւններ:

Կարժէ մտածել այն մասին թէ ինչպէ՞ս կրնանք նախ մենք զմեզ փոխել, վերանայիլ մեր մօտեցումները, ուղղակի դիմել իրենց եւ յստակօրէն ըսել թէ մենք մեր տարիքը առած ենք այլեւս եւ նոր գաղթավայրերու մէջ եւ նոր պայմաններու տակ իրե՛նք՝ երիտասարդները պէտք է ստանձնեն սփիւռքի նաւապետութիւնը:

Այս առնչութեամբ իմ գրոյցներս 25-45 տարեկաններու հետ ցոյց տուած են թէ կարելի է ընդհանուր հասկացողութեան գալ: Այս ալ աւելցնեմ թէ մէկ անգամէն հոծ բազմութեամբ գործակիցներ պիտի չունենանք, բայց պէտք է սկսիլ, որովհետեւ եւս 15-20 տարի եւ մենք պիտի չունենանք այս արծաթեայ առիթը:

Կառաջարկեմ դիտել Փրոֆ. Հրաչ Զիլինկիրեանի տեսերիզը:

<https://youtu.be/PXhKkspRHHs?si=bmqWfZfTAUksf7gj>

**ՏՕՆԸ Կ'ԱՆՑՆԻ, ԿԵՂԾԻՔԸ ԿԸ ՄՆԱՅ. «ՆԵՐԷ՛ ՄԵՁ, ՏԷ՛Ր, ՈՐՈՎԶԵՏԵԻ ԶԵՆՔ ԳԻՏԵՐ, ԹԷ ԻՆՉ Կ'ԸՆԵՆՔ»**



ԱՐԱՅԻԿ ՄԿՐՏՈՒՄԵԱՆ

13/1/2026



*«Ահա կոյսը պիտի յղանայ ու որդի պիտի ծնանի, անոր անունը Էմմանուէլ պիտի կոչեն, որ կը թարգմանուի Աստուած մեզի հետ»*

2017-ին Տապլինի եւ Ուիքոյի մէջ նկարահանուեցաւ շատ հետաքրքրական ֆիլմ մը՝ «The Man Who Invented Christmas»: Ֆիլմը Չարլզ Տիքընզի մասին է, որ արդէն հռչակ շահած էր «Օլիվըր Թուիսթի արկածները» գիրքով, եւ ֆիլմին մէջ կը նկարագրուի, թէ ինչպէ՛ս Տիքընզ կը սկսի գրել իր հանրաճանօթ «Սուրբծննդեան երգը»: Այդ գիրքը ցնցող ազդեցութիւն ունեցաւ նախ Լոնտոնի, ապա ամբողջ Անգլիոյ մէջ, իսկ յետոյ տարածուեցաւ աշխարհով մէկ: Տիքընզի գիրքին շնորհիւ Անգլիոյ մէջ վերյիշեցին Սուրբ Ծնունդը, որ նաեւ Անգլիոյ մէջ դարձաւ ամենէն սիրուած ու ջերմ տօներէն մէկը: Մինչեւ Տիքընզի այդ գործը, Անգլիոյ մէջ, որ շատ առումներով «տխուր ու գորշ» երկիր մըն էր, Սուրբ Ծնունդը կը նշուէր գրեթէ աննկատ, ընտանեկան նեղ միջավայրի մէջ, առանց որեւէ հանդիսաւորութեան:

Անգլիոյ մէջ Սուրբ Ծննդեան տօնը նշելը արգիլուած էր 17-րդ դարուն մաքրակրօններու (Puritans) կողմէ, քանի որ ան կը համարուէր «հեթանոսական շունչով», կաթողիկէ ու «այլասերում տարածող»: Օլիվըր Քրոմուելի օրօք արգելքը աւելի խիստ դարձաւ. յաճախ կը հակէին, որ մարդիկ չնշեն այդ տօնը, նշողները կը պատժէին: Տօնը նշելու արգելքը վերցուեցաւ 1660-ին, երբ Սթիուարթները վերաբազմեցան գահին ու Չարլզ Բ. թոյլատրեց տօնը նշել: Բայց անկէ յետոյ ալ տօնը աւելի շատ կրօնական ու եկեղեցական տեսք ունէր եւ չկար այն մասսայականութիւնը, որ ան ձեռք բերեց Տիքընզի գիրքէն յետոյ:

Կարելոր է նշել շատ կարելոր երեւոյթ մը եւս: Վիքթորիական Անգլիան դաժան արդիւնաբերական երկիր մըն էր՝ սարսափելի աշխատանքային պայմաններով, շահագործումներով: Մեծն Բրիտանիան աշխարհի հզօրագոյն կայսրութիւն էր, բայց Անգլիան կը շարունակէր ապրիլ բաւական գորշ ու անգոյն կեանքով (հասկնալի է, որ իսօքը հասարակ մարդոց մասին էր, բայց չէ՛ որ նոյնիքն հասարակ մարդիկը իրենք կը կազմեն երկիրը), տարածուած էր երեխաներու մեծ թիւով մահացութիւնը, 10-12 տարեկան



երեխաները կ'աշխատէին գործարաններու մէջ, 8-10 ժամ՝ չնչին գումարով, երբեմն գուտ կերակուրի համար: Անոնց իրաւունքները չէին պահպանուեր: Նորին Մեծութիւն Քրիստոնէաներու թագուհիին պետութեան մէջ, երեխաները կը տառապէին թերի սննդառութենէ ու բազմաթիւ տանջանքներէ: Տիքընզ այն բացառիկ գրողն էր, որ «Օլիվըր Թուիսթի արկածները» գիրքով վեր հանեց այդ ամբողջ խայտառակութիւնը, ցոյց տուաւ, թէ իրականութեան մէջ ինչ կը կատարուի: Ի հարկէ Տիքընզ միակը չէր: Կարելի է առանձնացնել նաեւ Պրոնթ քոյրերը, մասնաւորապէս Շառլոթ Պրոնթէն, որուն «Ճէյն Էրը» համանման թեմաներ կ'արծարծէր՝ յատկապէս ինչ կը վերաբերի կնոջ իրաւունքներուն:

Տիքընզ, ցոյց տալով Անգլիոյ ու յատկապէս Լոնտոնի այդ խայտառակագոյն վիճակը, նաեւ կը հասկնար, որ միայն խնդրին մասին խօսիլը բաւարար չէ: Անհրաժեշտ էր ինչ որ այլ բան տալ մարդոց՝ բան մը, որ զանոնք կը դողէր աւելի լաւ ու կարեկցող դառնալու: Եւ ահա 19 դեկտեմբերի 1843 -ին, կը հրատարակէ իր «Սուրբ Ծննդեան երգը» գործը, որ ան գրած էր ընդամենը մէկուկէս ամիսէն: Այդ գիրքին շնորհիւ Անգլիոյ մէջ վերստին յիշեցին Սուրբ Ծննունդը: Գիրքը, որուն Սուրբ Ծննդեան երեք ոգիները՝ ժլատ վաշխառու Էպենեզեր Սքրուճին ծանր դաս մը կու տան իր ապրած դատարկ կեանքին համար ու ցոյց կու տան, թէ ինչ պիտի պատահի իրեն, եթէ շարունակէ այդպէս անհոգի ապրիլ, ցոյց կու տան անոր ապրած ամբողջ անիմաստ կեանքը, դաս դարձաւ բոլոր Անգլիացիներուն համար: Գիրքը կրցաւ մարդոց սիրտերուն մէջ իրօք յուզմունք յառաջացնել, մարդիկ նորէն սկսան նշել Սուրբ Ծնունդը, ընդ որում, արդէն ոչ թէ պարզապէս եկեղեցական խորթ ու անհասկնալի, այլ յատկապէս մանուկներուն ուղղուած ջերմ ու բարի տօն մը, որովհետեւ տօնը իր խորհուրդով մանուկ Յիսուսի մասին է:

Տիքընզ պարզապէս գիրք չգրեց, ան Անգլիոյ ու անգլիացիներուն, անգլիախօս Եւրոպային, Գանատային, Միացեալ Նահանգներուն նուիրեց աննահանջ տօն մը, որ դարձաւ համընդհանուր սիրուած երեւոյթ մը: Տիքընզի գիրքին հիման վրայ նկարահանուեցան ֆիլմեր, անոր հերոսները դարձան մէջբերուող կերպարներ, ինչպէս օրինակ Սքրուճը, որ դարձաւ ժլատութեան ու ազահութեան խորհրդանիշ: Տիքընզի աշխատանքը կարելի է համարել շրջադարձային անգլիական հասարակութեան կեանքին մէջ: Տիքընզ դարձաւ անգլիացիներու ընկերային, հասարակական խիղճը:

Իսկ հիմա զանք մեզի: Հայաստան, ուր առիթը չեն փախցնէր յիշեցնելու, որ հայերը առաջինն են աշխարհի մէջ, որ քրիստոնէութիւնը ընդունած են որպէս պետական կրօն, յունուարի 6-ը կ'անցընեն որպէս յետամանորեայ թեթեւ տօն մը, առանց որեւէ հոգեւոր զգացումի կամ տարածման: Շատերը Սուրբ Ծնունդը, անհասկնալի պատճառներով կը կոչեն «Փոքր Զատիկ», իր նշումի չափով ոչ մէկ ձեւով կարելի է համեմատել այն խելագար մթնոլորտին, որ տեղի կ'ունենայ Նոր Տարուան նախօրեակին ու զայն նշելու ընթացքին: Սուրբ Ծնունդը Հայաստանի մէջ կը նշեն այնպէս թեթեւ, կարծես հասկցնելով, որ իրենք ալ գիտեն, որ նման տօն մը կայ, քիթի տակ կը մրթմրթան «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ, մեզի եւ ձեզի մեծ աւետիս», յաճախ կ'ըսեն «օրհնեալ է յայտնութիւնը Քրիստոսի», երբեմն ալ առհասարակ այնքան թքած ունին, որ կ'ըսեն օրհնեալ է ՅԱՐՈՒԹԻՒՆԸ Քրիստոսի: Շատերն ալ նեղութիւն չեն քաշեր այդքան խօսելու, կ'ըսեն «Շնորհաւոր Զատիկ» ու վերջ: Չկայ որեւէ կանոնակարգի հետեւիլ, չկայ տօնական որեւէ մթնոլորտ: Ան առիթ է ձուկ ուտելու եւ գինի խմելու, նաեւ վերջացնելու Ամանորի մթերքներուն մնացորդները ու վերջ: Տակաւին, մէկ ալ 5 յունուարի երեկոյեան զիրար հրմշտելով ու անիծելով կ'երթան եկեղեցիներ՝ ճրագալոյցի: Այդքան բան: Ոչ մէկ առումով ան չի համեմատուիր այն փառահեղ շքեղութեան, որով ան կը նշուի Արեւմուտքի մէջ: Հայաստանի մէջ Սուրբ



Ծնունդը «առաջին քրիստոնեաները» կը նշեն կէս հասկնալով, կէս յոգնած Ամանորէն: Ահա, թէ ինչ:

Ի հարկէ հասկնալի է, որ տօնը մեղաւոր չէ, այլ մենք ենք, որ այդ տօնը չենք հասկնար, չենք կարելորէր, թէւ ան պէտք է մեր մեծագոյն տօներէն մէկը ըլլար: Քրիստոսի ծնունդը նշելը պէտք է ըլլար ազգային ապաշխարանքի ու յոյսի օր մը, գղջումի, կարեկցանքի, հոգեկան բաւարարուածութեան ու հանդարտութեան տօն մը, բայց մեր մօտ կարծես բաւարար չէր, որ այս տարի ալ այդպէս նշուեցաւ, տակաւին ներկաներն ու նախկինները տօնը վերածեցին իրարու հետ հեռակայ հաշիւ մաքրելու առիթի: Այո՛, մենք կարողացանք նոյնիսկ Սուրբ Ծնունդը դարձնել ներքաղաքական հարահրոցի առարկայ:

Ի՞նչ տեսակ քրիստոնեայ ենք մենք:

Մեր կեղծաւորութիւնը չափ ու սահման չունի: Մեր ատելութիւնը իրարու հանդէպ սահմաններ չի ճանչնար: Ու մենք չունինք նաեւ այն գրականութիւնը, նոյնիսկ սերն ու յարգանքը գրականութեան նկատմամբ, որ մեզի պիտի տար նոր բան մը, որ բան մը պիտի փրկէր մոռացութենէ: Մենք Տիքընզ չունինք, մենք Պրոնթէ չունինք: Մենք ունինք խթանողներ (motivators), որոնք առաւօտէն մինչեւ գիշեր մեզի կը սորվեցնեն երջանկութեան ու յաջողութեան գաղտնիքները, իսկ մենք ամբողջ տարին խենթերու պէս կը վազենք ասդին-անդին՝ զիրար չինայելով, զիրար քառապատիկ թշնամի նկատելով, եւ միայն երբեմն, թաղման թափօրներու ժամանակ, խուլ ձայնով կը փսփսանք, թէ «այս կեանքը ինչ բան է, կաս ու մէյ մըն ալ չկաս»: Վերջ: Ասոնք են մեր գաղափարական-կրօնական պատկերացումները: Այս է մեր գաղափարական-կրօնական պաշարի դրսեւորումը իրական կեանքի մէջ:

Շնորհաւոր Սուրբ Զատիկ ու վերջ: Սեղանին վրայ ձուկ չկայ, ամօթ է: Ի դէպ, նոյն այլանդակութիւնը մենք կը կատարենք նաեւ Տիրոջ Յարութեան տօնին, երբ փերեզակներու նման իրարու վրայ յաջողութիւն բերող մոմեր, տարատեսակ չափի ու գոյնի խաչեր կը վաճառենք, հաւկիթին գինը, միսին ու ձկան գինը կը բարձրացնենք... տօն է, մեր հայրենակիցներէն փող պիտի քերենք՝ Աստուծոյ անունով ի հարկէ: Նոյնն է Ծաղկազարդի (Տիրոջ յաղթական մուտքը Երուսաղէմ) տօնին ժամանակ, երբ գերագանցապէս երիտասարդ աղջիկները գեղեցիկ ծաղկեպսակները կը դնեն իրենց գլխուն, ինսպակրամի համար նկարուելու, իսկ երեկոյեան քաղաքին մէջ տարբեր տեղեր գրեթէ աղբանոց դարձած է, ամէնուր այս ու այն կողմ շարտուած ծաղկեպսակներ, որ ոտնակոխ կ'ըլլան, մինչդեռ այդ պսակները անմեղութեան, մաքրութեան ու Տիրոջ յաղթանակը գովերգող երեւոյթներ պիտի ըլլալին...

Մենք Տիքընզ չունինք, որ մեզի յիշեցնէ այդ բոլորին մասին: Գուցէ եւ ունինք, բայց ան ստիպուած ինչ որ կայքի մը խմբագիրն է ու քաղաքական լուրեր կը գրէ, որ ուտելու հաց ունենայ, կամ ալ ինչ որ ապրանքի մը համար ծանուցումի թեքսթ կը պատրաստաւ... ունենանք ալ, պիտի ծաղրենք, մէկ կողմ նետենք, մենք անոր համար ժամանակ չունինք, մենք վառ անհատականութիւններ ենք, որոնց համար ամբողջ աշխարհը ինքնիրագործման, վաճառքի եւ ակրեսիւ գեղագիտութեան կատաղի դաշտ մըն է: Ընդամենը:

Եւ ի հարկէ հասկնալի է, որ գլխաւոր հարցը կրօնական ջերմեռանդութիւնը չէ, այլ հասարակական այս կեղծիքը, ամէն ինչ փճացնելու կարողութիւնը, ամէն հարցի մէջ

խաբելու այդ զգուելի մարմաջը, քրիստոնեայ ձեւանալու, բայց քրիստոնեայ չըլլալու հանգամանքը:

Մեզի կը մնայ Տիրոջը դիմել իր իսկ բառերով ու անգամ մը եւս ներում հայցել՝ յուսալով անոր ասնահման ներողամտութեան՝

«Ներէ՛ մեզ, Տէ՛ր, որովհետեւ չենք գիտեր, թէ ինչ կ'ընենք»:

## Ի՞Մ, ԹԷ՞ ՄԵՐ ՇԱՀԸ



Դոկտ. Հրայր Ճեպէճեան

*«Բան մը գրգռութիւնով կամ սնապարծութիւնով մի ընէք. հապա խոնարհութեամբ մէկզմէկ ձեր անձէն լաւ սեպեցէք: Միայն ձեր անձերուն շահը մի փնտռէք հապա ամէն մէկը իր ընկերինն ալ», Փիլիպեցիս 2:3-4:*

Մարդ անհատին անհատական, ընտանեկան եւ ազգային կեանքին մէջ կայ «ես»ի եւ «մենք»ի միջեւ համակեցութիւն եւ հաւասարակշռութիւն ստեղծելու մարտահրաւերը: Եթէ մարդը կ'ապրի իր «ես»ով, բայց այդ պէտք է որ համադրէ նաեւ հաւաքական կեանքին՝ իմա «մենք»ի հետ: Այս երկու բաղադրիչները միշտ չէ որ կը համընկնին իրար հետ: Կան հակադրուած իրողութիւններ այս երկու կենսական ինքնութիւններու միջեւ, եւ անոնք միշտ չէ որ հաշտ կրնան ընթանալ իրար հետ: Մարդը կ'ապրի իր «ես»ով եւ այս բնական է: Բայց թէ ինչպէ՛ս «ես»ը պիտի տեղադրել «մենք»ի խճանկարին մէջ, կը մնայ իրագործելի առաքելութիւն:



Աստուած մեզի շնորհած է ընտանիք, առողջութիւն, ժամանակ, ընդունակութիւններ, որոնց հանդէպ պատասխանատու ենք: Բայց երբ անձնականը՝ «ես»ը, կը դառնայ միակ չափանիշ, մեր կեանքի մտահորիզոնը կը նեղնայ եւ մեր տեսիլքն ալ կրնայ խաւարիլ: Այս իմաստով, Պօղոս Առաքեալի նամակը՝ փիլիպեցիներուն, ուսանելի է: Պօղոս Առաքեալ չանտեսէր «ես»ի իրականութիւնը երբ կ'ըսէ, «միայն ձեր անձերուն շահը»: «Միայն»ը ցոյց կրնայ տալ թէ «ես»ը կայ եւ կը գործէ: Բայց ոչ միայն «ես»ը:

«Փնտռել» բային յունարէն արմատը «skopeo» է, որ գործածուած է Աստուածաշունչի այս համարին մէջ. «Ձեր անձերուն շահը մի փնտռէք» պիտի հասկնալ նպատակաւաց ուշադրութիւն, միտումնաւոր կեդրոնացում եւ աշխուժ գիտակցութիւն: Այս իմաստով, «փնտռել» բային գործածութիւնը եւ անոր իմաստը պատահական բարութիւն չէ՝ այլ մտածուած դիտարկում:

«Փնտռել» բային մէջ եթէ մէկ կողմէ կայ անհատին «ես»ի փնտռտուքը, բայց նոյնքան նաեւ կայ կեդրոնացումը դուրս գալու նոյն «ես»էն եւ տեսնել «մենք»ի հետ փոխ կապակցուածութիւնը: Հոստեղէն պիտի տեսնել, թէ «իմ»՝ իմա «ես»ի, եւ «մեր»ի՝ իմա «մենք»ի, յաջող փոխ կապակցուածութիւնը կրնայ դառնալ շահեկան, որ կ'արտադրէ ուժ եւ որ հասարակութեան մէջ կրնայ ստեղծել Արժէք: Այս Արժէքն է, որ կեանքը պիտի շինէ: Երբ մարդը կը սորվի իր տեսադաշտը լայնցնել եւ ուրիշին կարիքը տեսնել, ան կրնայ դառնալ վստահութեան եւ սիրոյ կամուրջ մը հաւաքականութեան եւ ազգային կեանքի մէջ, որ կը շինէ եւ չի քանդէր: Ընտանիքը, եկեղեցին, համայնքը եւ ազգը կը զօրանան այն ատեն, երբ անոնց անդամները գիտեն իրենց մասնակցութիւնը դնել ուրիշին բարիքին եւ յառաջխաղացքին ի խնդիր: Այլ խօսքով, երբ անհատը բան մը «գրգռութիւնով եւ սնապարծութիւնով չընէր, այլ խոնարհութեամբ»:

Երբ «իմ»ը կը փոխարինուի «մեր»ով, մրցակցութիւնը կը դառնայ համագործակցութիւն: Փակ սիրտը կը վերածուի բաց ձեռքի, եւ անտարբերութիւնը կը փոխարինուի կարեկցանքի եւ փափկանկատ տրամադրութիւններու եւ կեցուածքներու:

Մարդ անհատը կանչուած է «բան մը ընել» իր երկրային կեանքին մէջ: Բան մը ընելը պարզեւ մըն է եւ նոյնքան նաեւ պարտականութիւն-պատասխանատուութիւն՝ տրուած Աստուծոյ կողմէ: Աստուած ստեղծեց աշխարհը եւ մարդը իր պատկերովը եւ տեսաւ թէ Բարի է: Մարդը, որ Աստուծոյ պատկերովը ստեղծուած է, ինքն ալ կը դառնայ ստեղծագործ՝ ստեղծելու համար Նորը: Այս իրականութենէն մեկնելով է, որ մարդը Աստուծոյ կողմէ կանչուած է «բան մը ընել»ու իր կեանքին մէջ, բայց ոչ գրգռութիւնով եւ սնապարծութեամբ՝ այլ խոնարհութեամբ: Այլ խօսքով, տիրական «ես»ը փոխադրել «մենք»ի մէջ, ուր բան մը ընելը կը ստեղծէ յառաջխաղացք:

Երբ «իմ»ը կը կամրջուի «մենք»ի իրականութեան հետ, այդ «բժշկութիւն» եւ «փրկութիւն» կը ստեղծէ: Այս իրականացաւ Քրիստոսով, որ աշխարհ եկաւ, որպէսզի «իբր»ը՝ իմա «ես»ը, զոհէ յօգուտ «մենք»ի: Քրիստոսի այս գործընթացը մարդկային կեանքի մէջ ստեղծեց Նոր Կեանքը եւ որ կը շարունակուի մինչեւ այսօր. «Բայց անիկա մեր մեղքերուն համար



վիրաւորուեցաւ եւ մեր անօրէնութիւններուն համար ծեծուեցաւ: Մեր խաղաղութեան պատիժը անոր վրայ եղաւ եւ անոր վերքերովը մենք բժշկուեցանք», Եսայեայ 53.5:

Քրիստոս աշխարհ եկաւ «բան մը ընելու» յստակ առաքելութեամբ: Քրիստոս իր «ես»ը վիրաւորեց ու տակաւին ծեծուեցաւ, խաչուեցաւ ու մահացաւ, որպէսզի խաղաղութիւն բերէ: Այս խաղաղութիւնը, որ իրականացաւ իր յարութեամբ, իրեն համար չէր, այլ մեր բոլորին: Ան իր «ես»ը դրաւ «մենք»ի իրականութեան մէջ, որպէսզի բոլորս փրկուինք եւ բժշկուինք: Եթէ մարդ արարածը բժշկուեցաւ, այդ միայն իրեն համար չէ, այլ հաւաքականութեան՝ մեր եւ մենքի համար, որպէսզի բոլորը փրկուին: Վերջապէս «մարդ իր անձին օգուտը պէտք չէ փնտռէ, հապա իր ընկերինն ալ» (Ա. Կորնթացիս 10.24): Քրիստոնէական Աստուածաբանութեան շնորհած փրկութիւն-բժշկութիւնը կայացաւ քանի Քրիստոս իր «ես»ը դրաւ «մենք»ի հաւաքական շահին համար, եւ ուր ստեղծուեցաւ Նոր Կեանքը: Նոր Կեանքը որ եկաւ Իր «ես»ին մէջէն բայց դրուեցաւ «մենք»ի իրականութեան համար:

Մեր համահայկական կեանքը այսօր կը կենայ իմ-եսի եւ մեր-մենքի մեծ արճակատումի մէջ: Հայուն կեանքին մէջ այսօր ես-իմը եւ մեր-մենքը կը կենան հակադիր կողմերու վրայ: Եթէ մեր համահայկական հարցերուն մէջ կան քաղաքական դժուար պայմանները, աշխարհաքաղաքական կնճռոտ տուեալներ, որոնք իրենց ժխտական անդրադարձը կ'ունենան մեր ազգային ու հայրենի կեանքերու վրայ, բայց ներ-հայկական իմաստով հայը ունի նոյնքան ՀՈԳԵԻՈՐ տագնապ: Հոգեւորը՝ իր քրիստոնէական աստուածաբանութենէն մեկնելով, ուր հայուն «ես»ը չի համընկնիր «մենք»ի իրականութեան հետ: Այսօրուան հայուն տագնապը. հայը կ'ապրի բեւեռացուած վիճակներու մէջ՝ ինք իր մէջ, հեռու հաւաքական ու ազգային կեանքի մէջ փրկութեան-բժշկութեան հասնելու տեսլականէն: Հայը պիտի տեսնէ, թէ ինք կանչուած է «բան մը ընելու»: Այդ բան մը ընելը միայն իր անձին համար չէ, այլ մերի ու հաւաքականութեան համար, որպէսզի ապահովէ ազգային կեանքի համար փրկութիւնը եւ բժշկութիւնը: Հայը պէտք ունի այսօր «փրկութիւնը ու բժշկութիւնը», որպէսզի դուրս գայ իր ազգային հազար ու մէկ հարցերէն:

Եթէ հայը այսօր կը ցաւի, ունի վիշտեր եւ կ'ապրի անարդարութիւններ ու տակաւին կը տքնի խաղաղութեան, այս պիտի նշանակէ թէ «ես-իմ» շահը պիտի տեղափոխէ «մենք-մեր»ի հաւաքական շահի գիտակցութեան մէջ: Եւ «իմ-մեր»ի բաժնեկցութեան մէջ է որ հայը պիտի գտնէ փրկութիւն-բժշկութիւն: Եւ խաղաղութիւն:

Ի՞մ, թէ մե՞ր շահը:

Անպայմանօրէն ՄԵՐ շահը: Մեր շահուն մէջ է հայուն փրկութիւնը: Եւ այս փրկութիւնը պիտի բերէ սպասուած խաղաղութիւնը:

Եթէ պիտի շնորհաւորենք մեր բոլորին Նոր Տարին՝ պիտի մաղթենք որ հաւաքական իմա մեր շահը՝ ըլլայ համահայկական իրականութեանը համար ապրող իրականութիւնը:

## ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

### ՓՈՒՆՋ ՄԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷ



#### ԲԱՌԵՐՄ

Հատի՛կ-հատի՛կ ձեզ հաւաքեմ  
Մտքիս, սրտիս տաք քուրայէն,  
Շունչս փչեմ որ կեանք առնէք,  
Դառնաք յոյսի արշալոյսներ...

Ծաղի՛կ-ծաղի՛կ ես ձեզ փնջեմ  
Հայրենական անդաստանէն,  
Ողբի, որբի սուրբ հողերէն,  
Ձեզ ընծայեմ կեանք հըրաշէկ...

Մէկի՛կ-մէկի՛կ ձեզ փրցընեմ  
Ծանրաձանր լռութենէս,  
Հէքս խառնեմ որ ամոքէք  
Բիւր ցաւերը տառապահեւ...

Ձեզ քաղեմ իմ արտասուքէն,  
Ճեղքուած քարի արանքներէն,  
Յոյսի, լոյսի ծիածան որպէս,  
Կեանքի նոր ծիլ, զարթօնք որպէս...

Ձեզ ընծայեմ գորովս տաք,  
Գուրգուրանքս, սէքս անափ,  
Արմատ նետէք, ծաղիկ բանաք,  
Դառնաք շքեղ, վառ անդաստան:  
16/12/2022



.....

### ԼՈՅՍԻ ՃԱՄԲԱՍ

Մուրն ու գորշը ետին թողած Լոյսը միայն կ'ուզեմ տանիլ,  
Լոյսով օծուիլ, լուսողողուի՛լ, պայծառանա՛լ ես նորովի,  
Լոյսով խայտա՛լ, լուսարբենա՛լ, լոյսի ճամբան է իմ ուղիս...

Դար ու դարեր այդպէս ապրեր, յարատեւեր եմ կորովի,  
Փառքի ճամբաս ա՛յս է եղեր իմ լեռան պէս աստուածամե՛րձ,  
Որուն նման ես չեմ տեսեր լուսագագա՛թ, արեւահե՛ւ...

Ան է միայն զիս ուղղորդէր դարերու մէջ տառապահեւ,  
Որ չշեղի՛մ իմ ճամբայէս, չմոլորի՛մ գորշ մթան մէջ,  
Մընամ լոյսի ու յաւերժի ճանապարհորդ մը աներեր...

Եւ հիմա ալ ես կը մնամ լոյս իտեպիւն միշտ սիրահար,  
Թէկուզ իյնամ ես մերթ ընդ մերթ ու սայթաքիմ պահ մը միայն,  
Վերագտնե՛մ ուղիս շիտակ, աստուածներուն տանող ճամբաս:  
14/12/2025

.....

Կաթկթող անձրեւ է,  
Մոռցուած հին երգ է,  
Մեղեդի է քնքուշ  
Սրտիս մէջ տրտմանուշ...

Մեղմօրօր կը հնչէ,  
Միպար, տխուր է,  
Ամպիկը կ'արտասուէ,  
Կարօտի արցունք է...

Յուշեր են լուսաւոր  
Սրտիս մէջ մենաւոր,  
Կ'այցելեն հոգեթով  
Գգուանքով սիրադող...

Կաթկթող անձրեւ է,  
Միրտերու թրթիռ է,  
Հեքիաթներ կը հիւսէ,  
Երագի պէս կ'իջնէ..  
30/11/2018

.....

### ԱՆԴՐԱԴԱՐՁ

Ո՞վ կրնայ ճանչնալ վաստակդ արդար,  
Գիշերներդ անքուն ու տառապալից,  
Կանչն արդարութեան եւ ճշմարտութեան  
Որոնք վառեցին սիրտդ անձկագին...

Շատեր լոկ տեսան արտաքին փայլդ,  
Երանի տուին, անցան ու գացին,  
Ո՞վ պիտի տեսնէր ներքին բոցերդ,



Արդարակորով այրումը սրտիդ...

Մարդիկ լոկ հանգչած իրենց աթոռին  
Շշմեցան ի տես սրտամաշ խռովքիդ,  
Իրենցը՝ փառքն էր, դիրքը խարուսիկ,  
Քուկդ՝ ծարաւն էր յոյսին, ճշմարտին...

Եւ օրերուս մէջ տարագիր կեանքի,  
Ես մաքառեցայ որ շո՛ղ մը վտիտ  
Նշուլէր որպէս առկայծ ճրագ յոյսի,  
Պահէր երագը վառ ապագայի...

14/12/2022

.....

**ՅԻՑ ԼԵՌՆԵՐԴ**

Յից լեռներդ երկնին խրած կ'ըմպեն յոյսը սիրով անյագ,  
Դար ու դարեր կ'ամբարեն գայն, անով միայն յար կ'արբենան,  
Լուսածածան կը շողշողան տեսիլքի պէս վառ ու անհաս,  
Որ որոնենք լուսածարաւ մրրիկներուն մէջ տենդահար...

Մերթ կը թուի թէ երկնամերձ խորան մըն են յուսահառայ,  
Ուրկէ խունկի ու աղօթքի յոյս ծուէններ կը բարձրանան,  
Արարիչին կը հասցնեն արդարութեան կանչը վարար  
Տառապահար ազգիս հայոց որ միշտ յուսաց ու հաւատաց...

Մերթ կը թուի թէ բողոք են, ըմբոստութիւն մը սրբազան,  
Ափերն երկնին կը կարկառեն որպէս տրտունջք արդարատենչ,  
Որպէս դողանջ բիւր տենդերուն, երազներուն դեռ անկատար  
Ու կ'աղերսեն գուրծն Աստուծոյ իրենց ճիշով արդարահեւ:

23/11/2018

.....

**ՄԷՐ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ**

Երակներուս մէջ կա՛թ-կա՛թ հոսեցար  
Ու ներծծուեցար մօրս կաթին պէս,  
Քեզմով սնեցայ, քեզմով աճեցայ  
Հայրենիքէն դուրս, հայրենին իմ մէջ...

Կաթիներուդ մէջ մեր պատմութիւնն էր  
Հայկ նահապետէն մինչեւ մեր օրեր,  
Մեր ցաւերը բիւր, տառապանքն անեզր,  
Աստղերէն ալ վեր՝ երազները մեր...

Կաթիներուդ մէջ բոց կար հրակէզ  
Միրոյ, կարօտի այն պատարագէն,  
Չոր տարագիր հայն գրկուած իր հողէն  
Քեզ կը մատուցէր հաւատքով անշէջ...

Կաթիներուդ մէջ հիւլէն ոգիի  
Հայկէն, Վահագնէն ու Անդրանիկէն  
Հուր կը բռնկէր երակներուս մէջ,  
Հուրն ազատութեան՝ շունչով բոցեղէն...



Թռիչք կ'առնէր հոգիս դէպ' Լեառն Մասիս,  
Դէպ' Անի ու Կարս մինչեւ Կիլիկիա,  
Ուր դեռ շունչը կայ պապերուս, նախնեաց,  
Աւերակներէն բարձրացող ոգի...

Ու մորմոքը հին կորսուած մեր Տան  
Կ'եռար, կը շատնար արիւնիս մէջ տաք,  
Կը դառնար երդում, նոր խոստում վաղուան,  
Կը փայլատակէր որոտ ու կայծակ...

Ու դուն դարձար իմ էութեան խորհուրդ,  
Յասուն ու վրէժ, կամք վերապրելու,  
Յարութեան տեսիլք մեր նոր գալիքի,  
Արդարութեան կանչ, պայքարի ոգի...

Սրտիս անթրոցով քեզ բորբոքեցի  
Ու կամքովս պինդ նոր սլացք տուի  
Քու երագանքիդ դարերով հիւսուած,  
Հուրէ տեսիլքիդ արեամբ սրբացած:

Քանզի ես գիտեմ, թէ ուրանամ Քեզ,  
Եր' սուն արծաթով դաւանանեմ քեզ,  
Կը դառնամ սոսկ ի՛ր մը անհոգի,  
Արժանի միայն արգահատանքի:  
2/22/2022

.....

#### ՄԵՐ ԵՐԿԻՐԸ

Քու հողիդ հետ շաղախեր ենք հազարամեայ մեր երազը,  
Մեր սերերը, կարօտները, մաքաման տենդն ու տենչերը,  
Քու հողիդ հետ շաղախեր ենք մեր քրտինքն ու թանկ արիւնը,  
Յեղին կանչը, ճիգը արդար, մրրիկներու դէմ պայքարը...

Ժայռերէդ բիրտ, ապամաժեայ կերտեր ենք մենք խաչքար ու վանք,  
Հողմէն ահեղ, վիշապաձայն երգ ենք հիւսեր ու շարական,  
Յից լեռներէդ բարձրացուցեր աղօթք վսեմ, սրբազնաշունչ  
Ու Նարեկեան խոստովանանք մեր բիւր մեղաց ի քաւութիւն...

Երակներուդ մէջ ենք ցօղեր մեր արիւնը կաթի՛լ-կաթի՛լ,  
Որ դուն ապրիս, յարատեւես ընդ հուր, ընդ սուր մնաս կանգուն,  
Աշտարակուիս Մասսեաց նման մաքուր ու վեհ յուսատեսիլ,  
Դառնաս վսեմ խորհրդանիշ հայ հոգիին մաքրամաքուր...

Քանզի եթէ դաւանանենք քու սուրբ հողիդ հազարագանձ,  
Կը մնանք սոսկ մի անհոգի գորշ բազմութիւն թափառական,  
Փերեզակներ ու փոշի ազգ ցրուած չորս կողմն յայն աշխարհին,  
Կ'անւէանանք, ի չիք դառնանք, կ'անհետանանք անդիմագիծ:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

## ՊՐԻՄՄԱԿԷՍ

---

### ԹՈՒԱՅՆԱՑՈՒՄԸ ԵՒ ՄԵՆՔ

Մարուշ Երամեան



Վերջերս յաճախ կը լսեմ՝ «Բայց այսքան գիրք պահելու ի՞նչ կարիք կայ, համացանցին մէջ ամէն բան կայ եւ մէկ կոճակի սեղմումով հասանելի է»:

Ըսողները ընդհանրապէս երիտասարդներ են, որոնք այնքան ալ հմայուած չեն գիրքով կամ ընթերցանութեամբ. իրենց կը թուի թէ ամէն բան, բայց իրապէ՛ս, բառացիօրէն ամէն բան կարելի է գտնել համացանցի ովկիանոսներուն մէջ:

Երբ խօսքը հայ գիրքի, հայերէն եւ հայկական արխիւի մասին է, դժբախտաբար «ամէն բան մէկ կոճակի սեղմումով» հասանելի չէ:

Ճիշդ է, որ Հայաստանի Ազգային Գրադարանը եւ այլ հիմնարկութիւններ իրենց գիրքերն ու արխիւը կը թուայնացնեն եւ հետաքրքրուողներուն տրամադրութեան տակ կը դնեն, սակայն այդ թուայնացուածներուն կրկնապատիկն ու հաւանաբար եռապատիկը կը մնան գոց փեղկերու ետին, ծրարներու եւ տուփերու մէջ պահուած:

Վենետիկի եւ Վիեննայի Մխիթարեան վանքերը շատ հարուստ են, բայց թուայնացուած են: Նոյնն է պարագան Փարիզի Նուպարեան Մատենադարանին եւ Սփիւռքի տարածքին գտնուող հաւանաբար շատ այլ գրադարաններու, մատենադարաններու, արխիւատուներու...: Մտատրականներ, որոնք կ'ուզեն պրպտումներ ընել, յաճախ ստիպուած կ'ըլլան ճամբորդելու:

Օրինակներ տալու համար ըսենք, որ հալէպահայ երեցները վստահաբար լսած են Զարեհ Գաբլանի (Գաբլանեան) անունը, նախ որպէս Հալէպի Համալսարանի ճարտարապետութեան կաճառին հիմնադիրներէն եւ դասախօսներէն մէկը, ապա տոքթ. Ռոպեր Ճէպէճեանի հետ Մարեան Ակադեմիայի հիմնադիր:

Թերեւս գիտեն նաեւ, որ Զարեհ Գաբլան գիրքերու հեղինակ է, որոնցմէ մէկը «Գծագրութեան Արուեստը» տպուեր է Հալէպի «Գօգօ» տպարանէն ներս, 1961 թուականին եւ կը հաշուէ 44 էջ:

Անկէ անդին գրեթէ բան չենք գիտեր իր մասին:



Համացանցը շատ ժլատ է այս առնչութեամբ. գրեթէ ոչինչ կը գտնենք հոն Զարեհ Գաբրիւնի մասին, երբ անունը հայատառ գրենք: Իսկ այն հակիրճ, խիստ ամփոփ տեղեկութիւնները որ կան, երբ անունը լատինատառ գրենք, կու գան Փարիզի INHA և Institut National d'Histoire de l'Art-էն, ուր ուսաներ է Զարեհ Գաբրիւն 1931-1939 թուականներուն: Այս նոյն աղբիւրէն կ'իմանանք, որ Զարեհ Գաբրիւն ծներ է Գահիրէ (Եգիպտոս) 1911-ին, աշակերտեր է Victor Laloux-ի եւ Charles Lemaesquier-ի, եղած է սան Պօղոս Նուպար Փաշայի ֆոնտին, աւարտաճառին նիւթը եղեր է «Խճանկարներու Փոքր Թանգարան Մը Գահիրէի Մէջ»:

Արժանացեր է յիշատակութեան «Պուրժուա եւ Գողթեօֆ» մրցումին: Վերջին յիշատակումը կը գտնենք 1939 թուականի Դեկտեմբեր 12-ին (ճարտարապետ Փարիզի 16-րդ շրջանին մէջ, 1949 թուականին Հալէպ (Սուրիա), 1951-ին Թուլուզ, Վերին Գարոնի մէջ, ապա Պուլոն Սիւր Սեն, Վերին Սենի մէջ, 1962-1973 թուականներուն տեխնիկական օգնական ԻԻՆԵՍՔՕ-ի, 1962 թուականին փրոֆէտոր Հալէպի (Սուրիա) ճարտարագիտական կաճառին մէջ, Գեղարուեստի դպրոցի Ազգային եւ բարձրագոյն դպրոցի կամ Կրանտ Մասէի ուսանողներու եւ շրջանաւարտներու միութեան անդամ 1932-ին, S.A.D.G.-ի անդամ 1945-ին, մինչ այսօր կը յիշուի 1962-ի եւ 1973-ի տեղեկատուներուն մէջ որպէս անոնց թղթակից անդամ:

Այս տեղեկութիւնները մենք չէ որ պահեր ենք, այլ քաղուած են Ֆրանսայի ազգային արխիւէն (թիւ AJ/52/1295, ուսանողական գործ):

Այլ օրինակ մըն է Այծեմնիկ Ուրարտուն, առաջին հայ քանդակագործուհին, որուն անունն իսկ լսուած չէ, թէեւ Երեւանի Մատենադարանին մէջ կանգնած Մովսէս Խորենացիի մեծ քանդակը իր գործն է:

Նաեւ իր գերեզմանաքարին վրայ գետեղուած «մերկ կին» քանդակը: Ճիշդ է որ այդ քանդակը Այծեմնիկ Ուրարտուի գործն է, բայց ո՞վ որոշեր է զայն տեղադրել իր գերեզմանաքարին վրայ, երբ ամուսինը իրմէ երկու տարի առաջ մահացեր է եւ ինք զուակներ չէ ունեցած:

Նման երեւոյթ հազուադէպ է՝ որ քանդակագործի մը մէկ աշխատանքը տեղադրուի իր իսկ գերեզմանաքարին վրայ, բայց անոր մասին ոչ մէկ տեղեկութիւն, կամ գրառում ունինք, ոչ ալ միջոց ունինք իմանալու: Ուրարտուն կտա կ'ձգեր է, թէ՛ իր օրագրութիւններուն մէջ գրեր է, թէեւ այդ իսկ յստակ չէ՝ օրագրութիւն պահէր է արդեօք:

Նոյնիսկ Հայաստանի մէջ ամէն բան չէ որ թուայնացուած է, ինչպէս օրինակ Զարեհի Անուան Գրականութեան եւ Արուեստի Թանգարանին մէջ պահ դրուած ձեռագրերը, որոնք տակաւին չեն հրատարակուած:

Ահա՛ թէ ինչո՞ւ պէտք է պահենք ինչ որ ունինք որպէս լուսանկար թէ թուղթ, որովհետեւ մեր մեծերուն երկերէն եւ լուսանկարներէն անդին գրեթէ ոչինչ թուայնացուած է : Օր մը թերեւս մէկը մտածէ զանոնք թուայնացնելու մասին: Մինչ այդ սակայն պէտք է պահել, որպէսզի երբ այդ երջանիկ օրը գայ, թուայնացնելիք նիւթ ունենանք...

<http://www.kantsasar.com/news/58890-2/>

## ԽՈՉ-ԱՊՐՈՒՄՆԵՐ

Սեւան Սեմերճեան



Երեւան ուսանած տարիներու, ամառ- ձմեռ չէի ըսեր, ամէ՛ն Կիրակի Էջմիածին կ'երթայի:

Ամէն տարի տեսակ մը ծանրաբեռնուած դասացուցակ մը կ'ունենայի, ճիշդ է. Կիրակին միակ արձակուրդն էր, հանգստեան օրը, բայց այս բոլորը արգելք չէր ըլլար երբեք, որ ամէն Կիրակի Կոմիտասի շրջանին մէջ գտնուած տունիս դիմացի կանգառէն «մարշուֆնի» մը նստէի, որ զիս կը տանէր Մաշտոցի պողոտայի մէկ անկիւնը. Հոն կը կենային ամէն կիրակի Երեւանէն Էջմիածին գացող հանրաշարժները:

Հիմա, այդ խինդ ու աշխուժութենէս զարմացած ու ինչ խօսք՝ բաւական խորունկ նախանձով կ'արձանագրեմ արեւ, անձրեւ, ցուրտ, ձիւն, գատիկ, հատիկ չըսելս ու երթալս: Խնդիրը այդ երկար ճամբան չէր անշուշտ. չէ՛: Էջմիածին երթալով, բնականաբար Մայր Աթոռ կ'ուղղուէի, ուշացած ալ հասնիմ՝ Ս. Պատարագին կը մասնակցէի, առանց զգալու՝ ժամերով ոտքի կը կենայի, կը դիտէի, կը լսէի, կը լեցուէի,

կ'երգէի, շատ յաճախ կը յուզուէի... երբ յուզմունքս շուրջիններուս ուղադրութիւնը գրաւէր, դուրս կ'ելլէի. Այո՛, այսօր ալ կը յիշեմ, որ միեւնոյնն էին ինծի համար ներսն ու դուրսը՝ Մայր Աթոռի դարպասը անցնելէս վերջ:

Ի՞նչպէս չըլլար:

Ներսը Պատարագ կար, զարդանախշ ու որդան կարմիր, սրբապատկերներ, խունկ, աղօթք ու շարական, «Սուրբ Սուրբ», «Տէր Ողորմեա », «Լցաք» ու «Օրհնեցից Զտէր», Եկմալեան կար ու Կոմիտաս... դուրսն ալ, շատերուն պատմածին համաձայն, անոր տնկած ծիրանի ծառը կար, յուշակոթող, խաչքար ու շիրմաքարեր կային, արեւին ու շուքին տակ խաղաղութեամբ քայլող, նստող, խօսող, ջուր խմող ու զարմանահրաշ այդ մթնոլորտը վայելող մարդիկ կ'ըլլային. ես ալ՝ անոնց պէս, նստարաններէն մեկուն վրայ երկա ք կը նստէի, ծնողքէս հեռու՝ առանձին ապրած ուսանողական կեանքիս լարուածութիւնն ու տխրութիւնը կը թօթափէի. կրնայի՞ թօթափել հոն...

Այնքան թանկագին են այս յուշերս. այսօրուան կեանքիս մէջ՝ միանգամայն անգտանելի: Շաբաթներէ, իսկութեան մէջ՝ տարիներէ ի վեր զանազան օրինակներով, իրողութիւններով, դէպք ու պատահածներով նկարագրած ափսոսանքս, ցաւս ու կտրուածութիւնս այս շաբաթ երեւի հասաւ իր գագաթնակէտին. Յուշերուս մէջ բազմած խաղաղ Էջմիածինը պատերազմի դաշտի վերածուեցաւ: Ծառերուն միջեւ խաղաղութեամբ վազվզող մանուկներուն փոխարէն, բակին մէջ ոստիկաններ լեցուեցան: Ականջներուս մէջ հնչող մանուկներու երբեմնի ուրախ պոռչտոյններուն փոխարէն, սահմաններ գծուեցան, խումբեր եղան, զիրար ատող, բացագանչող, բայց չլսող կին ու տղամարդիկ, երիտասարդ ու տարեց մարդիկ լեցուեցան սուրբ այդ բակին մէջ:

Շատերը յաղթանակ համարեցին այդ օրը, այդ պահը, երբ Մայր Աթոռէն անջատուած, վարչապետին շարքերուն անցած տասը եպիսկոպոսներուն՝ Վեհափառ Հայրապետին



ուղղուած նամակ-առաջարկը մերժուեցաւ: «Հե-ռա-ցիր» պոռագողներուն դիմաց՝ «Վե-հա-փառ» ըսողներուն ձայնը բարձրացաւ:

Մեր պատմութեան ամենէն դաժան, առանց դուրսի թշնամիի՝ մենք մեր դէմ կռուած պատերազմին մէջ Մայր Աթոռը, Վեհափառ Հայրապետը, Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին պաշտպանող մարդիկ ի՞նչ ուրախ էին օրուան աւարտին...

Մայր Աթոռին աջակից եմ ես: «Ամէն Հայի սրտից բխած» երգած պահուս սիրտս կը տրոփե, աչքերս կը լեցուին, մէջիններս կ'արթնան, պատմութիւնը կը յիշեմ, մեր կաթողիկոսներուն կոչերը կը լսեմ, ճակատագրական մէկ պահուս ազգը փրկող անոնց մէկ վարքն ու որոշումը կը մտաբերեմ:

Մայր մեր Աթոռին, անսասան մեր եկեղեցիին զաւակն եմ ես. Գլուխս կը ծռի, երբ «Իրական Հայաստան»ի իշխանութեան ներկայացուցիչները Ամենայն Հայոց Կաթողիկոսը անքաղաքավարօրէն իր աւագանի անունով կը յիշեն:

Առանց պատերազմի, միշտ եւ յաւերժ, առանց ընտրութեան տեղի տալու՝ Մայր Աթոռին աջակից եմ ես: Բազմիցս ըսի, պիտի կրկնեմ. Ամիսներէ ի վեր ընթացող՝ «հակամարտութիւն» կոչուող այս ամօթանքէն կ'ամչնամ: Արդէն ծռած վիզս առաւել եւս կը ծռի, կռնակս կը կրանայ ու սիրտս կը ճմլուի:

Մայր Աթոռին աջակից եմ ես, այո՛, ու կը խոստովանիմ, որ այդ օրը, զիրար ատող հայերով լեցուն Միաձնաէջ մեր բակին մէջ եղածները դիտած ու լսած պահուս չուրախացայ.

Տղմուտ գետին ափը, Մարաշը, Մասունն ու Ղարաքիլիսան չէր հոն.

Պատերազմի դաշտ չէր հոն, որ զիրար ատող մարդիկ կռուին, յաղթեն ու պարտուին:

Որո՞ն կը խօսիմ:

Հարցումիս մի՛ նայիք:

Մինակ չեմ, գիտե՛մ: Ինձի պէս չուրախացողներ, այս ամօթին չհանդուժողներ, զայն չվայելցնողներ, ամչցողներ, սիրտը կծկուողներ, կտրուողներ ու այդուհանդերձ՝ հայերէն շնչող ու սորվեցնողներ կան, գիտե՛մ:

Բայց... չե՛մ գիտեր, թէ այդ բակին մէջ տնկուած Կոմիտասի ծառն ալ զիրար ատող հայերուն ատելութիւնը շնչե՞ց...

## ԱՆՇԱՆՕԹՈՒՀԻՆ

(Խոհագրութիւն)



Օ՛, արդէն տասնամեակներ անցեր էին Մելգոնեան Կրթական Հաստատութեան փակումի տխուր, տխրահեռչակ տարիէն...եւ կարօտը կը սեղմուէր կրծքին մէջ, երբեմն լալու չափ կը յուզեր զինք: Կը փորձէր վերապրիլ այդ փոքրիկ Հայաստանին բոյրն ու թոյրը, եզակի մթնոլորտը, հաղորդուիլ դարձեալ այդ ոգիին, որ իր մէջ այնքան հայկական աւիւն ու աւիշ կը խտացներ:

Ուրկէ՞ կու գար այդ ոգին, հարց կու տար ինքն իրեն: Այն պարման-պարմանուհիներէ՞ն արդեօք, որոնք սփիւռքի շուրջ քսան գաղթօճախներէն կու գային, կը հաւաքուէին այնտեղ, անոր կրթական յարկին տակ, ուսում առնելու, մարդ դառնալու, իրենց ջահը վառելու այնտեղ մշտավառուող Մեսրոպեան ջահէն սրբագան...Մելգոնեան անմահ բարերարներու դամբանէ՞ն արդեօք կը շողարձակէր այն ճաճանչը, ի մասնաւորի ադա Կարապետ Մելգոնեանի տեսլականէն.- «Ես այս դպրոցը կը բանամ ազգիս վրէժը լուծելու համար»...Կամ գուցէ անիկա կու գար այն ոգիէն գոր թողուցեր էին Մելգոնեանի նախկին մեծ ուսուցիչները, որոնց շունչը դեռ կը թեւածէր մթնոլորտին մէջ: Անոնք՝ յետ-Եղեռնեան այն հոյլ մը մտուրականներն ու մշակներն էին, որոնք ստանձնեցին տարագիր հայութեան մնացորդացին տեր կանգնելու, զանոնք հայկականութեամբ, հայ մշակոյթի արժէքներով դաստիարակելու սրբագին առաքելութիւնը: Յիշեց անունները Յակոբ Օշականի, Վահան Թէքէեանի, Բարսեղ Կանաչեանի, Լեւոն Արգարեանի, Վահէ Վահեանի, Վահրամ Մավեանի, Արեգ Տիրազանի, Վահան Պետելեանի եւ այլոց..., որոնց յաջորդեր էին Սեպուհ Արգարեանը, Սօսի եւ Վարուժան Պետիկեանները, Դոկտ. Ազապի Էքմէքճեանը եւ շատ ու շատ ուրիշներ...եւ սիրտը լեցուեցաւ անոնց թողած անմեռ յիշատակով:

Ամէնուր էր այդ ոգին: Մելգոնեանի պուրակներուն մէն մի ծառը, մէն մի եղեւիկը տնկուած էր յետ-Եղեռնեան որբի մը ձեռամբ: Հայոց պատմութեան սեւագոյն թուականէն՝ հայոց Ցեղասպանութենէն ետք, տարագիր ժողովուրդի յարութեան առաջին ծիւղերն էին որոնք բողբոջեր էին եւ դարձեր էին փարթամ ծառեր, ամբողջ պուրակ մը...Մտաբերեց Լեւոն Միրմելեանի քերթուածին տողերը. «Մեռելներուս իբրեւ խաչ, ես այս ծառը տնկեցի»:  
Այդ ոգին կը սերմանուէր բոլոր որբերու հոգիներուն մէջ: Կը խլէին զիրքը անոնք կատաղօրէն, հացի պէս, ինչպէս կը գրէր Վահան Թէքէեան:



Այդ ոգին կը ճառագայթէր գրեթէ ամէն օր, վերյիշեց, երբ գրական-գեղարուեստական-երաժշտական կամ այլ ձեռնարկներ տեղի կ'ունենային անոր յարկին տակ, մարզական-սկաւառական շարժումներ կը շնչաւորէին անոր շրջափակը, հայրենի արուեստագէտներ եւ գրական դէմքեր կ'այցելէին Հաստատութիւնը...

Իսկ Պաշտամունքի արարողութիւնները որոնք պարբերաբար կը կատարուէին Մելգոնեան անմահ բարերարներու դամբանին առջեւ երկիւղած պահեր էին խոկումի, աղօթքի եւ մանաւանդ երախտագիտութեան այն եղբայրներուն հանդէպ, որոնք թէեւ անուս, զիտցեր էին իրենց մամոնան վերածել ոգիի, հայապահպանման եւ հայակերտումի ոգիի: Աւելին, զիտցեր էին հարազատ հայր դառնալ ազգի որբերուն, գուրգուրանք ու գորով տալ անոնց եւ թուրքին հայասպանութեան եւ մշակութասպանութեան դէմ պայքարիլ հայապահպանութեամբ եւ մշակութապահպանութեամբ... Ի՛նչ վսեմ առաքելութիւն՝ արդարեւ:

Օ՛, կարօտալի պահեր բոլորն ալ, որոնց յիշատակը կը լեցնէր սիրտը ավել ավել: Գիշերօթիկ վարժարանը տուն ու օճախ կը դառնար բոլոր սան-սանուհիներուն համար, որոնք քոյր ու եղբայր կը դառնային իրարու, անկախ տարիքէ եւ այլ հանգամանքէ: Շատերու մօտ ալ, պատանեկան սէրը կը ծաղկէր սիրտերուն մէջ եւ յետոյ անոնք միասին կ'ամուսնանային եւ ընտանեկան բոյներ կը կազմէին տարբեր գաղթօճախներու մէջ: Եւ տարագիր ազգը կը վերընձիւղէր շիւղ առ շիւղ...

Ի՛նչ բախտաւոր կը զգար ինքզինք հիմա, որ տարիներ ու տասնամեակներ շարունակ եզակի բախտը ունեցեր էր ինք եւս վայելելու, ըմբոշխնելու Մելգոնեանի հայաբոյր ու հայրենաբոյր մթնոլորտը: Ոչ միայն: Այլեւ մասնակիցը դառնալու անոր գրական-գեղարուեստական եւ այլ ձեռնարկներու կազմակերպման հոգեւոր աշխատանքին: Հիմա հսկայական պարապտութիւն մը ստեղծուէր էր իր հոգիին մէջ: Ո՛ր ալ երթար, ո՛ր հայկական ձեռնարկին կամ միջոցառումին ալ մասնակցէր, հոգեւին կը փնտռէր Մելգոնեանինը: Ուրիշ էր ան: Իրեն կը թուէր թէ իրմէ խլուէր էր այն փոքրիկ, բուռ մը Հայաստանը, ուր անցուցեր էր իր կեանքի թերեւս ամէնէն երջանիկ պահերը եւ սիրտը կը ճմլուէր կորուստի ցաւով: Կրկնակի տարագիր դարձեր էր հիմա, այդպէ՛ս կը զգար: Յաճախ երբ այնտեղէն կ'անցնէր, աչքը կը սեւեռէր անոր փակ դարպասին եւ ներքին ընդվզումի ալիք մը կ'ալեկոծէր, կը փոթորկէր սիրտը:

Հայոց պատմութեան էջեր կը տողանցէին մտքին մէջ, այն տխուր էջերը, երբ հայը իր ձեռքով իր հայրենի տան բանալիները յանձներ էր օտարին: Եւ հարցումներու տարափը զինք կ'առնէր իր ոլորապտոյտին մէջ: Չէ՛, ոչ մէկ արդարացում կը գտնէր պատմական այս մեծ գիշերօթիկ կրթարանի փակումին համար: Ոչ մէկ:

Եւ հարց կու տար ինքն իրեն, թէ արդեօք ի՞նչ պիտի ըսէին՝ իրենց անդենական կայքէն, զայն հիմնադրող Մելգոնեան եղբայրները, որոնք իրենց ամբողջ հարստութիւնը նուիրէր էին որ բաց մնար մշակութապահպան, հայապահպան Հաստատութիւնը դարէ դար, մինչեւ այն օրը, երբ նոյնիսկ մէկ հայ մնար սփիւռքի օտար ավերուն վրայ:

Հարցումնէ՛ր, հարցումնէ՛ր, որոնք կը մրճահարէին իր յոգնած ուղեղը ահա աւելի քան քսանամեակ մը արդէն... Եւ պատասխան չունէին:

Յետոյ խորհրդածեց. «Մէ՛նք, թէ՛ մեր թշնամիները աւելի մեծ վնաս տուած են մեզի՝ մեր երկրին ու ժողովուրդին, դարերու ընթացքին...»: Եւ եզրակացուց ցաւով ի խորոց սրտի.

«Մենք ենք բուն պատասխանատուները մեր ճակատագրին»:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

## ԿՂԶԻՒՆՆԵՐԻ ՄԷՋ

ԱՐԱՄ ԱՃԵՄԵԱՆ



Հելիոպոլսոյ Նուպարեան ազգային վարժարանը աւարտելէս ետք, Գայիանէ դասընկերուհիիս հայրը՝ Սահակ տէր Շաքարեան քահանան, որս խորհուրդ տուաւ զիս ուղարկել Կիպրոս՝ Մելգոնեան եղբայրներու հիմնած հաստատութեան մէջ շարունակելու հայեցի երկրորդական ուսումն: Տէր հայրը նոյնիսկ անձամբ խորամուխ եղաւ, որ առանց ամենադոյզն բացառութեան հետս տանիմ պատուիրուած բոլոր զգեստական պիտոյքները: Ուղարկուած ցանկէն կը յիշեմ որոշ մանրամասնութիւններ.-

-երկվեցեակ մը գոյգ գուլպայ,

-երկվեցեակ մը ներքնաշապիկներ (մենք այն ատեն ֆանելլա կըսէինք),

-երկվեցեակ մը շապրնկեր (այսինքն վարտիկ),

-կէս երկվեցեակ ձերմակ շապիկներ,

-մութ գոյնի պաշտօնական տարագ եւ փողկապ,

-ոտնագնդակի համար գոյգ մը կօշիկ,

-գոյգ մը սուր գամերով վազքի կօշիկներ (spikes),

-կարճ տաքատ (basketball եւ volleyball խաղալու համար), «էսփատրին», «պոռնոս», overall եւն...:

Վերը նշուած մարզական պիտոյքներու մասին գաղափար անգամ չունէի՝ մանաւանդ որ մարմնամարզով չէի զբաղէր: Ճիշդ է, այդ ամառ սկսեւ էի յաճախել Հելիոպոլսոյ ՀՄՄՍ-

Նուպար մարզական նորաշէն ակումբը, որուն մարզադաշտին մէջ բանակում կ'ունենային՝ բաց երկինքի տակ եւ կը մասնակցէինք արիներու եւ արենոյշներու խարուկահանդէսին:

Կարծես ժամանցի նոր բնագաւառ մը յայտնաբերէի:

Մելգոնեան Կրթական Հաստատութիւն հասնելուս պէս՝ մեծ ոգևորութեամբ հազայ մարզական կարճ տաբատս, կապեցի վազքի սուր գամերով նոր կօշիկներս եւ սկսայ միայնակ վազել ֆութպոլի դաշտին շուրջ: Հազիւ հասած էի երրորդ շրջանը բոլորելու, երբ հաստատութեան սկաուտապետը՝ Պր. Կիրեղեան, ընդմիջեց վազքս եւ դէմքին թթուած արտայատութիւն մը տալով հարցուց,

—Ի՞նչ է ըրածդ:

—Չե՛ս տեսներ, որ կը վազեմ,— հարցումով պատասխանեցի հարցումին, առանց որեւէ յետին նպատակի:

—Որ այդպէս է, այլե՛ւ ոտքդ չդնես սկաուտարանին մէջ,- սպառնազին սաստեց ան:

— Լա՛ւ, չեմ դներ,- ըսի, եւ շարունակեցի ընդհատուած վազքս՝ ճամբան մտածելով ինչո՛ւ ասանկ ըսաւ: Աւելի ուշ տեղեկացայ, թէ նոյն օրը սկաուտական ժողովին չէի ներկայացած: Ի՛նչ իմանայի, թէ հոն պետք է ըլլայի: Ոչ մէկը տեղեակ պահած էր...



Մեր դասարանին մէջ քանի մը ուսանողներ այցի կ'իյնային իրենց յատկութեամբ: Լեւոն Լիպարիտեան դպրոցին ամենաերկարահասակ տղան էր եւ մեր դասարանի պատասխանատուն: Ետելը կը նստէր կարգուկանոնը հսկելու համար: Քովը կը նստէր Անդրանիկ Քեօշկերեան, որուն չես գիտեր ինչու «օդերեւոյթ» կանուանէին: Թերես իր խումար այքերուն համար: Կարայիս Գալըպճեանը դասարանին ամենաբիրտ բռնակալն էր: Ան միամիտ տղոց վրայ կը յարձակէր առանց որեւէ դրդապատճառի, դաժան կերպով կը ծեծէր եւ կը ծաղրէր: Ան սովորութիւն ունէր ամենուն մատիկ նետելու: Բոլորը կը զգուշանային ձեռքը իյնալէ: Բայց այդ ժիտական յատկանիշներու կողքին ան ունէր նաեւ բացառիկ ձիրքեր: Գեղագրութեան մէջ ոչ մէկը կրնար հետը չափուիլ. նաեւ ան դպրոցի չորս սափրիչներուն ամենէն փնտռուածն էր: Ընդհանրապէս կը սիրէր տղոց վազցնել իր ետեւէն՝



անոնց մազերը չկտրելու համար: Իմ մազերս, բայցեայնպէս, առանց առարկելու կը կտրէր՝ պայմանաւ որ մարզական պիտոյքներէս «օվըրօյ»-ը ուրիշին չխոստանայի:

Այստեղ շատ երկար պիտի ըլլար անդրադառնալ բոլոր դասընկերներուս մասին: Միայն նշեմ այսքանը՝ իմ ամենամտերիմ ընկերներս էին Լիբանանէն եկած Յովհաննէս Մինասեանը, Յարութիւն Ճերէնեանը եւ Նազարէթ Սիւրճեանը: Դասերէն ետք «Ժան»-ին հետ կը պտըտէի մարզադաշտին շուրջ՝ իր ավիաչափ transistorէն ունկնդրելով մեր սիրած արաբական երգերը (ինքը ամենաշատ Աթրաշ կը սիրէր, իսկ ես՝ Ապտէլ-Հալիմ): «Ճերէնը» ֆրանսերէնին լաւ կը տիրապետէր եւ ներկայութեանս գոց կարտասանէր Լամարթինի ոտանաւորները: Գալով «Սիւր»-ին՝ ան կը սիրէր սկիզբէն մինչեւ վերջ հետս երգել Նակաթ էլ-Մադիրայի *ساكن قصادي و بحيه* Երգը՝ մերժուած գաղտնի սիրոյ մասին: «Վահէն» արաբական երգերու յիշմբերը կը թմբկահարէր սնամէջ, արձագանգող որեւէ մակերեսի վրայ, ըլլա՛յ հագուստներու պահարանը, կամ գրասեղանի դարակին կափարիչը:

Ես բնաւորութեամբ միշտ արդարամիտ եղած եմ դասընկերներուս հանդէպ:

Անարդարութիւնը երբեք չէի հանդուրժեր: Ոմանց, փոխանակ իրենց բուն անուններով կանչելու, կարգ մը տղաք կը գործածէին վատ նուաստացուցիչ ածականներ: Բարձրագոյն դասարանցիներէն՝ Յակոբ Մաղըրեան, այդ տեսակ ածականներ կախելու մէջ անգերագանցելի էր: Ան աչքի ինկող անապաւէն ու անպաշտպան տղոց կը դարձնէր իր սրամտութեան թիրախը: Բոլորին առջեւ ծաղր ու ծանակի կենթարկէր զանոնք՝ ձեւացնելով թէ պարզապէս կատակասէր էր: Այդ առումով ես գերզգայուն էի: Քանի մը անգամ փորձեց վրաս պիտակներ փակցնել, սակայն իրմէ գատ ուրիշներ չգործածեցին այդ պիտակաւորումը: Միայն մեր Կարպիսը կը գործածէր նման պիտակաւորումներ, յատկապէս երբ խոշտանգէր իր հերթական գոհին: Կարգ մը աշակերտներ հաճոյք կը ստանային՝ դիտելով ծեծ ուտողները: Պատկերացո՛ւր ինչ կըլլայ հոգեկան վիճակդ, երբ ծեծուած ատենդ չարախնդութեամբ քեզ յորջորջեն «Ոչխա՛ր», «Ճնճո՛ւկ», «Ճո՛ւճ», «Օդերեւո՛յք», «Ղաւո՛ւն», «Պոմպէ՛տ ս» կամ «Բզէ՛զ»: Շատ տհաճ էր այդ երեւոյթը, որ տարածուած էր գիշերօթիկին մէջ: Պիտակդ ստանալուդ պէս այլեւս պէտք է մոռնայիր քու իսկական անունդ եւ համակերպելի ստրուկի կարգավիճակիդ:

Ես զերծ մնացի ուրիշը ծաղրելէ՝ հակառակ որ դեմքիս խորհրդաւոր ժպիտը երբեմն տեղիք կուտար թիրիմացութեան: Մեր դասարանի ամենակարճ աղջիկը, որ զիս լաւ չէր հասկցած, օր մը այպանելով ըսաւ՝ «Դուն ալ կարճահասակներուն վրայ կը խնդաս»: Անշուշտ պիտի նախընտրէի դեմքիս տալ աւելի լուրջ տեսք: Սակայն մօտս կը պակսէր այդ դերասանական տաղանդը: Իրաւ որ մեզմէ իւրաքանչիւրը եզակի էր, իր տեսակին մէջ:

(Երկրորդ նկարին մէջ պատկերուած է Gian Carlo Menotti երգահանին Amahl and the Night Visitors մանկական օփերան՝ Պր.Սեպուի Աբգարեանի գեղարուեստական հովանաւորութեան տակ: Ես ստանձնած էի երեք մոզերէն մէկուն դերը):

Դեկտեմբեր, 2025



## ԱԿՆԹԱՐԹՆԵՐ



Ահաւոր է հոգիի, հոգեւորի, հոգեկան նահանջը. երբ մարդը նկատի կ'առնուի սոսկ որպէս մարմնական գոյութիւն, իսկ անոր միտքն այլ՝ որպէս ծառայ սպասարկելու իր մարմնական պէտքերը կարիքներուն ու յղփացումին... Ահաւոր է երբ կ'անտեսուին, նոյնիսկ կ'արհամարհուին հոգեկանը, հոգիի էական կարիքները...

Ահա թէ ինչու մարդ էակը հոգեկան խոր անձկութիւն կ'ապրի՝ նոյնիսկ նիւթական շքեղ ու փարթամ պայմաններու տակ, քանզի սովի մէջ է անոր հոգին, որուն կարիքները ամբողջովին այլ են...

Հոգին կը փնտռէ գեղեցիկը, բարին ու բարութիւնը, ճշմարիտն ու ազնիւը, բնականն ու պարզը եւ խոր տառապանք կ'ապրի, երբ չգտնէ զանոնք...

Նիւթի եւ ինչքի կուտակումը, զուարճանքի մշակոյթը էապէս կը հեռացնեն մարդը հոգեկանէն... Սա դարուս գուցէ ամենէն հրատապ հարցերէն մէկն է:

.....

Այնքա՛ն շատ են տարբեր բնագաւառներու մասնագէտները, բայց այնքա՛ն քիչ են լայնահորիզոն եւ թափանցամիտ մտաւորականները... Շքեղագարդ են մեր դպրոցները, տակաւ կ'աղքատանայ սակայն անոնց իմաստ ու արժէք տուող ոգին... Պերճաշուք է մեր հագուստ-կապուստը, բայց կը պարպուի հայ հոգին... Հաստափոր գիրքերով լեցուն են մեր գրադարանները, տակաւ կը նուազի սակայն գիրք կարդացողներու թիւը... Ձեւն ու ձեւականն է որ հետզհետէ կը գրաւէ խորքը, խորքայինը եւ կը նահանջենք քայլ առ քայլ մեր ինքնութենէն, հայ հոգիէն, ոգիէն...

.....

ԼԻԱՐԺԷՔ ԱՊՐԵԼՈՒ համար, պիտի չվիատիլ, պիտի չյուսահատիլ, պիտի մաքառիլ անվերջ, անդադար, պիտի աշխատիլ անխնջ, անտրտում, հաւատալով որ քու կատարածդ լոյսի նշոյլ է խաւարին մէջ, պճեղ մը անուշ սիրտ է քար աշխարհի սրտին, բեկոր մը ճառագայթ՝ մուրի բաւիղներուն...: Կարելորը՝ կեանքը կարենալ իմաստաւորելն է, որեւէ արժէք ստեղծելը, ամենէն համեստ թուող արժէքէն մինչեւ ամենէն վսեմը, ամենէն խոնարհ արժէքն անգամ կը բազմապատկուի, եթէ անիկա ստեղծուած է սիրով, հաւատքով, նուիրումով... Ի ԶՈՒՐ ՎԱՏՆՈՒԱԾ ԿԵԱՆՔԸ ՄԵԾԱԳՈՅՆ ԿՈՐՈՒՍՏ Է:

.....



Մարդ էակին մէջ ի բնէ կայ, կը խորհիմ, ճշմարտութեան զգացումը, գիտակցութենէն անդին, տեսակ մը բնագոյի նման... Եթէ մարդ մեղանչէ անոր դէմ, հոգեկան տհաճ տրամադրութիւն մը, վիճակ մը կը ստեղծուի իր մէջ անպայման, որ իրեն կը յուշէ կարծէք որ բան մը սխալ է, կամ սուտ... Ճշմարիտը գտնելու համար, պիտի անպայման դիմել մեզի պարզեւուած այդ բնատուր ներքին ձայնին, զգացումին, բնագոյին, որ կը գործէ անվրէպ մեզմէ իւրաքանչիւրին մէջ ալ... Կը բաւէ որ չլռեցնենք անոր ձայնը:

.....

Հաւատացած եմ, որ մեր մէն մի խօսքը, մէն մի արարքը, մէն մի կեցուածքը, վարքն ու վարուեցողութիւնը իր ՀԵՏՔԸ կը թողու մեր շրջապատին, համայնքին, երկրին ու ազգային հաւաքականութեան վրայ, մեր պատմութեան երթին վրայ, թէկուզ աննշան, թէկուզ չնչին, թէկուզ հիւլէաչափ... Ան կ'ունենայ իր անդրադարձը նոյնիսկ տիեզերական շունչին ու համակարգին վրայ... Ամէն ինչ ամենափոքրիկ, ադոմային մասնիկներէ է բաղկացած... նոյնպիսին է ազգային-մարդկային կեանքը: Իւրաքանչիւրս ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Է իր խօսած-չխօսածին, իր ըրած-չըրածին, իր գործած-չգործածին համար... ՄԵՆՔ, ՈՐՊԷՄ ԱՄԲՈՂՁՈՒԹԻՒՆ, ԵՒ ԱՌԱՆՁԻՆ-ԱՌԱՆՁԻՆ ԿԸ ԿԵՐՏԵՆՔ ԱԶԳՆ ՈՒ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ:

.....

ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆԸ օրուան հիւանդութիւնն է: Կը մոլորուինք երբ կը հաւատանք «մարդկային իրաւունք», «Ժողովրդավարութիւն», «ազատութիւն» եւ նման անբովանդակ եւ խաբէպատիր եզրոյթներուն, որոնք ուղեղները խցանելու կամ լուալու միայն կը ծառայեն: Կը մոլորուինք երբ կը հաւատանք սպառողական հասարակութեան օրն ի բուն քարոզած շուկայական «արժէք»ներուն ու կենցաղին, վարք ու բարքին: Կը մոլորուինք երբ համաշխարհայնացման համահարթեցնող պիքին կ'ըլլանք անձնատուր, մոռնալով ազգային ինքնութիւն եւ ոգի, ազգային արժէք ու մարդկային դարաւոր ասանդութիւններ... Շահան Շահնուր պիտի ըսէր իրաւացիօրէն. «ՄԵՂԱՅ, ՄԵՂԱՅ ԱՐԱՐԱՏԻՆ»:

.....

Ներկայ սպառողական քաղաքակրթութիւնը կը միտի ստեղծել այնպիսի մարդ-հաւաքականութիւն մը, որ ըլլայ դիւրաւ կառավարելի, գովազդուած ու տելիքներով սնուող, հագուստ-կապուստը կապկող, ապրելաձեւը ընդօրինակող, շատ հարցեր չտուող, ինքնութենէ ու անհատականութենէ զուրկ զանգուած-ամբոյս մը... Մարդ-անհատն ու Ազգը կը մերժեն ենթարկուիլ նման ամբոյսացման գործընթացին, քանզի կայացած մարդն ու ազգը ունին սկզբունքներ, արժէքներու համակարգ, անհատականութիւն ու նկարագիր, գիտակցութիւն եւ ոգի, որոնք կ'երաշխաւորեն իրենց ինքնուրոյնութիւնը, ինքնութիւնը, ազատութիւնը:

.....



Շատ մը երեւոյթներու դէմ յանդիման՝ հայ կեանքի մէջ, կ'ոգեկոչեմ շարունակ մեր մեծ երգիծաբան ՅԱԿՈԲ ՊԱՐՈՆԵԱՆԸ, որ իր սուր մտքով ու լեզուով խարանած է մեր փառամով, երեւելու մարմաջով յաւիտեանս ծարաւի, Աբիստղոմավայել վարքն ու բարքը..Հիմա ալ կարծես ոչինչ փոխուած ըլլայ այն օրերէն, նոյն քծնանքը, նոյն փառատենչութիւնը, նոյն մուրացկանութիւնները, նոյն ողորմելիութիւնները, որոնք դարեւ դար կը շարունակուին, կը կուտակուին, ժանգոտելով մեր նկարագիրը, հոգեբանութիւնը: Որքա՛ն փոշի, որքան ժանգ դիզուած է ՀԱՅ ՀՈԳԻԻՆ ԲԻԻՐԵՂԵԱՅ ՄԱՔՐՈՒԹԵԱՆ վրայ, զայն անճանաչելի դարձնելու աստիճան:

.....

Գոռոզամտութիւնը համատարած է անոնց մօտ մասնաւորապէս, որոնք բոպիկ են միտքով, մերկ են հոգիով եւ այդ մերկութիւնը ծածկելու համար՝ կը յոխորտան իրենց փոխ առած փետուրներով, կը սոնքան եւ իրենց չունեցածը կ'ուզեն ծախել այլոց...Ուրիշը խաբել գուցէ կարելի է որոշ ժամանակով, բայց ինչպէ՞ս կարելի է ինքզինք խաբել:

.....

- Գրելով՝ կը յստակեցնես միտքերդ:
- Գրելով՝ կը փորձես հասկնալ:
- Գրելով՝ կը թափանցես երեւոյթներու խորքը:
- Գրելով՝ աւելի հասու կը դառնաս ճշմարտութեան:
- Գրելով՝ այլոց դատին կը ներկայացնես իրականութեան քու տեսակէտդ:
- Գրելով՝ կը ներկայանաս պատմութեան դատաստանին:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

## ՔԱՌԵԱԿՆԵՐ



Մի՛ պղծեք մեր Մեծասքանչը հայիոյանքով ու չար խօսքով,  
Ան փառքըն է հայ դարերուն, հայ հոգիի շունչն ու ոգին,  
Անով ենք մենք ազգ, հայրենիք, ոսկեղենիկ բառ ու բանով,  
Որ ծիածանէ սերունդները անցեալ, ներկայ ու դեռ գալիք:

.....

Եւ ո՞վ տեսաւ արցունքներս ժպիտիս տակ քօղարկուած,  
Դառն ու աղի արցունքներս որ հոսեցան սրտիս մէջ տաք,  
Դարձան կրակ այրող, խանձող, դարձան մոխիր ու յիշատակ,  
Որոնց մէջէն ծիլ ու բողբոջ յանկարծօրէն առին նոր կեանք:

.....

Տարի առ տարի կեանք է կը սահի  
Հոսանուտին մէջ կեանք-ժամանակի,  
Կը մնայ միայն ա յն ինչ որ տուիր  
Միտքէդ, հոգիէդ, սիրտէդ սրտագին...

.....

Կեանքը երգ է ու մեղեդի,  
Թէ կարենաս լոյսը զգալ  
Լուսաբացին, վերջալոյսին,  
Հոգիդ լեցնել սեր-բարութեամբ...



.....

Կեանքը համակ երկու օր է,  
Մաքուր անցի՛ր քու ճամբայէդ,  
Լոյսի հետքեր թողո՛ւ միայն  
Որ յուշ դառնաս լուսաճաճանչ...

.....

Ու կ'ափսոսանք երբ ա՛լ չկայ,  
Միրոյ խօսքեր կը շրջայլենք,  
Բայց երբ դեռ կայ, կ'անտեսենք զայն,  
Գնա՛ մեռիր, եկո՛ւր, սիրեմ...

.....

Օրերը կ'անցնին, երա՛զն կը մնայ,  
Հոգւոյն պէս անեղծ, ան չի ծերանար,  
Թե՛ւ ու թո՛ի չք կու տայ դէպի աստղերը  
Ու վա՛ռ կը պահէ կեանքի հեքիաթը...

.....

Լոյսը միշտ կայ, զայն պիտ' զգաս  
Խոր գիշերուան մութին անգամ,  
Ան պլպլայ քու հոգւոյդ մէջ,  
Թէ երկինքն իր մաքուր պահես...

.....

Դժուար բան է ազատ ըլլալ,  
Կոտրել շղթան ստրկութեան,  
Տերը ըլլալ կամքիդ ազատ,  
Պատիժն կրնայ ծանր ըլլալ...

.....

Աշխատանքն է ինքնամոռաց  
Երջանկութեան հրաշք բանալին,  
Զոր կը փնտռենք սին վայելքին  
Եւ կը մնանք պատրանաթափ...

.....

Ու դրամը գերզօր գնեց աշխարհը,  
Խիղճը մարդկային, բարոյականը,  
Ապրանքայնացուց մարդն ու ազգերը  
Եւ շուկայացուց հայրենեաց հողը:

.....

Երբ կորսնցնենք, կը մղկտանք,  
Երբ զայն ունինք, չենք գուրգուրար,  
Բաժանումէն ետք մենք կը զգանք



Արժեքները մեր սրբազան:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ